13.256

ՅԱՆԵՐ



# ՃԱԿԱՏԸ

ՊԵՏՀՐԱՏ

90/701

90
701

Փ Ա
1787

ԼԱՐԻՍԱ ՌԵՅՍՆԵՐ

545
1527

891.71
Ռ-32

25 NOV 2010

# Ճ Ա Կ Ա Տ Ը

Թարգմ. Գար. Հակոբյան

Շապիկն ու նկարները Վ. Գ. ԲԵԽՏԵՅԵՎԻ



42-185

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 3 5

ԼԱՐԻՍԱ ՌԵՅՍՆԵՐ

545/1527 · Զ91·71 Ռ-32 25 NOV 2010

# Ճ Ա Կ Ա Տ Ը

Թարգմ. Գուր. Հակոբյան

Շապիկն ու նկարները Վ. Գ. ԲԵԽՏԵՅԵՎԻ



Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 3 5

13256

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանքյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

БИБЛИОТЕКА ... им. В. И. Ленина
Дублетный фонд госуд. библиотеки СССР им. В. И. Ленина
4608. 84

Հանձնված է արտադրության 5 նոյեմբերի 1934 թ.,
Ստորագրված է տպելու 25 հունվարի 1935 թ.

Պետհրատի տպարան Յերևան

Գլավլիտ 8710 պատ. 1557 հրատ. 3144 տիրաժ 4000



# Կազան

Քաղաքը դեռ գրավված չի, բայց պարտությունը վորոշված է։ Լքվող սենյակների դռները չըխկ-չըխկում են, հատակին՝ ամեն տեղ՝ թղթեր, թափթփված, ցիրուցան իրեր։

Նահանջից վատ բան չկա։ Բոլոր անկյուններից դուրս են գալիս աննկատ մնացած հարևանների դեմքեր, վորոնք ամիսների ընթացքում չեյին յերևում։

Փայլը կորցրած ինչ-վոր կոճակներ, կոկարդի, նույնիսկ չքանչանի ժապավենի պես բան, բայց այս դեռևս թաքնված, վորոնք փախուստից ամայացած կիսախավար միջանցքներում չեն համարձակվում աղաղակել իրենց յերկչոտ ու կատաղի «բռնե՛ք դրան, բռնե-ե՛ք»-ը։ Պատշգամբի առաջ մարտկոցի աղոտ ուրվանկար, փոշոտ, սեղմված ու գայրացած դեմքեր, սուր բացականչություններ, ինչ-վոր մի տեղ սալահատակին անիվներ են դղրդում, հեծելազորն է դոփում։ Վերջին դիմադրությունն են պատրաստվում։ Լուսամուտները դղրդում են մոտից սլացող բեռնավորներից, վորոնց աղմկալից փա-

խուսատը վերջին հույսն է մեռցնում: Նրանք սարսափ են ազդում:

Դռների մոտ, վորոնց վրա, դեռևս ավելորդ, սպիտակին են տալիս «ոպերատիվ», «քարտուղարություն» ցուցանակները, մի քանի կին հրաժեշտ են տալիս իրենց մերձավորներին. Նրանց հետևից լվոի լակեյները կարմիր ճամբուկների*) վրայով սրբում են հեղափոխական աղբը—փոշին բարձրանում, խողանակները գայրացուցիչ կերպով ճանկռում են: Ասես թե վորտեղ է անհաջողությունների դառնությունն ու կեղտը—լակեյի խողանակի մեջ, վոր սրբում, դռնից դուրս է գցում մեր թարմ հետքերը:



Ի՞նչ տարորինակ զգացմունք—անցնել դուռ ու լուսամուտը պինդ փակած անծանոթ տների մոտով, իմանալ, վոր այնտեղ, այն անիծած հյուրանոցում մինչև վերջին ճիգը պիտի կռվեն:

Մեկն ու մեկն սպանվելու յե և կսպանվի, մեկն ու մեկը կազատվի, վորևէ մեկին կբռնեն: Այսպիսի րոպեներին մարդ մոռանում է բոլոր այն բառերը, բոլոր այն ֆորմուլները, վորոնք ոգնում են արիությունը պահպանելուն: Մնում է միայն սուր, սպանող վիշտն ու, վերջինիս տակ, հազիվ առկայծելով, մի անորոշություն— «ինչի՞ համար» պիտի փախչել կամ մնալ: Կծկված, արցունքից խեղդվող սիրտը կրկնում է—

*) Ճամբուկ—սենյակի մեջ փռած նեղ ու յերկար կտոր, վորի վրայով քայլում են. Ծ. Թ.



պետք է հեռանալ հանգիստ, առանց խուճապի, առանց ստորացնող չտապողականության:

Բայց յերբ արկը չրմփում է նախ մոտովդ՝ Կրեմլի մոտի ճահճոտ մարգագետնի մեջ, իսկ հետո՝ ուղղակի շտաբի վրա, վորտեղ նրանք են, վորտեղ վերջին մարդիկն են, վոր պիտի հեռանան, յերբ հեռանալն այլևս անհնար կլինի— այն ժամանակ բոլոր զգուշությունները ջուրն են ընկնում, և ինչ-վոր մի բան ուժգին յետ է քաշում քեզ:

Վրաս կախ են տված թղթեր, կնիքներ ու մի ինչ-վոր խիստ գաղտնի բան, վոր հրամայել են փախցնել և հանձնել առաջին պատահած շտաբը: Արկերի սուլոցից, վոր ավելի ու ավելի հաճախակի յեն խփում «Սիբիրի հյուրանոց»-ի սպիտակ քիվին, յետ չեմ նայում: Աշխատում եմ չմտածել փոշու քուլաներ բարձրացնող լակեյների մասին, զրահապատի ու հեղեղված ճանապարհի մասին, վորտեղից զրահապատը կանցնի՞, թե՞ չի կարող անցնել:

Կողքիս հետ մի ընտանիք է փախչում՝ յերեխաները, մուշտակներն ու ինքնայեռն առած: Մի քանի քայլ առաջ, մի կին թոկը բռնած՝ քաշում է սարսափահար մի այծ: Յերեխան նրա գրկից կախ է ընկել: Վոր կողմը նայես՝ աշնան վոսկեգույն դաշտերի յերկարությամբ՝ չքավորների, գինվորների, տնային կահ-կարասիներ, ե՛լի նույն մուշտակները, վերմակներ ու ամանեղեն բարձած սայլերի հեղեղն է բռնել: Հիշում եմ, թե վորքա՛ն թեթև զգացինք այդ կենդանի հեղեղի մեջ: Ո՞վ են այդ փախչողները: Կոմունիստնե՞ր: Դժվար թե: Համենայն դեպս, այծատեր կնիկը կուսակցական տոմս չունի: Ամեն մի կրակոցից, ամբոխը ցնցող խուճապային սարսափի ամեն մի բռնկումից, նա աջ ու ձախ խաչակնքում է: Հին թշնամիներից փախուստ տվող մի ժողովուրդ, մի գանգված է այդ: Ամբողջ մի Ռուսաստան՝ կապույտ չալակած՝ լպրծուն ճանապարհներով գլուխն առած հեռանում է չեխոսլովակյան «ազատարարներից»:

Քաղաքից դուրս փախստականների հոսանքն սկսեց

ծանծաղել: Կին, յերեխա, սայլեր, սոցիալական հուժկու բնազդից քշված՝ շարունակում եյին միշտ ուղիղ և ուղիղ գնալ՝ առանց շուրջը նայելու, առանց ճանապարհի լայն ու վատը հարցնելու: Միայնակ մարդիկ տեղատարափ անձրևի տակ, գլխաբաց, առանց վերարկուի, վոմանք դողալով, պորտֆելը կռնատակները սեղմած՝ դուրս եյին յեկել կողքի շավիղներն ու գնում եյին ուղղակի մածուցիկ, խամ հողերի միջով. սայթաքելով, ընկնելով, վեր կենալով՝ գիշերը հասանք ինչ-վոր հեռավոր գյուղեր:

Ամռան մեղմ անձրևը տեղատարափի փոխվեց, դաշտերը սևացան ու դժվարին, անչափ դժվարին դարձան: Մի կապույտ, մեծ ամպ է կախվել այժմ արդեն գրավված Կազանի գլխին:

Թնդանոթների վորոտը դադարեց, և փոթորկայի յերկնքում լուռ բոցավառվեցին հրդեհների շողքն ու հեռավոր փայլակները: Ագռավները տխուր յերամով ձգվեցին դեպի արվարձանները:



Թե ինչքա՛ն եյինք գնացել և ո՛ւր, չեմ կարող հիշել: Շարունակ հերկած արտերի, թաց կավի միջով, վոր չեր թողնում վոտն առաջ դցել, ինչպես կարծում



եյինք՝ գնում եյինք դեպի Սվիաժսկի կողմը: Փախուստի ժամանակ, մանավանդ սկզբի ժամերին, շատ բան է կախված այն խուլ զգացումից, վորն ստիպում է յերեք գյուղից մեկն ընտրել, միքանի ճանապարհից՝ միակը: Բոլոր զգայարաններդ սրվում են, անցորդի հայացքը, ծառի սիլուետը, շան հաչոցը— այս բոլորը վտանգի կամ խաղաղ «կարելի յե»-ի գույն են ստանում:

Բոլորիս առջևից՝ գլխաբաց, թաց ու անհեթեթ վայելուչ պինջակով՝ գնում եր պատասխանատու աշխատակից ընկ. Բ.—ն:

Նա մեր ընդհանուր ճանապարհի գաղտնի նշաններից բան չեր ըմբռնում: Նա քաղաքի անհանգիստ գիշերներից հետո, ամենից շատ ուզում եր պառկել ու քնել: Փոքրիկ մի նավաստի յեր մեզ առաջնորդում: Իր փոքր-ինչ ծուռտիկ վոտքերով նա ցեխի գնդերն ամուր գրկում եր. անձրևը չեր խանգարում նրա միակ, ուրախ ու կապույտ աչքի տեսողությանը, և ընդհանրապես նա հանգիստ եր: Վիճաբանելով «Պորտֆելի» հետ, վոր գնում եր գլուխն ուրվագծելով, քամուց ու հոգնածությունից հալածված՝ նա մեկեն թեքվեց դեպի ձախ, ստիպեց կտրել անցնել համարյա տաս վերստ հեռավորության վրա գտնվող գյուղի հետևը, վորտեղ գտանք խավարի մեջ պսպղացող խճուղին և, արդեն առանց տատանվելու, այդ խճուղով գնացինք դեպի յերկրորդ գյուղը: «Կանգ առ»—հրամայեց մեր հրամանատարն ու բաղխեց մի մութ խրճիթի դուռ: Քնեցինք հատակին, վոտներիցս խանդավառությամբ պոկ տալով թրջված ու ծանր կոշիկները: Չոր խոտ, մարդկային դարշահոտություն, անկյունում՝ կանթեղ: Յեվ բոլոր թունավորված մտքերը հանգստացնող նիրհի հետ մի կտոր ել սև ու տաք հաց: Առավոտյան պարզվեց, վոր ամբողջ սենյակը լիքը գաղթական է, բայց այս բանը վոչ վոք չխոստովանեց: Պղտորումն սկսվում եր, ամեն մեկն իր ուխկով պաշտպանվում ու թաքնվում եր: Մեր պատասխանատուն, կամ, ինչպես մենք նրան անվանում եյինք, Պորտֆելը, իսկական քաղաքա-

ցու և ինտելիգենտի միամտությամբ վճռեց խոսացնել իր անթափանցելի ծպտյալությունը: Նրա ջարդված գլխարկը չգիտես թե հանկարծ ո՛ւր չքացավ ու փոխվեց մի ահագին կեպկայի, վորի մեջ Պորտֆելը մեկեն տաժանորդի նմանություն ստացավ:

Պարզվեց, վոր մեր պաստառանի տերը գյուղի ուսուցիչն է: Նա շատ եր ուզում հաղթողի տոն ընդունել, բայց պարտվածներն այնքան շատ եյին և այնքան մռայլ տեսք ունեյին, վոր նա բավականացավ միայն բարոյախոսությամբ: Ընդհանրապես բարի մարդ եր, բոլորիս կերակրեց և ազնվորեն ցույց տվեց Սվիաժսկի ճանապարհը, ձեռքերը թափահարելով ու տաքացնելով, նույնիսկ ճանապարհ գրեց մինչև արահետը: Մենք, այնուամենայնիվ, սահմանադիր ժողովի մասին միքիչ վիճաբանեցինք: Ուսուցչի այդ արահետը փրկեց մեզ. մեծ ճանապարհի վրա, վոր մեծամասնությունն եր ընտրել, դարաններն արդեն սպասում եյին:



Սվիաժսկ. ինչո՞ւ հենց Սվիաժսկ: Վոլգայի ափին ընկած այս փոքրիկ ստանիցայի անունը, վոր Կազանի պաշտպանության ու վերագրավման գործում այնքան մեծ դեր խաղաց, դարձավ մի հնոց, վորի մեջ կոփվեց Կարմիր բանակի կորիզը. այս անունը ծագեց, կրկնվեց և մի տեսակ տարերայնորեն հիշվում եր նահանջի ու խուճապի ամենաթունդ ժամանակ:

Շտաբն եր ուղղակի Սվիաժսկն ընտրել իր համար ամրանալու տեղ, թե՞ այս անունն ամբոխի մեջ ինքնա-



պաշտպանության բնազդ եր մտցրել, միայն թե փախըստականների ամբողջ ալիքն ուղղակի դեպի այնտեղ եր ձգտում:

Քաղաքացիական կռիվը մեծ ճանապարհների վրա յե թագավորում: Բայց հենց վոր միքիչ թեքվեցիր դեպի մի վորև է գյուղ, տաք ու բուրավետ միջնակների միջով անցնող մի արահետ. թե չէ՝ նորից խաղաղություն, աշուն, ամռան վերջին որերի ջինջ լռություն:




Գնում ենք վոտաբոբիկ, կոշիկներն ու հացը փայտի ծայրին՝ ուսներս գցած: Նավաստին մի տեղից հովվական մի խարազան է գտել ու այնպես է շրխկացնում Պորտֆելի մեջքին, վոր նա չոքում-կանգնում է ու քիչ է մնում լաց լինի: Վո՛չ, պիտի խոստովանել, վոր մեր ընկեր Բ.-ն քաջերից չեր: Գյուղերը մենք համարյա չեյինք մտնում. յեթե մտնում եյինք էլ՝ մեծ մասամբ աղանդավորների գյուղերը— այնտեղ թե՛ մաքուր է, թե՛ տանտերերը համակրում են, թե՛ կաթը պինդ է, թե՛ կնանիքը թարմ են, ասես ճաշի մեղր լինեն: Աղանդավորները մեզ վոչ մի անգամ չխաբեցին ու քաղցած չթողին:

Յերրորդ որը, ի միջի այլոց, քիչ մնաց, վոր բռնվեյինք: Պորտֆելը, ինչպես եր պատահել, վոտքը

վիրավորել, հոգնել ու թուլացել էր: Երկու նավաստի ընկերս, ցամաքի ճանապարհորդությունից, փոշի կուլ տալուց, և, ընդհանրապես, սովորական քաղաքացի ձևանալուց այնքան էին հոգնել, վոր նրանց միացյալ ախուվախն ազդեց նույնիսկ Միշկայի (մեր առաջնորդի անունն է) խոհեմության վրա: Նա հնազանդ էր, ու մի փոքր հետախուզությունից հետո մտանք առաջին պատահած գյուղը:

Սկզբից ամեն ինչ լավ էր— զով պատշգամբ, պինդ յեփած ձու, թեյ, վարունգ և դեպի ամեն ինչ անտարբեր տանտեր: Մեկ էլ հանկարծ, յերբ դեռ նոր էր ըսկըսել մեր որը լավանալ, վորտեղից վորտեղ լույս ընկավ կապույտ մահուդե անթևք կարճիկ հագած, կարմիր գոտի կապած, ալա ռուսական միրուքով մի պարոն, վոր կարծես պաշտոնաթող ուրյադնիկ, կամ մարտնչող կալվածատեր լիներ: Մեր տանտերը հենց վոր աչքի տակով նրան նայեց, ավելի սփրթնեց ու լռակյաց դարձավ: Իսկ նա հետաքրքիր աչքերը չարունակ Պորտֆելից դեպի նրա պորտֆելն էր պտտեցնում, հանդիստ կերպով թեյ խմող Միշկայից՝ դեպի պարկեշտ և նույնիսկ բարյացակամորեն տրամադրված ծովագնացները: Եվ սկսվեց շատ անմեղ ու շատ հանգիստ մի զրույց:

— Դուք Կազանի՞ց եք յեկել: Գաղթակա՞ն եք:

Բոլորիս փոխարեն առաջնորդն է պատասխանում:

— Վոչ, ամառանոցավորներ ենք: Մեզ մի փոքրիկ տուն է հարկավոր, վորի յերեսը դեպի գետը լինի, լավ տեսարան և ընդհանրապես հարմարություններ ունենա: Այդպիսի մի տուն տեղ չգիտե՞ք:

Մեր «ավագը» սափրված չի, բեղ ու միրուքին նայողը կարծում է թե արջ է—նա զտարյուն հարավցի յե՝ սև, ուրախ ու անվախ:

Կարճիկավորը հրհռում է:

— Դե լա՜վ, պարոննե՛ր, մհանա մի՛ արեք: Ձեզ Կազանից են քշել, լավ քշեցի՞ն: Ա՛յ, էն ընկերն էլ պորտֆելը վազ-վազ հետն է վերցրել: Դուք, յերևի, մերոնցի՞ց չեք:—Եվ աչքով՝ յուղադնդիկով է անում:



Միշկան նրան ցանեց: Սկսեց նկարագրել Կարմիր բանակի ստացած ոգնությունները·

— Էլ ի՛նչ ասեմ՝ Կրոնշտադտից քսան դույմանոց թնդանոթներ, լուննիտ լցրած ռումբեր՝ յերեք որից հետո...— Եվ հանկարծ աչքերը սևեռեց տանտիրոջ յերեսին ու գլուխը մի ուրիշ կողմ՝ դեպի բաց տափաստանը դարձրեց:

Հեռվից-հեռու, սև ասեղների պես, ձիավորների ստվերներ, նիզակներ են նշմարվում: Կարճիկավորը չփոթվեց, բայց այստեղ Միշան ձեռքն այնքան ուրախ դրեց գրպանը, և մենք բոլորս (իհարկե՝ Պորտֆելն առջևից) այգու միջով այնքան արագ չքացանք դեպի մոտակա դաշտը, վոր նա չկարողացավ վորևե բան անել:

Որվա ամբողջ մնացորդը մենք քնով անցկացրինք ճանապարհին մոտիկ գտնվող վոսկենման, բուրավետ խրձերի մեջ:

Միքանի անգամ մոտներիցս ձիավոր կազակներ անցան, և այդ ժամանակ ընկեր Իպոլին զարթնեցնում էր Պորտֆելին, վոր շատ բարձր չխռմփացնի:

Ինչ-վոր մի գյուղ՝ մութ, կատաղի գիշերին: Անվերջ, կիսերկնաշափ փայլակներ, սայլերի ճռինչ, ձիերի անհանգիստ խրխինջ:

Խավարի մեջ վազվզող ձեռնալապտերներ: Հոգնատանջ, ճանապարհը կորցրած՝ հասնում ենք մի գումակի, վոր մի քանի րոպեյից հետո պիտի դուրս գար: Ո՞ւր: Դեպի Սվիաժսկ: Այստեղ են շտաբի մի մասը, վողջ մնացած մի զորամաս և քաղբաժնի աշխատակիցները: Մեզ ճանաչում են: Մեկը մոտեցավ, լապտերի սահուն լույսով դիտեց մեզ և ծանր-ծանր, ասես բերնում խաշիլ է յեփում, հարցնում է.

— Ռասկոլնիկովը հետնե՞րդ է:

— Վո՛չ:

Լապտերն իսկույն ցածրանում է և մթության մեջ թաղցնում իր դեմքի արտահայտությունը:

Ամբողջ գիշեր սայլերն անընդհատ գնում են ու գընում հեղեղված ճանապարհով՝ տեղատարափ անձրևի

ու կապույտ կրակի անընդհատ բռնկումների տակ: Հենց վոր մեկը ճանապարհին մնում է, թե չէ, հրամանը սայլապանից սայլապան է հաղորդվում — ամբողջ գնացքը կանգ է առնում: Փոքրիկ լապտերներ են վառվում, մածուցիկ ճահճի մեջ խրված ձիու ծանր փնչոց ու քայլերի չփչփոց է լսվում, և մենք նորից առաջ ենք անցնում: Անձրևը խշշում է, սոճու խուլ անտառը քամուց շառաչում է, և ամեն մի փայլատակելիս յերևում է հոգնածությունից դողացող ու գոլորշի արձակող իր ձիու կողքը պաշտպանող մի գյուղացի ու մեկ էլ՝ ամպրոպից թացացած՝ սպիտակ, քնաթաթախ մի դեմք: Յեվ կայծակը մարում է:

Չարժե մանրամասն կանգ առնել հաջորդ որվա առավոտի վրա. այս էլ նույնն է, ինչպես նահանջի բոլոր որերին: Տամուկ խոտի դեզի տակ պատահական քուն, կաշհան յեղած վոտքերի մրմուռ, զինվորների անվերջ կատակներ՝ հանգստի փոխարեն, վոր հերթով զբաղեցնում են բոլորին: Ուղղամարմին, կենտրոնացած քայլող, լռակյաց՝ ընկեր Շեյմանի կինը: Վոչ տեսնում, վոչ լսում, վոչ էլ մարդի հետ է խոսում: Գլուխն սպիտակ թաշկինակ կապած, առանց դես ու դեն նայելու, արագ-արագ գնում է աշնանային մեռած դաշտերի ֆոնով: Նա դեռ հաստատ չգիտի՝ ամուսինը կենդանի՞ յե, թե՞ սպանված, բայց նախազգացումը րոպե առ րոպե ուժեղանում է. յերևում է, թե ինչպես է այդ նախազգացումն ավելի ու ավելի ամուր ու խիստ տիրում նրան: Թադցրած, անիծված համոզմունքն ուրիշների վրա ծանր է ազդում: Վերջապես՝ Վոլգան: Գետանց, կայարան, յերկու կողմից փչող, ցուրտ տեպլուշկայի հատակին պառկել—քնել: Թաց, դատարկ ճանապարհներին կորցրած որ ու գիշեր: Առավոտյան բոթբոթոց, անիվների ճռինչ, բաղձալի ու սիրելի ցնցում, և մի ժամից հետո մենք արդեն իսկական Սվիաժսկում ենք: Նրանք Սվիաժսկում էլ չկան: Պարետային վարչության մեջ խթխթոց, խոսակցություններ, հարցուփորձ: Յեվ հանկարծ մի խիզախ պարետ զայրացած թքում է բաց վերքին.



— Լա՛վ, ձերը, հավանական է, վողջ է, իզուր եք անհանգստանում: Կարողացել է մինչև Փարիզ փախչել:

Մի րոպեյից հետո նա կանգնած է՝ տաք քրտինք մտած, կարմրած, ապշած ու չարացած, բայց սրանից բանը չի փոխվում: Ամեն ինչ սև է ներկվում, ամեն մի հարցի մեջ վիրավորական ակնարկ է նկատվում: Վերջապես հեռագիր է ստացվում, թե Ֆ.Ֆ.-ին[1]) սպիտակ գվարդիականները գերի յեն վերցրել: Շեյմանի անարյուն, քարե դեմքը միանգամ էլ է փայլատակում: Նրա ամուսինն իսկապես սպանվել է:

Հենց այստեղ յես ու Միշան վորոշում ենք վերադառնալ Կազան: Ընկեր Բակլինսկին ծխախոտի մի փոքրիկ թղթի վրա մեզ մի անցագիր է գրում՝ մեր բոլոր գծերից անցնելու իրավունքով: Յեվ կապույտ աչքը խորամանկորեն կկոցում է:

— Կգնաք,—ասում է,—լատիշական գնդի հրամանատարի մոտ, նա հավանորեն ձեզ յերկու ձի կտա մինչև առաջավոր գիծը: Իսկ այնտեղից արդեն վոտքով կգնաք:

Յեվ իսկապես՝ լատիշներն օգնեցին, օգնեց նաև մի փոքրիկ սուտ. ստիպված յեղանք հորինել, թե Ռասկոլնիկովն էլ լատիշ է: Վոչ բոլորովին, բայց մոր կողմից: Ինձ համար մի գրաստ, անդրավարտիկ, ճտկավոր կոշիկներ ճարեցին, և հեծելակները յերկու ձի բերին, բայց, տե՛ր աստված, վո՞նց պիտի հեծնես նրան, այդ կատաղի արարածին: Աջի՞ց, թե՞ ձախից, բա վոտքե՞րդ ինչ անես, վորոնց, նպատակով, ահագին խթաններ են ամրացված: Կամաց գնացինք—վոչինչ: Հետո՝ սնգսնգալով—տանջանք ու սարսափ: Բայց ընդամենը 40 վերստ միայն պետք է կտրենք:

Շեկ Կրասավչիկի հետ ծանոթացած որից իմ ու նրա մեջ մի շատ նուրբ բարեկամություն սկսվեց, վոր տևեց յերեք տարի: Վոլգայից շատ դենը, յերկաթուղու գծի կից կողքին մի բարձր տեղ ձիս հանկարծ հուզվեց: Յես նրան մտրակում եմ, իսկ նրա ջղայնա-

1) Ֆեդոր Ֆեդորովիչ Ռասկոլնիկով

ցած ականջները դողդողում են, վրան ծռած կրակոտ աչքը փայլում է, ու տեղից չի շարժվում: Ուղեկցող հեծելակները կանգնել—ծիծաղում են: Ցեվ հանկարծ, ուղղակի վոտքերիս առաջ, մեկը մյուսի հետեվից յերեք սյուն, փոշակոլոլ ու կարմիր յերեք թնդյուն, յերեք մահ: Ստիպված յեղանք թեքվել դեպի անտառը:

Այստեղ վիրավոր ծառեր շատ կային, և արկերը մի տեսակ կոտրատող, սիրտ մաշող վոռնոցով ընկնում եյին այս թավուտը:

Ծառերը կանգնած են լուռ, դատապարտվածի պես, զարմանալի լուռ և ուղիղ: Հենց այդպես էլ մարդիկ են լուռ պառկած փոքրիկ բացատում՝ բուրավետ ու դեղին սոճիների մեջ: Զինվորներն ու յերկու հրամանատար իրենց սակված ու թաղկացած մարտկոցի մոտ եյին: Նրանք ճաշի վրա եյին: Ծոցից փափկացած խոտերի մեջ ապուրի թասերը ծխում եյին, վորոնց յուրաքանչյուրից յերկու—յերեք մարդ միասին եյին ֆռթացնում: Բայց թե ինչո՞ւ շշուկով, ասես վախենում են իրենց տեղը մատնել, մեզ հարց ու փորձ արին, դոկումենտներս ստուգեցին ու հետո առաջարկեցին միասին ճաշել: Նրանց այդ ապուրից ծխացելի հոտ եր գալիս— պինդ, յեռացրած ջրի մեջ ուռած, տկզած գորշ—կանաչավուն կաղամբի և ինծամորու հոտ, վոր ամենուրեք կարմրին է տալիս մանր ու չոր խոտերի արանքներից: Անդորրության մեջ, յերբ անտառից դուրս մի վորևե տեղ քրտնած, սև ու խլացած մի հրետավոր միքանի թվերի և ոձի իմաստություն ունեցող իր բնազդի ոգնությամբ փնտրում եր մեր տարտամ ակնկալելի ապաստարանը— ընդմիջումի րոպեյին, յերբ տեղում մեխված սոճիները շունչ եյին քաշում,— մոտերքում սկսում եր անվճռականությամբ յերգել անտառի մի թռչուն, ավելի ճիշտ՝ յերաժշտահավ: Յերգում, լռում եր: Զինվորներն ուտելը թողնում ու սկսում են ականջ դնել: Մեկը գդալի վրա յե դնում զբաղված ու ժրաջան մի մրջյուն և անշարժ ուշադրությամբ ու լուռ հետևում է նրա վազվզոցին: Ցեվ մեր բոլորի համար թեթևություն է, յերբ անհրեվույթ



արկը նորից կոռնա գլխավերեվդ, և թավուտի մեջ ճարճատելով՝ պարտված սոճին ձյութալի ու սպիտակ տաշեղներ շաղ կտա: Զգտան, կողքից անցավ, և բոլոր գդալները նորից ապուրի մեջ են:

Մենք դարձյալ գնում ենք կախարդված, անկյանք անտառով, մինչև վոր յեզրին սկսում են մեծ ու դատարկ ամառանոցներ յերևալ: Անտառից այն կողմը յերկաթգիծն է—ինչ վոր տարօրինակ: Առանձին—առանձին վագոններ կանգնած են՝ յերկ—յերկու, մեկ—մեկ, իրարից շատ հեռու: Կարծես՝ «կախարդ» են խաղում: Բավական է, վոր յես նայես, և նրանք մոտ կվազեն, նայում ես թե չե՝ դարձյալ կանգ են առնում, հանկարծակի բռնված իրենց անհեթեթ կեցվածքով: Տեղ—տեղ անշնչացած ձիեր, և ամբողջ այս դատարկ, զարզանդեցնող տեղը ժամանակ առ ժամանակ արկեր են շրմփում: Շտաբը հենց կից կողքին է, կայարանի մոտի ամառանոցում: Մեր գնալուց մի ժամ հետո, հեռավոր, ծանրայեփու, մի քանի վերստի վրա փնտրող մի մարտկոց հանկարծ այստեղ էլ է խփում: Մեր լավագույն հրամանատարներից մեկը՝ ընկեր Յուդինն սպանվում է: Բայց այն ժամանակ նա դեռ կենդանի յեր, ինքը մեզ ընդունեց: Նրա կյանքի զարկերակն ուժգին խփելու վերջին ժամերին, մի կյանք, վոր ուռճացած ու պայթելու համար պատրաստի յերակի յեր նմանում, մենք միքանի կոռովի, թունդ ու ազդու կափկափող րոպեներ խլեցինք: Դոկումենտներս նայեց, դրեց իր առջևի սեղանին, հրամայեց կերակրել ու անկողին տալ: Մինչդեռ մենք հանգստանում ու թեյ եյինք խմում, հարևան սենյակից (ամառանոցի պատից ամեն ինչ լսվում է) հեռախոսը կանչեց Սվիաժսկ՝ Ռազմահեղափոխական խորհուրդ:

— Լեյգներ ազգանունով վոմն կնոջ դուք ճանաչո՞ւմ եք:

— Այո՛, Լեյգներ:

— Անցագիր տվե՞լ եք: Այո՞: Լա՛վ: Իսկ մենք կարծում եյինք... լավ, լավ, ցտեսություն:

Յերբ մարդ վորևե գործով բանկ է ընկնում, շարունակ սկսում է իրեն գող զգալ: Վանդակները, անկի-

դելլի դրամարկղները, ամենագետ հաշվեգրքերը, հատակի ամենամաքուր փայլը—փականքները պաշտպանողականորեն չխկացնող բոլոր այս քաղաքավարությունները ամեն մի այցելուի մեջ գող ու ավազակ են յենթադրում: Յեվ մի րոպե, յերբ հեռախոսը Սիխաժսկին հարցնում եր վոմն Ռ.—ի մասին, յես հանկարծ զգացի, վոր իմ վարմունքը չափազանց անհավանական պիտի թվա, իսկ արտաքինս՝ կասկածելի: Սատանան տանի. բա ձա՞յնս: Յես բարձրաձայն ասացի—«Գաղտնի գործով գնում եմ Կազան»: Վորքա՜ն ոտար ու կեղծ ձայն: Դե պարզ ե՝ լրտեսուհի յեմ:

Մթնշաղին ընկեր Յուդինը յեկավ մեր սենյակը: Նրա դեմքը համարյա չեր յերեվում, բայց ամբողջ կերպարանը՝ մեծ ու անհարթ գալիֆեն, խթանները, հանդիստ կերպով գրպանը դրած ձեռքերը մտերմական թվացին: Յեվ մի քիչ ել հարցափորձ անելով, թե ո՞ւր ենք գնում և ի՞նչու՝ խորհուրդ տվեց իսկույն ևեթ ճանապարհ ընկնել, յերբ արդեն այդպիսի մի հանդուգն հիմարություն ենք ձեռնարկել:

— Դե՛հ, բարի ճանապարհ, հուսով եմ՝ կտեսնվենք:

Յեվ ձեռքս ամուր սեղմեց, իր մեջ մտածելով, թե մենք այս անտառից դժվար թե կենդանի դուրս գանք: Նրա հետևը կանգնած՝ մահը խավարի մեջ ցինիկորեն ժպտաց:

Տխուր ու տրտում նայելով հսկայական կոշիկներիս ու անդրավարտիքիս՝ տեսա, վոր թեյ մատուցող կարմիր բանակային խախոլն ել ինձնից պակաս չահագրգռված չի դրանցով:

— Ընկե՛ր տիկին, բերեք փոխենք. դուք ինձ հանդերձանք, յես քեզ՝ իսկական կանացի հագուստ՝ փետուրներով, փորփոռով:

Յեվ ձեղունահարկի ինչ վոր անկյունից բերեց պարիզյան մի գեղեցիկ կորսետ, սենեկապետի անդրավարտիկ ու, իմ բախտից՝ կանացի մուգ կաստյում: Սենեկապետի վոսկին շուտով փայլեց պատիկ ցրիչի վրա հետույքին, կարմիր բանակայիններից մեկը վարդագույն կորսետը չափուձև արեց, իսկ յես ու Միշան դի-



մակահանդեսից դուրս յեկանք այնքան որինավոր բուրժույ դարձած, վոր հենց առաջին պահակատեղում մեզ նորից ձերբակալեցին՝ չնայած բոլոր նշանաբաններին, թղթերին ու անցագրերին: Կատաղի Իպոդի Միշան ուղեկցորդի հսկողությամբ յետ ուղարկվեց շտաբ ու մինչև վերադարձավ, մութը բոլորովին ընկել եր արդեն: Հրաժեշտի ժամանակ ժամապահը բարեմտորեն խորհուրդ տվեց՝ վորքան կարելի յե՝ յերկաթուղուց հեռու գնալ և անտառի միջով անցնել:

— Իսկ այստեղ,—խավարի մեջ անդուր փայլում եյին ռելսերը,—ձեզ ձեռաց կթրխկացնեն:

Անտառի մի քանի ժամվա անդորր ճանապարհ: Յերկու հետախույզ հեծելակների հանդիպեցինք: Մթության մեջ նրանք մեզնից վախեցան, մենք՝ նրանցից:

Միքիչ խոսեցինք, մարդկային խոսակցությամբ տաքացանք ու առաջ անցանք:

Անտառը մաքրում ե հոգնածությունը, ինչպես մեծ ու սև լիճը՝ քայլելուց ջարդված վոտքերը: Դեռ միտս են՝ աստղերը, խավարի սարսափը, անտուն, անմահիճ, աննախաճաշ մնալու ահ ու յերկյուղը: Ընդհանրապես մեծ ճանապարհի մասին մոռացած քաղաքացիների անախորժ զգացում: Ինչ-վոր մի արահետից ձայներ— բաղնիքում, գետնին, մի ջահել կիրգիզուհի յերրորդ որն եր, ինչ ծնում եր ու չեր կարողանում:

Դռների չըխկ ու թխկը, նոր մարդիկ, անծանոթ ձեռների շոշափումը, հավանական ե, ոգնեցին նրա ջղերին, ապրելու ցանկությանը—սարսափելի ջղաձգությամբ նա ծնեց յերեխան: Յեվ համարյա միանգամից հանգստանալով, ձեռքիցս բռնելով՝ քրտինքից թացացած մազերի տակից թոթով, նիրհուն, ինչ վոր բառեր մրմնջաց: Այդպես ել քնեց, առանց բաց անելու թռչնի ճանկերի նմանող չոր ու տաք մատները:

Մի խոսքով՝ փոքրիկ կիրգիզի մկրտության վրա տակի յուբկաս գնաց, իսկ մետաքսե թաշկինակիս մեջ մանուկը յեկեղեցի գնաց և, հետը իմիջի այլոց նաև ինչ-վոր կռապաշտական ամուլածիկներ: Յեկեղեցի գը-



1557—2

նալուց մենք հրաժարվեցինք: Հին Ցարիկին[1]) կառչած տերտերը նորեկ կնքահոր ու կքամոր մեջ ավելի վտանգավոր սատանայական զորություն կարող էր տեսնել:

Մկրտությունից հետո յերջանիկ հայրը, ի նշան շնորհակալության, առաջարկեց սեփական ձիով մեզ տանել Կազան:

— Յես արդեն տեսնում եմ՝ դուք լավ, կարգին մարդ եք: Նոր չեմ ծնվել, փառք աստծու, հասկանում եմ, թե ո՛վ ում կողմն է:

— Իսկ յեթե մեր առաջը կտրեն ի՞նչ կասեք:

— Կասեմ, թե ամարանոցավորներ են, տուն են գնում աղաները: Չե՞ վոր ինձ ճանաչում են, կհավատան:



Յեվ իրոք՝ առավոտյան տաք ցողի հետ կիրգիզի սայլը գյուղական անդորր ճանապարհներով տարավ մեզ: Անտառի թավ ու շողշողուն խոտերով ծածկված սայլուղի, փայտփորի կտկտոց, խեժի ու հաղարջի բուրմունք: Յեվ ժամանակ առ ժամանակ, առավոտյան թարմ օդի մեջ սայթաքելով, գլխավերևով վրնդստացող կեզլու գնդակներ: Ծանր հրետանին անտառի վրայով հարվածում է: Պարեկներից վոչ մեկը մեր սայլի առաջը չկտրեց, Ադմիրալտեյսկի արվարձանը մենք մտանք, հազիվ հավատալով մեր հաջո-

[1]) Ցարիկ—հին ուղևորների սայլի տեսակը:



ղությանը, թեև տների ու փողոցների անփոփոխ այլանդակությունն ամեն կողմից շտապում էր հավատացնել մեզ, վոր այս արդեն վոչ թե յերազ է, այլ ինքը՝ ծուռլող, ցեցոսկր, սպիտակ գվարդիական զառանցանքով բռնված Կազանն է:

— Իսկ դուք մեզ ո՞ւր եք տանում, քա՛վոր, ո՞ւմ մոտ պիտի տեղավորեք:

Կիրգիզը շուռ տվեց ուրախ, խորամանկորեն ժպտացող դեմքը:

— Չե՞ վոր ձեզ մի հանգստատեղ է հարկավոր: Նրանից լավ տեղ չեք գտնի—ձեզ կտանեմ Թաղի պրիստավի մոտ: Մեր մարդն է, այսինքն վստահելի ու խոսքին տեր: Յես ու նա հին բարեկամներ ենք: Յեվ յերասաններն ուրախ շպպացրեց ձիու կլոր մեջքին: Յես ու Միշան միայն իրար աչքով արինք:

Սանահայրը մեզ սիրաշահեց, խոսք չկա: Պրիստա՞վ: Սայլը մտավ արվարձանի լայն ու փոշոտ փողոցը: Փայտե մայթ, վորի բոլոր ճեղքերի մեջ պարզ խոտ. մի հարկանի փայտե տնակներ, աքաղաղավոր ու ճռճռան դարպասներ, սպիտակ ու կանաչ, չարունակ քնկոտ փեղկեր: Մտմտուկ սանահայրը սայլն ուղիղ կանգնեցրեց մի փոքրիկ ու շքեղ տան առաջ, հրաժեշտի համբույր տվեց մեզ ու հայրաբար հանձնեց պատշգամբ դուրս յեկած խնամի պրիստավին:

Ճիշտն ասած՝ յես ու Միշան մեկեն ընկանք «թատրոն՝ իր համար»: Պրիստավի տան վերևի սենյակներում մաքուր լվացած, մոմած ու ճամբուկած հատակին տեղի ուներ արտաքինից բոլորովին անվնաս քաղքենիական մի կատակերգություն՝ գեղարվեստական թատրոնի բեմական ձևավորումով, լուսամուտներին՝ խորդենի, անկյունին՝ սրբապատկեր և գրասեղանին՝ տեղական նահանգական դատարանի լուսանկարներ: Հնամենի սյուրտուկների, բարձր ու ձիգ վզոցների մեջ հեշտությամբ կճանաչեյիք մեր տանտիրոջ չռած աչքերը, այտոսկրները, տափակ, ճանճերից կեղտոտված ճակատը: Ինչպես ընդունված է՝ դանդաղաշարժ, սուսիկ, մարդկանց հավասարապես ճնշող պրիստավը ցամաքած, ղժղժան, չար դանդը լպստած մի կին ուներ:

Նրանց աղջիկը՝ Պաշան՝ վարդավիթիթ, լիքը «նախշած խնձոր», ժամանակն անց եր կացնում փարթամ կուրծքը լուսամուտի ցածլիկ գոգին դցելով և հազվադեպ անցորդների վրա արևածաղիկ չրթացնելով: Վորպես անդարդ ժառանգ, Պաշան քաղաքական հարցերի չեր խառնվում և միայն սուր ուշադրության հասցնող կոպիտ սկանդալների ժամանակ, վոր իր մայրն եր սարքում ներքևի հարկի կենվորների հետ, դժգոհությամբ կնճռոտում եր վարդանման կոճակն ու ասում.

— Մայրի՛կ, դուք ի՛նչ անկիրթն եք, չե՞ վոր այդպես բարձր չի կարելի:

Ներքևը՝ պրիստավի, նրա մոմած հատակի ու խորդենիների տակ բանվորներն անկյուններ եյին վարձել և ապրում եյին իրենց ընտանիքներով: Հեղափոխությունը ժամանակավորապես ընդհատել եր ներքևի ու վերևի հարկի կենվորների միջև գոյություն ունեցող պարզ և վորոշակի հարաբերությունները: Նույնիսկ Պաշայի ոժիտն էլ եր սպառնում կիսատ մնալ: Պրիստավի արմատիկները, վոր հավասարապես, բարեհոգի կերպով և նույնիսկ նահապետական ձևով նրկուղից ծծում եյին կենդանի հյութը, հանկարծ մնացին առանց ուտելիքի, նույնիսկ այնտեղ՝ անկյուններում զգացին միքանի պարզորոշ խայթոցներ ու խեղումներ: Այն տեղը հասավ, վոր կենվորներից մեկը՝ մի բանվոր, պրիստավի սպիտակ ու խավամաղ այծը բռնագրավեց իր յերեխաների համար:

Բայց հետո, հուլիսին, ասուված քիթը խոթեց մարդկային կեղտոտ գործերի մեջ: Արդարադատությունն ու դատարանը, շրջանակից դուրս պրծնելով, ցնցեցին որենքի մեռյալ թերթերը, և փարթամ Պաշինկան մազաչափ անգամ չեր անհանգստանում ու զարմանում, յերբ իր մոտից փողոցով տանում եյին կատաղի բնակիչներից մեկին, վոր այլևս յետ չեկավ: Այստեղ ամեն ինչ չափավորվեց, և վոր չափով նոր իշխանությունը բանվորների մերկ դիակները սայլով դեպի Վոլգա յեր կրում, պրիստավի տան վրա չորս կողմից հովվերգական ստվերներ եյին տեղում: Ամբողջ ընտանիքը խաղաղ ու բախտավոր ճմճմոցով սկսեց ծծել իր լռակյաց



նկուղը, վորտեղ վախենում եյին լալ ու աղմկել: Հենց այդ ժամանակ էլ, յերբ աստծու, նաև չեխոսլովակյան դատարանը թունդ գործում եյին, մենք տեղավորվեցինք պրիստավի մոտ: Սկզբից նա մի քիչ քաշվեց, ինչպես մի վոզնի, վորն անհարմար ե զգում որը-ցերեկով կենդանի գորտ ուտել, այն էլ, ըստ իր վոզնիական հին սովորության, այդ համեղ պատառը յետևի թպրտացող թաթերից սկսելը: Իսկ հետո, հյուրերիս հետ թեյ խմելով, ջհուդներին ու կոմունիստներին հայհոյելով, համոզվեց մեր քաղաքական բարեհուսության մեջ ու բոլորովին հանգստացավ: Բավականությունն. յերկարացնելով, վոչ ավելի, քան յերեք որը մի անգամ, գնում եր քաղաք, ըստ վորում վողջ փողոցն ու «նկուղականները» գիտեյին, վոր «ինքն» ե՛լի գնաց շտաբ՝ իրենցից մեկն ու մեկին ամբաստանելու: Յերեկոյան վոստիկանությունը պատշաճ կերպով տանում եր հերթական կենվորին: Վերևում թեյ եյին խմում, մայրն ուշադիր ականջ եր դնում ներքևում տեղի ունեցող աղմուկ-շփոթին, հայրիկն անմեղ գառան պես, յերկար ու անվերջ, ուրախ-ուրախ բացատրում եր, վոր իր մեղքն էլ ե գալիս, բայց, վորպես քրիստոնյա և սպա, իրավունք չունի թաքցնելու և այլն: Յեթե պրիստավը կարողանա՛ր տեսնել այն սև թույնը, վոր իր ասածներն եյին ներարկում մեր ներվերը:

Պաշան վարդագույն չթի մեջ կորած, հոգով անամպ յերկինք սլացած, ուր թղթե աղավնիներ ու մրկնականջիկներ են թռչկոտում, վեցերորդ գավաթն եր լցնում հարևան ուսուցչի համար, վորին նկուղում ուղղակի «փեսացու» եյին կանչում, ավետարանական այս անվան մեջ անասելի ատելություն դնելով դեպի նրա անպիտան միրուքը, ակնոցները և ընդհանրապես ինտելիգենտությունը: Յեվ յերբ ներքևում սկսում եր յերկար ժամանակ զսպված լաց ու կականը, մայրիկն այնպես եր կչկչում, ինչպես յուղը՝ տապակի մեջ, հայ-

բիկն ակնոցների տակից 1911 թվին «Նովոյե վրեմյա»[1]) թերթի վրայից նայելով՝ վսեմաբար զարմանում եր: Պաշան մի քիչ կնճռոտվում եր, և ուսուցիչը քնքշանքով բացատրում եր, թե ինչ բան ե սահմանադիր ժողովը:

Մյուս առավոտ Միշան փողերն ու դոկումենտները հետն անելով՝ գնաց քաղաք հետախուզության: Պըրիստավը պտույտի դուրս յեկավ՝ բանվորներ վորոնելու և ձեռքներից զենք խլելու, մայրիկն իջավ անուշավետ դժոխքը՝ նկուղը՝ դառն ու կծու վշտի փրփուրը քաշելու, ինչպես այդ տան նեխած խավարի մեջ մակարդված կաթից: Պաշան անխուսափելի Թաուլով մի վեպ ձեռքն առավ, իսկ յես՝ լրագիրը, վորի մեջ, մահապատժի յենթարկվածների շարքում, չկար ինձ հետաքրքրող անունը: Այսպիսով՝ պրիստավի տան բոլոր բնակիչներն զբաղվեցին իրենց գործերով, վորոնք բավականին բազմազան եյին:

Սև ու հաստլիկ ճանճերը զժժում եյին ապակու վրա, և ամեն ինչ կամաց-կամաց սուզվում եր նիրհի մեջ: Սակայն ժամը յերկուսի մոտերքը խուլ վորոտները, վոր նախորեյին շատ հեռվից եյին լսվում, զգալի չափով մոտեցան քաղաքին: Վաճառականի սատին հագած յերկնքում սկսեցին բռնկել ու կաթնանման ժապավեններով ներքև թափվել շրապնելի բարակ ծըխեր: Մարդազուրկ մեր փողոցը վերջնականապես դատարկվեց, նրա սովորական քունը թանձրացավ ամպրոպից հետո տիրող խաղաղության աստիճան: Ներքևում արդեն այլևս վոչ լաց եյին լինում, վոչել փափսում— այնտեղ սպասում եյին: Պրիստավը տուն վերադարձավ հուզված, և հենց ճաշի նստած րոպեյին, յերբ նա դեռ նոր եր սկսել խուզարկության մանրամասնությունը նկարագրել, իր իսկ տանիքի վրա պայթեց առաջին յերկաթե ընկույզը: Ընտանիքը սարսափահար յեղավ, բայց հետո անհաղթահարելի խոսքերի հեղեղն արկի պայթյունը վերածեց պատահական մի պարզ յերեվույթի: Բոլորը, վոր ոձից խայթվածի պես կուչ եյին

---

1) «Նովոյե վրեմյա»-ն միապետական թերթ եր, վոր հրատարակում եր Ա. Ս. Սուվորինը:



յեկել, նորից բացվեցին ու բաց թողեցին իրենց սուր փշերը: Յես, վորպես «սպայի կին», մի անգամ ես պետք ե հանգստացնեյի զրուցակիցներիս, թե Կարմիր բանակը բոլորովին անզոր ե:

— Իհարկե՛, բա եդ ել զո՞րք ե: Բանդա յե, խուժան ե, չինացիների ավազակախումբ ե, վոր ռուսական մի հատիկ կրակոցից գլուխը կառնի-կփախչի:

— Շա՛տ ճիշտ ե, տի՛կին:

Գը՛ ռռ: Այդ րոպեյին մեր գլխավերևը նորից արկ պայթեց: Իմ սիրտը դողում եր ուրախ ու կարմիր աստղանների խելագար պարից, իսկ պրիստավն սըրտաբեկ ձև... 

Յես նրանց դատ սանդուխքի գլխին: Ցածլիկ չեմքից գլուխը վեր ցցելով՝ կանայք ու յերեխաները մի տեսակ սառած սպասումով նայում եյին մերթ դեպի յերկինքը՝ գանգուր պայթյուններին, մերթ՝ բաղնիքի դռանը, վորի հետևից անհանգիստ մկկում եր փակված այծը: Կես խոսքից մենք իրար հասկացանք: Հենց նույն գիշեր վերջինը ձերբակալված մի բանվորի կին փոքր ինչ մոտեցավ ինձ, շշնջալով հարցրեց ազգանունս և մտածելով—

— Վո՛չ, նա փախել ե, թերթերը գրում եյին, վոր փախել ե, դուք եք եկել ետեղ:

Ուղղեց յերեխային, վոր վոչ մի կերպ չեր կարողանում բերանն առնել իր լայն ու կինամոնագույն կրծքի ստինքը, ու նորից սկսեց լուռ ականջ դնել հրբետանային ճայթյուններին:

— Իսկ ի՞նչ եք կարծում, իմ՞ն արդեն գնդակահարա՞ծ կլինեն: Թե վոր եսոր կարմիրները մտա՛ն, կազատեն, թե՞ արդեն ուշ ե:

Յեվ առանց պատասխանի սպասելու (պատասխանը հենց ինքն ե,— հարթ, փայտե, մռայլ, ինչպես նկուղի առաստաղը), ընկղմեց հարձակման սիմ—

Ֆոնխայի մեջ, մի հարձակում, վորից վողջ տունը դողում եր։

Սկզբում վորոտները մոտենում եյին։ Ճայթում եյին յերկարատև համազարկերով, հաստատուն կերպով ծածկելով պատասխան կրակի ավելի մանր ու հաճախակի ալիքները։ Հետո մյուս ափի ինչ-վոր տեղից մեջ մտան նոր, յերկաթ փսխող յերկաթե կոկորդներ։ Սկզբից նրանք կարծես թե յաբախտ եյին խփում, իսկ հետո՝ զարհուրելի ճշտությամբ։ Մե՞րոնք են, թե՞ օտար։ Ավա՜ղ, մենք համազարկի յուրահատուկ վորոտն եյինք լսում, վորի մեջ սխալվել չի կարելի։ Նրանց պայթյունները Կազանի վրա չեյին, ուրեմն—ուրեմն՝ մերոնց վրա։ Ամպրոպը մի ժամի չափ ել գոռաց յերկնային արևավառ լազուրում։ Հետո կարծես յետ քաշվեց։ Արկերն սկսեցին ավելի ու ավելի քիչ պայթել քաղաքի վրա, հետո բոլորովին լռեցին։ Միայն հեռվից, արդեն այլևս առանց մոտ գալու, ասես ալեկոծությունների գիծ, փրփրին եր տալիս հեռավոր մի հրաձգություն։ Մի ժամ, յերկու ժամ, թերևս ավելի, հարևանուհիս պառկեց՝ գլուխը չեմքին դրած, առանց շարժվելու, առանց ծպտուն հանելու։ Այս անգամ նա բարձրացրեց դեմքը․ ցեխոտ եր և արտասուքի ու մեր պարտության հետքերը վրան։ Սանդուխքից վերցնելով քնած յերեխան՝ քարի պես, ձիգ-ձիգ նորից իջավ նկուղը։

Կարիք կա՞ արդյոք ասելու, թե պրիստավի ականջին յերկու խոսք ասելը կարող եր այդ ընտանիքին փրկել սպիտակ տեռորից, և վոր նկուղաբնակներից վոչ մեկը չուզեց ոգտվել այդ միջոցից։

Վոչ յերեկոյան, վոչ ել հաջորդ առավոտ իմ ուղեկիցը չվերադարձավ։ Յես մնացի մենակ, առանց դրամի և առանց դոկումենտների։

Պրիստավը հուզվեց, բայց հետո վորոշեց, վոր «ամուսնուս» վորպես կամավոր սպայի, կարող ե զորակոչած լինեն շտաբ, ուր և ներկայացած կլինի, և խորհուրդ տվեց գնալ քաղաք տեղեկանալու։

Ծանոթ տներ, ծանոթ փողոցներ, բայց և այնպես՝





ճանաչելը դժվար ե։ Կարծես մեր նահանջած որից տաս տարի անցած լիներ։ Ամեն ինչ ուրիշ ե և ուրիշ տեսակ։ Սպաներ, գիմնազիստներ, գթության քույրերի թաշկինակ կապած՝ ինտելիգենտ ընտանիքի որիորդներ, բաց խանութներ, համարյա հիստերիկ կենդանություն— մի խոսքով՝ վայրկյանական ու խաբուսիկ այն ցանը, վոր ակնթարթապես դուրս ե գալիս սպանված հեղափոխության մարմնի վրա։

Արվարձանում տրամվայը կանգ առավ, վոր ճանապարհ տա գնդակահար բանվորների միևնույն մերկ ու փայտի պես ցցված դիակներ տանող սայլին, վոր դանդաղ ու թխթխկալով անցնում եր ցանկապատի մոտով, վորին փակցված եյին «ամբողջ իշխանությունը սահմանադիր ժողովին» պլակատներ։ Սահմանադրական այս սուտը փակցնողները թերևս մտքներովն անցկացրած չլինեյին, թե իրենց նկարները դառնալու յեն այդքան ցինիկ, բոլորին հասկանալի հեղափոխական պլակատի մի մասը։

Սպիտակ շտաբը Գրուզինսկայա փողոցի վրա յեր։ Իվերջո՝ շտաբ մտնելու անցագիր ստանալն առանց դժվարությունների հաջողվեց— մոտիցս շտաբի սպա—



ներ էին վազվզում, վորոնք ընդամենը մի քանի օր առաջ Ռազմահեղափոխական խորհրդում էին աշխատում: Բոլոր դռների առաջ գիմնազիստ ժամապահներ՝ տասնհինգ–տասնվեց տարեկան տղաներ: Առհասարակ վողջ գավառական ինտելիգենցիան ցնցվել, նետվել է հուզված գործիմացության ալեծուփ ծովը, զինվել ու զբաղվել է պետական գործերով՝ սիրող Կարմիր խաչի մասշտաբով, սիրող լրտեսության մասշտաբով, մեծ-մեծ գալիֆեներով, սպայական խթաններով ու բեխերով, անձնազոհություն կատարելու հայրենիքի բեմի վրա:

Աստվա՛ծ իմ, ինչ լա՛վ է սպիտակ ռեժիմն իր աշխարհ գալու յերրորդ օրը: Մեքենագրուհիներն ի՞նչ աշխույժ չխչխկացնում են, ռեմինգտոնների վրա կանացի ի՞նչ սիրալիր ու ինտելիգենտ դեմքեր են: Առանձնասենյակի դռան առաջ յերկու խիզախ զինվոր, տես այն դեմքերը, վոր հնում քարացել էին ցարական օթյակի առաջ, և այս դռնից մերթընդմերթ դուրս ու ներս է անում մաքուր շապիկով, կրծքարաց կիտելով, բուրավետ բեխերով, օ՛, ինչպիսի մարդ— յեթե փոչ գեներալ, գոնե նրա պես մեկը— գնդապետ կամ



կապիտան, և նրա՝ չինովնիկական ու զինվորական արտաքինի վրա վորքա՛ն քնքուշ, վորքա՛ն կենդանացած ցոլում են բուն լուսավորության գիրուկ, թեև նոսր բծերը, նրա թևածալքից վորքա՛ն պչրուն են յերևում մեր համալսարանական նշանները:



Գրուզինսկայա փողոցի վրա կատարած այցելությունները յերկու որ շարունակվեցին: Քարտուղարներից ու հերթապահներից մի քանիսից հաջողվեց վերջնականապես իմանալ գնդակահարվածների ու փախած ընկերների ցուցակը: Ժամանակն է հակառակ յելքի մասին մտածել:

Պրիստավն ապարդյուն սպասելով իմ անհետ կորած «ամուսնուն», սկսեց անհանգստության նշաններ ցույց տալ: Մի կոպեկ փող չունեյի, և նկուղաբնակ իմ հարևանները կտրուկ խորհուրդ էին տալիս հեռանալ, քանի շուտ է: Բացի այդ, անվերջ ստի մեջ, ջհուդների, կոմունիստների և ուղղափառ սուրբ զենքի մոտալուտ հաղթանակների շուրջը տեղի ունեցող ամենօրյա խոսակցությունների մեջ թաղված կյանքն անտանելի յեր դառնում: Մի առավոտ յես կամացուկ հագնվեցի. շոշափեցի գրպանիս չորացած հացի կտորը, վորի միջուկի մեջ քարացել էր թաքցրած անցագիրը, և վորոշեցի տնից գնալ, վոր այլևս յերբեք չվերադառնամ այդտեղ: Մի բանվորի կին կարողացավ յերեք ռուբլիանոց մի թղթադրամ գտնել ինձ: Բայց դարպասի մոտ պրիստավն առաջս կտրեց:

— Էս ո՞ւր, տի՛կին, էսքան շուտ:

— Շտա՛բ, այստեղ խոստացել են ճիշտ տեղեկանք տալ:

— Թո՛ւյլ տվեք ձեզ ճանապարհ դնել, յես կօգնեմ, այսպես ասած՝ խնամություն կանեմ:

— Նեղություն մի՛ կրեք, յես ինքս շատ լավ կարող եմ տեղ հասնել:

— Ի՞նչ նեղության բան կա: Վո՛չ, թո՛ւյլ տվեք ծերուկիս տիկնոջդ սիրաշահել:

Ինչ արի, չարի, ճար չեղավ, պրիստավն իր ասածի տերն եր, և իմ խոսքերը կպչում եյին նրա մեղրածոր համառությանը, ինչպես ճանճը՝ մեղրաթղթին:



Շտաբում, կարծես գետնի տակից, դուրս թռավ մի ճարպիկ քարտուղար, և մինչդեռ մենք ու նա անցնում եյինք ընդհանուր դահլիճով, այցելուների ու օրիորդների թիկունքից, վորոնց աչքերը հետաքրքրությամբ ճանապարհ եյին դնում մեզ, փայլեց նիզակի սպիտակին տվող սառնությունը:

Պարուչիկ Իվանովի առանձնասենյակը տեղավորված եր վերևում, յերեք փոքրիկ սենյակի մեջ: Սենյակներից առաջինը՝ ընդունարանը բերնեբերան լիքն եր այցելուներով, կալանավորվածներով, ամեն տեսակ ազգականներով ու ժամապահներով: Մինչդեռ իմ պատվավոր ուղեկիցը վազվզում եր Իվանովին զեկուցելու, նրան, վոր «հեղափոխության համար» հարվածում եր կազանի յերկաթուղային բանվորների կրունկները, յես կարողացա բանս տեսնել:

Յեվ ահա յերկու քայլի վրա, յերեսներն ինձ, մեր նավատորմի նավաստիներից մի խումբ ծանոթներ: Նավաստիներ, ինչպես տասնութ թվի բոլոր նավաստիները, վորոնք ռուսական մեծ հեղափոխությանն իր ռոմանտիկական փայլն են տվել: Մերկ և ուժեղ վզեր, արևառ դեմքեր, «Անդրեյի», «Սեվաստոպոլի» և ուղղակի՝ «Կարմիր նավատորմ» գլխարկներ: Բոցմանը (ավագ նավաստի) ծանոթ աչքերը հառել—անթարթ նայում ե, այնպես, վոր յերևում ե նրա պարզ հոգին, վոր քսան րոպեյից հետո կանգնելու յե պատի տակ, նրա վեհ ու լայն հոգին՝ ուսերի մեջտեղը, խաչի հետ, վոր կոշկակապի վրա հագցրած՝ տարուբերվում ե—վոչ թե աստծու, այլև հենց ենպես, բախտի համար:

Զարկերակս քցում եր ու քցում. մի վայրկյան, յերկու, յերեք— չգիտեմ՝ վո՛րքան: Իսկ աչքերը, վոր բացե ի բաց ոգնություն եյին աղաղակում, այլես չեն նայում և, ինչպես խոնավ յեղանակի հրետանի, մի տեսակ գորշ բան են հագել: Հրացանի կոթունները շրխկացին—նավաստիներին տանում են: Դռան մեջ բոցմանն զգուշությամբ շուռ յեկավ: «Դեհ—աչքերն ասում են —մնաք բարով»: Սենյակը դժի պես պտույտ ե գալիս. վորտեղից ջրի այդ փայլը, քամի որվա ծովի փայլը՝ այդպիսի կարճատև, ցասկոտ ու արծաթե ալեկոծումով:



Կանաչ սեղան, շուրջը՝ յերեք սպա: Իհարկե՝ ճակատից հենց Իվանովն ե, վոր կա: Սփրթնած ու ճաղատ գլուխն այնքան սպիտակ ե, վոր պինդ յեփած ձվի պես փափուկ ե թվում, պայծառ աչքեր՝ առանց հոնքերի, սպիտակ կիտել, սպիտակ ու մաքուր ձեռքերը սեղանին: Յերկրորդը՝ մի ֆրանսիացի: Սրա դեմքը չեմ հիշում: Այսպես՝ ինչ-վոր գարշելի ու անսահման սառը: Չորս կողմն ե մտիկ տալիս, աշխատելով ամեն ինչ կապակցված հիշել, վոր հետո տանը կարողանա ամեն բան սրամտորեն պատմել: Յերրորդը՝ մի արձանագրություն: Գրիչ, հստակ տող, թերթի ճակատին՝ լայնատարած, ճոխ ու պոչավոր գլխագիր:

— Ձեր ազգանո՞ւնը: Տարի՞քը: Հասարակական դի՞րքը:

Իմ պատասխանների վրա Իվանովը ժպտում ե, անհուն, համարյա բարեսիրտ ժպիտով:

— Իսկ Ռասկոլնիկովին ճանաչո՞ւմ եք:







Դեմքս արտացոլում է դատախազի անմեղ ու ան-հոգ ուրախությունը:

— Ռաս–կոլ–նիկովի՞ն: Ո՛չ, իսկ ո՞վ է այդ:

— Մի մեծ սրիկա:

— Գարո՛ն պարուչիկ, բոլոր սրիկաներին հո չի՞ կարելի ճանաչել, նրանք այնքան շա՜տ են:

Ֆրանսիացին մեզ այնպես է նայում, ինչպես՝ մո-գեվիլի:

— Ում ճանաչեք, չճանաչեք, բայց մեկին դուք պետք է հիշեք:

Ես լուռ եմ:

Եվ հանկարծ այդ մարդը, որ քիչ առաջ այդպի-սի գեղարվեստական պատուգամներ էր անում, քրքրվե-լով, ինչպես կուշտ կատուն՝ իրեն համար անպետք մը-կան հետ, տարբերկրացի սպային աչքով անելով դեպի նախնական խուզարկության ժամանակ վրայից հա-նած ապխտակեղենը, որ դրված էր Իվանովի թան-քամանի մոտ,— հանկարծ այդ պատվական, կիրթ մարդը, սրամիտ այդ դատախազը բռունցքը սեղանին խփեց ու մոլեգնած կատաղությամբ տեղից թռչելով՝ բղավեց ռուսերեն.

— Ես քեզ ցույց կտա՛մ, յես քո ե՛ն... ենպես ա-նեմ, որ ծուլ–ծուլ գաս, սրիկա՛:— Եվ կոպիտ կեր-պով դառնալով տարբերկրացի սպային—որ հայրենա-կան հարցուփորձի ժամանակ անշնորքի պես նստել էր, գնացեք ցա՛ծ, յերբ կարիք լինի, կկանչեմ:

Ֆրանսիացին թեթև քայլերով անցավ կողքովս՝ արհամարհական, սառնասիրտ, համարյա չարամիտ աչքերով վողողելով ինձ և իր ընկերակցին ու դաշնակցին:

Ու նորից Իվանովը խոսեց հանգիստ՝ իր նախկին փափուկ, յերկիմաստ, կեղծ ժպիտով:

— Մ՛ի րոպե, առանց քննիչի բան դուրս չի գա:



Սենյակը յերեք դուռ ուներ: Աջից այն, վորից դուրս գնաց Իվանովը, մեջտեղից՝ ձմեռվանը, վոր թղթով պատած ու փակ եր: Յեվ յերրորդը, ձախից ամենավերջինը, վոր դեպի ընդունարանն եր տանում: Կյանքում հեքիաթային, խելքից ու մտքից վեր, աստծու բախտին մնացած րոպեներ եղ են պատահում: Ահա այդ գորշ առավոտը, վեր յես տեսա վանդակի անհուսալի խաչով խաչուփակված լուսամուտից, ինձ մի հրաշք պատահեց: Հենց վոր Իվանովը դուրս գնաց, ժամապահը, վորն ըստ յերևույթին, պարուչիկի ջղային խաղից, նրա գողտուկ ու ծիծաղաշարժ քաղաքավարությունից շունչ կտրող ու անասնական համառ դոռդոռոցի անցնելուց միանգամայն շշմել եր,— այդ ժամապահը դռնից կիսով չափ դուրս ընկավ՝ ծխելու: Սենյակի մեջ մնացին միայն նրա գրատի փռված փեշերն ու հրացանի փայտե ծանր փողը: Քանի՞ վայրկյան նա ծխեց: Յես կարողացա վազել դեպի մեջտեղի թղթապատ դուռը և վերջին ուժերըս լարելով՝ մի





քանի անգամ թափ տալ այն: Դուռը բացվեց, ինձ դուրս թողեց ու նորից անաղմուկ փակվեց: Յես հասա սանդուխքի գլուխը, կարողացա յերեսիս վերակապը քանդել ու փախչել փողոց: Ընդհանուր գրասենյակի լուսամուտի առաջ՝ հետևն ինձ արած՝ կանգնած եր պրիստավը և, սպասողական վիճակում, ապակու վրա ճանճ եր ճխլում:

Շտաբի մոտով կամաց սնդսնդացնելով մի կառապան եր անցնում: Նա յետ նայեց այն ժամանակ, յերբ յես թռա կառքի մեջ:

— Ո՞ւր պետի գնաք:

Չեմ կարողանում նրան պատասխանել: Ուզում եմ, բայց վոչ մի կերպ չեմ կարողանում: Նա նայեց իմ կիսաթափանցիկ հագուստին, յերեսիս, չտաբին, ամ—



բողջ հասակով ծառացավ կառքի առաջամասին և կատաղաբար մտրակեց ձիուն: Մենք դղրդալով սլանում ենք Կազանի սարսափելի սալահատակի վրայով, նրբանցքներով ու խրճիթների հետևով, մինչև վոր ձին՝ քափ ու քրտինք մտած և ցանցառ պոչը ցցած՝ մըտավ իջևանի դարպասից: Իմ կառապանի տղան Կարմիր բանակումն եր ծառայում, և, բացի այդ, նա սքանչելի Ավդոտիա Մարկովնայի— սպիտակ, կարմիր, յերեք



1557—8

մարդու խոտաչափ, վառարանի պես տաք, բարեխոս, գյուղական թաշկինակների ու հեքիաթների վառ արևի պես—Ավդոտիայի ամուսինն եր: Ավդոտիան ինձ գըրկեց. յես խողի ձագի պես ճչում եյի նրա մայրական անհուն կրծքին. Նա ինքն էլ եր լալիս և քնքուշ, ջերմ ու մխիթարական, կրակից նոր հանած բլիթների պես խոսքեր ասում: Հետո մերկ ուսերիս մի շալ գցեց. և հենց տեղն ու տեղը՝ պատշգամբում, սկզբից մինչև վերջ լսելով ամբողջ պատմությունս՝ այնպիսի պարսավանք թափեց քաջածանոթ պարուչիկ Իվանովի գլխին, վոր աղբակույտերի վրա սուր ճանկերով քջուջ անող աքաղաղներն ուրախությունից բարձր-բարձր կանչեցին:

— Գնա՛նք, մերս, գնա՛նք թեյ խմենք:

Յերկու ժամից հետո, ծաղկանկար շալի մեջ փաթաթված, հետս մի փութ հաց ու յերեք ռուբլի փող, յես արդեն դուրս եյի գալիս Կազանի ուղեկալի հետևից: Դիտակալ պոստը, վոր զբաղված եր անցնող սայլը զննելով, ինձ հեշտությամբ բաց թողեց: Մյուսի մոտից յես թփերի միջով անցա:

Իմ ուղեկից գյուղացին, վոր համաձայնել եր ինձ մինչև առաջիկա գյուղը հասցնել, իմ կյանքի բախտավոր այդ որը կարեկցաբար մի անգամ ևս ինձ կյանք շնորհեց: Վեց վերստ անցնելուց հետո, նա ասաց այնպիսի ձայնով, վոր կարծես և՛ իմ նկուղաբնակ հարևանուհու, և՛ չիկամորուք կառապանի, և՛ Ավդոտիա Մարկովնայի, և՛ ռուսական վողջ չքավորության ձայնն եր, մի չքավորություն, վոր հեղափոխական խժդժությունների, պարտությունների ու նահանջների սկզբնական այն որերին մեր կողմն եր և մեր հաղթանակը փրկեց նույնքան պարզ ու ամուր կերպով, ինչպես և ինձ, ինչպես և հազարավոր ուրիշ ընկերների, վորոնք ցիրուցան եյին Ռուսաստանի մեծ ճանապարհներին:

— Դե՛հ, իջի, աղջի՛կս: Հերիք է խաբես, յես տեսնում եմ, թե դու ի՛նչ պտուղ ես: Ձա՛խ կողմից գնա գյուղը— ենտեղ ձերոնք են: Իսկ աջ կողմից, ա՛յ, ամպ է գալիս, կարծես՝ սև, եդ չեխերն են, ձիավոր զո՛րքը:



Հանդամիջով յերկու վերստ վազ տալով՝ յես իսկապես հանդիպեցի մեր առաջավոր շղթային: Կարմիր բանակայիններից մեկը՝ ըստ յերևույթին ինձ ճանաչելով ընկ. Ցուգինի շտաբից, կողքիս նստեց վարած հողի կոշտին ու քաղաքավարի, ցույց տալով վոր իբր թե չի նկատում իմ խանգարված զգացումները, գլանակը փաթաթելով ասաց.

— Հը՞, մարդուդ գտա՞ր, թե՞ չէ:



# Կազան—Սարատով

I

Ականակիր նավի տախտակամածի վրայի ժամերը զարնող ժամացույցի ձայնը նման է Պետրոպավլովսկի ամրոցի նվագող ժամացույցի ձայնին:

Բայց վեհությամբ նիրհող Նևայի փոխարեն, դժգույն գրանիտի ու վոսկե ձողիկների փոխարեն պարզ ղողանջն է լցնում Կամայի անմարդաբնակ ափերը, քմահաճ ու վճիտ ջրերը, կորցրած գյուղերի կղզյակները:

Կամրջակի վրա մութն է: Լուսինը հազիվ է լուսավորում մարտանավերի նեղ, յերկար ու սլացող մարմինները: Խողովակների մոտ կայծեր են փայլփլում, կաթնանման ծուխն սպիտակ բաշի նման խոնարհվում է ջրի վրա, և իրենք՝ նավերը հպարտորեն վեր ցցած քթերով՝ վայրի լայնարձակ տարածություններում թվում են կուլտուրայի վոչ վերջին խոսքը, այլ մարտական ու անվորսալի ծովային ձիեր: Աղոտ լուսավորություն. առանձին դեմքեր գունատ են ու ցերեկվա պես պարզ յերևվում են: Լուռ են և նույնքան վորոշակի կեցվածքները: Եպիկական, տարիներով դաստիարակված, ուսուցի ինչպես բալետում, անբռնազբոսիկ են կոմենդորի շարժումները, վոր թնդանոթից ծանր բրեզենտը մի հարվածով այնպես է հանում, ինչպես կախարդված ու սարսափելի գլխից ծածկոցը պոկեն:

Նշանարարի պարող ձեռքերը՝ իրենց պերճախոս ու հակիրճ, գիշերվա քամու հետ հրամանների ու պատասխանների պայմանական, ծիսական պարը պարող կարմիր դրոշակներով:



Ցեվ մարտի պատրաստվող նավերի զուսպ տագնապի վրա, իր ծուխն ու ջերմությունը նկուղի խորքում թաքցրած՝ չիկացած հնոցի փայլի վրա, բարձր, կայմից ու կամրջակից բարձր, հանդարտ դողդողացող առագաստաձողերի միջից ծագում է վաղորդյան կանաչ աստղը:

Վաղուց անցել ու գետի վոլորանի հետևն ենք թողել մեր առաջավոր պոստը, ուղղակի ափին կպած մակույկը, Սմոլենսկի գնդի հրամանատարին՝ հանգիստ, միշտ դանդաղ, հաստատուն ու սակավախոս Ովչիննիկովին— Ազինի 28-րդ դիվիզիայի փառապանծ յերամից մեկին, վոր կռվով անցել է վողջ Ռուսաստանը՝ սկսած ցուրտ Կամայից մինչև դեղին քամիներից մոխրացած Բաքուն:

Աջից ինչ-վոր մի տեղ առկայծեց ու անհետացավ խարույկի մի կրակ— դուցե սպիտակներն են, դուցե և Կոժեվնիկովի ջոկատներից մեկն է, վոր Կամայի ծիլ ափը խճճող ու անանցանելի թփուտի միջից յերբեմն հանկարծակի դուրս գալով «Մեժենի» դեմ՝ հարվածում է սպիտակների խոր թիկունքը:

Արշալույսի առաջին ճառագայթներից այս ափերը անսովոր գեղեցկություն են ստանում: Կաման Սարապուլի մոտ լայն է, խոր, հոսում է կավե դեղին ու ծիլ ափերի միջով, կղզիների արանքում յերկու մասի յե բաժանվում, յուղապատ հաստ յերեսին կրում է յեղևնիների անդրադարձումը, և այնքա՜ն ազատ է, և՛ այնքա՜ն հանգիստ: Անաղմուկ ականակիրները գետի կախարդված հանգիստը չեն խանգարում:

Ծանծաղուտների մեջ հաբյուրավոր կարապներ տարածում են հոկտեմբերի ուշ ծագած արևից թափանցված թևերը:



Մանրագնդակի բարակ ամպի պես՝ ջրին մոտիկ բադեր են սլանում և հեռու՝ սպիտակ յեկեղեցու գլխավերևը մի արծիվ է ճախրում: Ու թեև դիմացի մարգա-

պատ ափը թշնամին բռնել է— կարճարուս թփուտներից կրակոցի վոչ մի ձայն չի լսվում: Ըստ յերևույթին մեզ այդ տեղերում չեն սպասել և ժամանակ չեն ունեցել պատրաստվելու:

Մեքենական բաժնից մինչև գոտկատեղը դուրս է ցցվում մրոտ ու գունատ մոտոռավարը և, յերեսի սևությունն ու քրտինքը սրբելով՝ հաճույքով ծծում է մի գիշերվա մեջ աշնանային ու հյուսիսային դարձած առավոտյան սուր օդը:

Կամրջակին կանգնած՝ խճճված ու ամրակազմ, ալեխառն մազերով, փոշխարի մուշտակի մեջ կոլոլված ու դեմքի տպավորություն թողնող լոցմանը վաղաժամ սառնամանիք է գուշակում— «ձյունի հոտ է գալիս, օդից ձյունի հոտ է գալիս» ու նորից լուռ ծանծաղուտների դավաճան ալեկոծությունների, մառախուղի ու քարերի մեջ փնտռում է նավերի նեղլիկ ճանապարհը: Այդ գիշեր հարյուր վերստից ավելի յենք կտրել, և ահա հեռվից յերևում են յերկաթուղու ժանեկաձև կամուրջն ու Սարապուլի սպիտակ կատարները: Անձնակազմը հանգստանում է, ծոբակի տակ լվացվում է, դագաղեցնում է յերկու սև շան լակոտի, վորոնք մեծ սիրով խնամվել են թընդանոթի կրակոցների ու անընդհատ արշավանքների մեջ:



Դիտողի սուր աղաղակ. «Ձախ ափին մա՛րդ է յերևում»,— ու նորից լարված սպասում: Բայց նրանք, ափի մարդիկ, մեզ արդեն տեսել են, և կարմիր քաթաններն օդի մեջ ուրախ պարում են: Իսկ նրանից դենը— ափին ու կամրջակին, և ավազե ծածկարանի հետևը— կարմիր դրոշակներն են բռնկում ու թրթռում: Գորշ գրատ հագած հետևակների փոքրիկ կերպարանքներ են ափին վազվզում, ձեռքով անում, աղաղա-



կում ու դեպի ականակիր յերկաթե տախտակամածն ինչվոր օրհնանքի վողջույններ նետում:



Կամուրջն անցանք, դարձանք դեպի ձախ, վերջին նավի հետևից, վոր վայելուչ զորասյունով է գնում, արդեն ճրճռում է հրացանաձգությունը: Այդ սպիտակներն են գնդակոծում կամրջի պահպանությունը, վոր հավաքվել եր մեր տորմիղի անցնելը տեսնելու:

Հեռադիտակից պարզ յերևում է Սարապուլի առափնյա փողոցը, վորտեղ Ազինի դիվիզիան է բանակել, Սարապուլի, վոր սպիտակները չորս կողմից պաշարել են և, վերջապես, շնորհիվ նավատորմի գալուն, միացած է ցածում յեղող բանակների հետ:

Կիպ մոտենում ենք: Տանիքին՝ լողան, բազրիքներին, ճանապարհին՝ կարմիր բանակայիններ, կըրծքաբաց յերկար խալաթներ, թաշկինակներ ու միրուքներ և այս բոլորը— խնդագին զարմացած— մերն է, բարեկամական: Նվագախումբը բլրակի վրա մարսելյոզ է հնչեցնում. թմբուկը՝ նավերին նայելուց տարվելով,

ներդաշնակության մեջ ճեղքվածք է առաջացնում, յերաժշտափողը գայրացած դիրիժորից շատ առաջ է վազում, ամպրոպային գեղգեղումներով ցնծագին նըվագում, առանց վորևէ բանի վրա կանգ առնելու, ինչպես ձիավորին վայր գցած ձին: Պարաններն արդեն բռնել են, և նավը սահուն կերպով կպավ նավահանգըստին: Նավաստիները դուրս թափվեցին ափ, և ծայր առան խոսակցությունները:

— Դուք նրանց միջից բա վո՞նց անցաք: Նրանց նավերը վոչնչացրի՞ք:

— Համ վոչնչացրինք, ախպե՛ր ջան, համ լցրինք Սպիտակ գետը:

— Խաբում ես:

— Չեմ խաբում:

Ամբոխը ճեղքելով գալիս է դեռևս յերիտասարդ մի կին՝ արցունքի մեջ վողողված:«Նավաստուհի» յե,– ասում են այս ու այն կողմից: Յեվ նոր սուգ ու շիվան է սկսվում: Մոր ու կնոջ լաց, սիրտ մորմոքող ու միապաղաղ վայնասուն:

— Իմիս ապրանքանավով են տարել, ապրանքանավով են թռցրել: Ձեր պես նավաստի յեր:

Թաշկինակավորը մի նավաստուց մյուսին է վազում, արցունքից կուրանում, շոյում է բաճկոնների խորդուբորդ թևքերը, իր վերջին այս հիշատակը: Ե՜հ, կռիվը դաժան բան է, քաղաքացիականը՝ սարսափելի: Վորքա՜ն գիտակցական, ինտելիգենտական, սառը դաժանություն կարողացան անել նահանջող թշնամիները:

Չիստոպոլը, Յելաբուգան, Չելնին ու Սարապուլը— բոլոր այս վայրերն արյան ծով են դարձել, համեստ գյուղերը հեղափոխության պատմության մեջ հրեղեն տառերով են գրվել: Մի տեղ Կամա գետն եյին նետում կարմիր բանակայինների կանանց ու յերեխաներին, չեյին խնայում նույնիսկ ծծկերներին: Մի ուրիշ տեղ— ճանապարհի վրա մինչև որս կարմրին են տալիս արյան չորացած լճակներ և նրանց շրջապատող աշնանային թղկիների սքանչելի կարմրությունը կոտորածի հետք է թվում:



Այս պանդխտների կին ու յերեխաները վոչ արտասահման են փախչում, վոչ ել հետո մեմուարներ են գրում պապենական տունը հրդեհելու, Չեկայի կատարած չինական վայրագությունների մասին: Յերբեք և վոչ վոք չի իմանա, իլուր ամբողջ Յեվրոպայի վոչ վոք չի թմբկահարի Կամայի բարձր ափին գնդակահարված զինվորների մասին, վորոնց հոսանքը թողել է տղմուտ ծանծաղուտներում, գամել է անկենդան ափին: Մի՞թե յեղել է մի որ,— մտաբերեցե՛ք դուք՝ «Ռաստորոպնու», «Պրիտկու» և «Ռետիվոյի» նավերի վրա յեղածները, «Սերյոժա մարտկոցի», «Վանյա-Կոմունիստ»-ի վրա յեղածները, մեր բոլոր յերկաթապատ, անճոռնի կրիաների վրա յեղածները,—մի՞թե յեղել է գեթ մի որ, վոր ձեր նավի մոտից չանցներ դրատի այդ լուռ ու մունջ թիկունքը, զինվորի այդ ծոծրակը՝ այնքան կարճ ու նոսր մազերով (բոլորը տիֆից հետո) ու ջրի յերեսին պար յեկող՝ մերթ յերեսը թաքցնող, մերթ տակն իջնող ձեռքով:Մի՞թե Կամայի վրա յեղել է մի տեղ,վոր ձեր յեկած րոպեյին ցավից չգայլին,վորտեղ ափին, բախտավորների ու խելակորույսների մեջ, վորոնք այնքան անշնորհք կերպով(չէ՞ վոր բանվորները ծովագնացներ չեն) ընդունում եյին ձեր պարանները, տասնյակ վորբացած այրիներ և բանվորների կեղտակոլոլ, թույլ ու քաղցած յերեխաներ չլինեյին:Մտաբերեցե՛ք այն վայնասունը, վոր խարսխաշղթայի շառաչն անգամ, սրտի կատաղի տրոփյունն անգամ, լարվածությունից կարմրած՝ գործկոմի նախագահի զիլ ձայնն անգամ չեյին կարողանում խեղդել, այն ձայնը, վոր կես վերստ հեռվից կանչում եր ձեզ, թե՝ «Կարմիրները Սամարան գրավել են»...

Այդ ժամանակ առաջին կնոջը մոտեցավ յերկրորդը՝ բոլորովին պուճուրիկ ու պառավ: Նրա դեմքը վշտի միևնույն հետքերն է կրում:

— Մի՛ լա, ենպես պատմիր, վոր բան հասկացվի:

Յեվ մայրը պատմում է, բայց նրա բառերը լաց ու կոծի մեջ խեղդվում են: Բան չի հասկացվում:

Ահա թե բանն ինչ է. Նահանջելիս սպիտակները մերոնցից վեց հարյուր հոգի բարձում են ապրանքա-

նավին ու տանում, թե ո՞ւր, վոչ վոք չի իմանում, կարծես՝ Ուֆա, գուցե և դեպի Վոտկինսի գործարանը:

Մի ժամից հետո շչակի զիլ ձայնը նավահանգստում է հավաքում ցրված նավաստիներին, և հրամանատարը նոր հրաման է տալիս. Նավատորմը գետն իվեր գնում է կալանավորներ տանող ապրանքանավը փնտռելու: Յեվ անձնակազմին շտապեցնելիս, մի տեսակ առանձին հստակությամբ կրկնում է.

— Վեցհարյուր հոգի, ընկերնե՛ր:

## II

Նրանք մեզ չեյին սպասում. խրամատներ, լարափակոցներ, ուղեկալներ— գետն այս բոլորը չեր թաքցնում և յերևում են այնպես, ինչպես ափսեյի մեջ: Ափի յերկարությամբ դանդաղ սահելով՝ ականակիրները հարմար տեղ ընտրեցին, ու կոմենդորները նշանակետ են փնտռում: Կայուտ-կամպանիայի (հրամկազմի նավասենյակ) դուռը կիսաբաց է դեպի վառոդի պահեստը, և այնտեղից արագ-արագ արկեր են տալիս դեպի վեր: Լսվում է հրամանը.

— Համազա—ա՛րկ:

Կրակի շիթը ցայտում է փողաբերանից, դատարկ պարկուճը մետաղի նուրբ զնգոցով վայր է ընկնում, և տաս-տասնհինգ վայրկյանից հետո թշնամու փախչող շղթայի մեջ ծխի գորշ-մոխրագույն ու սև շատրվան է բարձրանում: Կրակավարը նշանը փոխում է.

— Յերկո՛ւսն ավելի, մեկը՝ ձախ, համազա—ա՛րկ:

Ահա «Ռետիվո»-յից ել կրակ բացին, և «Պրոչնի»-ն ղեկային թնդանոթից յեկեղեցին հրդեհեց:

Ոգտվելով ընդհանուր շփոթից՝ մենք լուսով կըհասնենք Գալյանի (Սարապուլից յերեսունհինգ վերստ վերև):

Տաս վերստաչափ մի անցում ևս, և մենք արդեն նպատակին մոտ ենք: Կարմիր դրոշներն իջեցված են, վորոշված է բոլորին հանկարծակի բռնել, ցույց տալով, վոր նավատորմն սպիտակ գվարդիական է— ադ-



միրալ Ստարկի: Կզզյակի հետևից ու Կամայի վոլորանից նավերը թափով դուրս են գալիս Գալյանի նավահանգստի առաջ, սարի լանջին փռված գյուղն անց են կենում, վորի վերևից պտույտ են տալիս թեքվում— չափազանց դժվարին մի խաղ՝ այսպիսի նեղ ու ծանծաղ տեղում:

— Առանց հրամանի կրակ չտալ,— հաղորդում է նշանարարը մի ականանավից մյուսին:



Դրությունն այսպես է. քսան-յերեսուն սաժենի վրա՝ ափին, յեկեղեցու մոտ պարզ յերևում է վեցդյույմանոց մի ծանր թնդանոթ: Քիչ այն կողմ՝ բլրակի վրա՝ բազմաթիվ հետաքրքրվող գյուղացիներ և նրանց մեջ՝ զինվորների զինված խմբեր: Զանգակատան վրա՝ յերկրորդ թնդանոթը, կարող է և գնդացիր լինել: Ձախ ափին մի ապրանքանավ՝ սպիտակ գվարդիական դեսանտով: Թփերի միջից ճամբարի սպիտակ վրաններ են յերևում, ու փռվում է շարժական խոհանոցների բարակ ծուխը, և, զինվորները հանգստանալով, պառկած են ափին, հետաքրքրությամբ հետևելով ականանավերի մանյովրներին: Իսկ գետի մեջտեղը պահակի հսկողությամբ լողացող մի ամբողջ գերեզման՝ լուռ ու անշարժ:

«Պրիտկի»-ի ռուպորը գործողության կարգը կիսաձայն հաղորդում է մյուս նավերին: «Ռետիվին» մոտենում է ապրանքանավին և, առանց իրեն մատնելու, համոզվում է թանկագին ու կենդանի բեռան գոյությանը: «Պրիտկի»-ն հրանոթներն ուղղում է վեցդյույմանոց թնդանոթների վրա, վոր տեղից թշնամուն,

շարժվելուն պես, մոտիկից ջարդ ու փշուր անի, բայց միաժամանակ հսկում է նաև հետևակին:

Բայց թե ի՛նչպես պիտի քաշեն ապրանքանավի խարիսխը, ի՛նչպես պիտի նավը դուրս բերեն ծանծաղուտների, կղզիների ու ավազակույտերի առաջացրած այդ թակարդից: Բարեբախտաբար հենց այստեղ՝ նավահանգստի մոտ ծխում է թշնամու «Թասսվետ» բուքսիրը: Ծովային սքանչելի գլխարկ կրող մեր սպան բուքսիրի կապիտանին անբողոքարկելի հրաման է տալիս.

— Նավատորմի հրամանատար ադմիրալ Ստարկի անունից հրամայում եմ ձեզ՝ հասնել կալանավորներ տանող ապրանքանավին, բուքսիրի վերցնել և Սպիտակ գետի վրայով մեր հետևից գալ Ուֆա:

«Թասսվետի» կապիտանը, վորին սպիտակներն ընտելացրել են անտրտունջ հնազանդվելուն, իսկույն ևեթ հրամանը կատարում է. հասնում է ապրանքանավին ու բուքսիրի վերցնում: Անչափ դանդաղ են ընթանում այդ րոպեները, մինչև վոր ծանրաշարժ նավը խռիկաձև անիվներն աղմկով շրմփացնելով մոտենում է ապրանքանավին, պարաններն ամրացնում, ծխում ու շոգի յե հավաքում: Մեր նավի խումբը քարացել է, մարդիկ սարսափելի գունատ են, և՛ հավատում են, և՛ չեն համարձակվում չհավատալ այս ճշգրիտ հեքիաթին, այդ դատապարտված ապրանքանավին, վոր այդքան մոտ է ու դեռ անչափ հեռու: Փսփսալով հարցնում են իրար.

— Ի՞նչպես է, շարժվո՞ւմ է, թե՞ չէ: Ո՞ւր է, չի շարժվում:

Բայց կապիտանի խիստ բացականչությունից սարսափահար յեղած «Թասսվետը» հրաշալի կերպով կատարում է իր դերը: Ապրանքանավի վրա շարժում է նկատվում: Ինքը՝ պահակապետն ու իր խումբը հրացանները վայր դրել— օգնում են խարիսխը քաշելուն: Ցեվ ծանր հսկան հավասարակշռությունից կամաց-կամաց դուրս է գալիս, քիթը դժվարությամբ ծռում է, պիրկ պարանները թուլանում են ու նորից քաշվում են



իրենց համառ ուղեկցուհուն: «Գրիտկին» վերջնականապես հանգստացնում է հուզված բանտապետներին:

— Հրամանատարի անունից հրամայում եմ ձեզ կատարյալ հանգստություն պահպանել, մենք առջևից կգնանք ու ձեզ կուղեկցենք:

— Մեր վառելափայտը քիչ է,— փորձում են առարկել «Թասսվետից:

— Վոչի՛նչ, ճանապարհին կվերցնենք,— պատասխանում է նավատորմի հրամանատարը, և ականակիրները, ափից դիտող սպիտակ գվարդիականների մեջ կասկած չառաջացնելու համար, առանց շտապելու ըսկըսում են հեռանալ դեպի Սարապուլ:

Իսկ այնտեղ՝ ապրանքանավի նկուղում արդեն հուզմունք է սկսվել— «Ի՞նչու յեն տանում, ո՞վ է տանում և ո՞ւր»: Հատակի սիրտ խառնող կեղտի միջով նավի հետևի կողմն է դուրս գալիս մի կալանավոր նավաստի: Այնտեղ, հաստ տախտակի մեջ դրչահատով մի փոքրիկ ծակ է արված, միակ լուսանցքը, վորտեղից ամպի ու գետի մի կտոր է յերևում: Նա յերկար և ուշիուշով հետևում է խորհրդավոր նավերին ու նրանց լուռ խմբին: Նրա դեմքին հույսի մի ճառագայթ կամ նոր յերկյուղ կարդալիս, շրջապատի աղավաղված դեմքերը մի ընդհանուր, անկենդան ու անշարժ դեմք են թվում:

— Չե՞ վոր նրանք բոլորն էլ միանման են՝ գորշ, յերկար: Սպիտակ գվարդիակա՞ն են, թե վոչ: Ուշադրությամբ նայիր, շո՛ւտ նայիր:

— Չե՛:

—Էլ ի՞նչ չե, սարսաղ:

Դիտողը տաբուրետից ցած է թռչում:

— Նրանք այդպիսի յերկաթապատներ չունեն, եդ մերոնք են, եդ բալթյաններ են, վրան նավաստիներ կան:

Բայց յերեք շաբաթ նկուղում անցկացրած, իրենց սեփական արտաթորանքի վրա քնած ու կերած, մերկ ու միմիայն փսխաթների մեջ փաթաթված թշվառները չեն համարձակվում հավատալ:

Դեռ Սարապուլում, յերբ նրանց վողջունող բազ-

մությունը նավահանգստում աղմկում էր ու լալիս, երբ նավաստիներն սպիտակ գվարդիական պահակին կալանավորեցին ու զզվելի նկուղն իջնելու համարձակություն չունենալով՝ կալանավորներին դուրս էին կանչում այդ գերեզմանից— դեռ այն ժամանակ անեծքով ու տնքոցներով էին պատասխանում: Չորս հարյուր յերեսուն յերկուսից վոչ վոք չեր հավատում փրկության հնարավորությանը: Չե՞ վոր դեռ յերեկ պահակները մի կտոր հաց ու մի թեյնիկ տալիս— նրանց վերջին շապիկն էին ձեռքներից առնում: Յերեկ լուսադեմին ընդհանուր կամերայից յոթ նիզակների վրա քարշ տվին Կրասնոպերով յերեք յեղբոր հոշոտված դիակներն ու ելի քանյոթ մաղ: Արդեն քանչոր ժամ է, ինչ առաստաղի միակ անցքից հացի կտոր, յերեք չաբաթ նրանց քաղցը հագեցնող միակ կերակուրը (մարդուն մեկ քառորդ), գցող չի յեղել:

Դադարել են կերակրելուց— ուրեմն՝ չարժե նույնիսկ փշրանքները ծախսել դատապարտված հոտի վրա, ուրեմն՝ գիշերը կամ առավոտյան գորշ, անարյուն ժամին բոլորի վերջը կգա, բայց անչափ ծանր վերջը: Յեվ, հանկարծ բերին, դեպի գիշերային յերկինքը մոխրագույն ու արծաթանման ծակ բաց արին և բոլորին վերև են կանչում տարորինակ, սարսափելի հուզված ձայներով, և ի՛նչ անունով են կանչում— արգելված, հալածված «ընկեր»: Դավաճանություն չի՞ արդյոք, թակարդ չի՞ արդյո՞ք, նոր խորամանկություն չի՞:

Բայց և այնպես արտասվաթոր, դողալով, իրար հետևից նրանք մեռելներից հարություն առան: Ի՞նչ էր կատարվում այստեղ՝ տախտակամածի վրա: Միքանի չինացի, վոր այս ցուրտ յերկրում վոչ վոք չունեն, նավաստու վոտքերն ընկան և բառաչելով ու մեզ համար խորթ լեզվով ինչ-վոր բացականչություններով հարգանք և անսահման անձնվիրություն հայտնեցին մեկը մյուսի համար մեռնող մարդկանց յեղբայրությանը:

Առավոտյան զորքն ու քաղաքը դիմավորում էին կալանավորներին: Բանտը մոտեցրին ափին, հեռահար





հրանոթներով զինված՝ յերկաթե հսկա ապրանքանավ «Ռազինի» սանդուղքն իջեցրին, և նավաստիների կենդանի պատի արանքով չորս հարյուր յերեսուն յերկու յերերուն, փրչոտ ու գունատ մարդ ափ իջան։ Փրսխաթների, փափախների, գդակների, ծղոտից վոլորած գլխարկների շարանը մի տեսակ ֆանտաստիկ տեսք եր տալիս են աշխարհից յեկողների թափորին։ Յեվ ամբոխի մեջ, վոր այն տեսարանից դեռ ցնցված եր, արդեն սքանչելի մի հումոր ե արթնանում։

— Եդ ո՞վ ե ձեզ եդպես զարդարել, ընկերնե՛ր։

— Տե՛ս, տե՛ս, են էլ սահմանադիր ժողովի տարազ ե. մարդուն մի-մի խսիր, մի-մի պարան էլ՝ վիզը գընելու համար։

— Վոտս մի՛ տրորի, տեսնում ես, վոր մատներս դուրս են յեկել։— Յեվ ցույց ե տալիս կեղտոտ լաթերով փաթաթած վոտը։

Դեռ չմոտեցած ափին՝ խզզած ձայներով նրանք սկսեցին մարսելյոզ յերգել։ Յեվ այս յերգը մինչև բուն հրապարակը հասնելը չեր դադարում։ Այստեղ կալանավորների ներկայացուցիչը վողջունեց Վոլգայի նավատորմի ծովագնացներին, նավատորմի հրամանատարին ու խորհրդային իշխանությանը։ Ռասկոլնիկովին ձեռքերի վրա տարան մի ճաշարան, վորտեղ տաք կերակուր ու թեյ եր պատրաստված։ Աննկարագրելի դեմքեր, բառեր, արցունքներ, յերբ հորը, յեղբորը կամ վորդուն գտած մի ընտանիք նստում ե նրա մոտ, քանի դեռ նա ճաշում ու պատմում ե իր գերությունից, հետո, հրաժեշտ տալով, գնում ե ծովագնաց ընկերների մոտ՝ փրկության համար շնորհակալություն հայտնելու։

Նավաստիների ամբոխի մեջ առկայծում են այն մի բուռն սպաների վոսկեկար գլխարկները, վորոնք կատարել են Կազանից Սարապուլ հասնող ամբողջ յեռամսյա յերթը։ Վաղուց ե, կարծեմ, ինչ այդպիսի անսահման հարգանքով, յեղբայրական այդպիսի սիրով չեյին



դիմավորել նրանց, ինչպես այդ որը։ Յեվ յեթե ինտելիգենցիայի ու մասսաների միջև յեղած վոգու, սխրագործության ու զոհաբերության մեջ հրաշքով կատարված միասնություն կա, ապա այդ ծնունդ ե առել այն ժամանակ, յերբ բանվորների մայրերը, կանայք ու յերեխաները որհնում եյին նավաստիներին և սպաներին իրենց վորդիները՝ մահապատժից ու տանջանքներից ազատելու համար։





# Մ ա ր կ ի ն

Ամեն տարվա «Մեժեն» դրոշակակրի նավի գոհ ու ժպտերես բոցմանը զեկուցում էր ուղարկում Կամայի բարեխառնության նվազելու մասին:

Այսօր ջերմաչափը կանգ առավ աստիճանացույցի կիսին, ոգի մեջ զերո յե: Հոսանքի հետ հատ ու կենտ սառուցներ են լողում, ջուրը թանձրացել ու դանդաղել է, յերեսին մշտական մառախուղ է ծխում— սառնամանիքի ճշգրիտ նախակարապետը: Նավերի անձնակազմերը, որ Կազանից Սարապուլ ամբողջ դժվարին կամպանիան կատարել վերջացրել են, պատրաստվում են ձմեռելու. Նրանք ցնծության մեջ են և յերևակայությամբ ճաշակում են հանգիստը: Մի յերկու օր ևս, և նավատորմը կհեռանա Կամայից մինչև յեկող գարուն:

Յեվ միայն այժմ, յերբ ակամա նահանջի ժամը մոտ է, որքա՜ն թանգ, որքա՜ն անմոռանալի յեն դարձել թշնամուց խլած այդ ափերը, գետի ամեն մի ոլորանը, ծիլ ապառաժների գլխին դամված ամեն մի փրչոտ յեղևնին:

Սպասումի որքա՜ն դժվարին ժամեր, որքան հույս ու սարսափ— ոչ թե իր համար, ինհարկե, այլ մեծն տասնութ թվի համար, որի բախտը յերբեմն



կախված էր լինում դիպուկ կրակոցից, հետախուզի արիությունից: Հաղթանակի որքա՜ն ուրախ ժամեր են մնալու այստեղ՝ Կամայի վրա: Սառույցը կսեղմի ափերից ծեծված, բարձր նավակողերից գծված դաժան ջրերը, սառույցը մեզնից ընդմիշտ կթաքցնի այն գրերը, որ մեր լավագույն ընկերների ու անողոք թշնամիների գերեզմանն են դարձել:

Ո՞վ գիտի, թե ո՛ւմ դեմ և ո՛ր ջրերում ստիպված կլինենք մի տարուց հետո կռիվ սկսել, ի՛նչ ընկերներ կբարձրանան մեզանից ամեն մեկին այնքա՜ն ծանոթ ու թանկագին նավերի զրահապատ կամրջակների վրա:

Անիվները ծանր դղրդացնելով և մթության մեջ՝ կայմի վրա բարձր օրորելով ազդանշանի լապտերը՝ «տրանսպորտավորներից» մի նավ Նիժնի յե գնում:

Մնացած նավերը հեռացող ընկերոջը ճանապարհ են դնում շչակների կցկտուր վռնոցով, որ յերկար ժամանակ չի լռում. ամեն մի վռնոցն ընկերոջ ձայնի պես ծանոթ է: Ահա «Ռոշալի» սուր ճիչը, ահա «Վոլոդարսկու» կարճ ու ականջ ծակող սուլոցը, ահա «Ընկեր Մարկինը» իր կրծքային, խլացուցիչ շչակով:

Մեզ համար ամենածանր հիշողություններ են կապված ծովագնացների այս հրաժեշտի վողջույնի հետ: Նրան են դիմում ծայրահեղ վտանգի մեջ գտնվող նավերը:

Այսպես էր օգնության կանչում թշնամու արկից հրդեհված դժբախտ «Կոմունիստ Վանյա»-ն, որ ղեկը կոտրած, հեռագիրը կտրված, լափիններով շրջապատված՝ բոցավառվում էր գետի սառցաջրերի մեջ: Որքա՜ն յերկար, որքա՜ն անդադրում աղաղակում էր նրա շչակը:

Նրա շուրջը ջրի շատրվաններն ավելի ու ավելի հաճախ էյին բարձրանում, ջրի յերեսին արդեն սև կետեր էյին յերևում ու թաղնվում— դեպի ափ լող ընկած մարդիկն էյին դրանք, և հոսանքը դեպի ներքև էր տանում այրված տաշեղներ, ինչ-որ դույլեր, տաբուրետներ, իսկ շչակը չէր լռում ու չէր լռում— գոլորշու մեջ կորած, կրակից տոչորված, խելակորույս, մահվան



## Մարկին

Ամեն առավոտ «Մեժեն» դրոշակակրի նավի գոհ ու ժպտերես բոցմանը զեկուցում էր ուղարկում Կամայի քարեխառնության նվազելու մասին:

Այսօր ջերմաչափը կանգ առավ աստիճանացույցի կիսին, ոդի մեջ զերո յե: Հոսանքի հետ հատ ու կենտ սառույցներ են լողում, ջուրը թանձրացել ու դանդաղել է, յերեսին մշտական մառախուղ է ծխում— սառնամանիքի ճշգրիտ նախակարապետը: Նավերի անձնակազմերը, վոր Կազանից Սարապուլ ամբողջ դժվարին կամպանիան կատարել վերջացրել են, պատրաստվում են ձմեռելու. Նրանք ցնծության մեջ են և յերևակայությամբ ճաշակում են հանգիստը: Մի յերկու որ ևս, և նավատորմը կհեռանա Կամայից մինչև յեկող գարուն:

Յեվ միայն այժմ, յերբ ակամա նահանջի ժամը մոտ է, վորքա՛ն թանգ, վորքա՛ն անմոռանալի յեն դարձել թշնամուց խլած այդ ափերը, գետի ամեն մի վոլորանը, ծիլ ապառաժների գլխին դամված ամեն մի փրչոտ յեղեվնին:

Սպասումի վորքա՛ն դժվարին ժամեր, վորքան հույս ու սարսափ— վոչ թե իր համար, իհարկե, այլ մեծն տասնութ թվի համար, վորի բախտը յերբեմն



կախված եր լինում դիպուկ կրակոցից, հետախուզի արիությունից: Հաղթանակի վորքա՛ն ուրախ ժամեր են մնալու այստեղ՝ Կամայի վրա: Սառույցը կսեղմի արկերից ծեծված, բարձր նավակողերից գծված դաժան ջրերը, սառույցը մեզնից ընդմիշտ կթաղցնի այն գրերը, վոր մեր լավագույն ընկերների ու անողոք թշնամիների գերեզմանն են դարձել:

Ո՞վ գիտի, թե ո՛ւմ դեմ և վո՛ր ջրերում ստիպված կլինենք մի տարուց հետո կռիվ սկսել, ի՛նչ ընկերներ կբարձրանան մեզանից ամեն մեկին այնքա՛ն ծանոթ ու թանկագին նավերի զրահապատ կամրջակների վրա:

Անիվները ծանր դղրդացնելով և մթության մեջ՝ կայմի վրա բարձր տորոբելով ազդանշանի լապտերը՝ «տրանսպորտավորներից» մի նավ Նիժնի յե գնում:

Մնացած նավերը հեռացող ընկերոջը ճանապարհ են դնում չչակների կցկտուր վոռնոցով, վոր յերկար ժամանակ չի լռում. ամեն մի վոռնոցն ընկերոջ ձայնի պես ծանոթ է: Ահա «Բոչալի» սուր ճիչը, ահա «Վոլոդարսկու» կարճ ու ականջ ծակող սուլոցը, ահա «Ընկեր Մարկինը» իր կրծքային, խլացուցիչ չչակով:

Մեզ համար ամենածանր հիշողություններ են կապված ծովագնացների այս հրաժեշտի վողջույնի հետ: Նրան են դիմում ծայրահեղ վտանգի մեջ գտնվող նավերը:

Այսպես եր ոգնության կանչում թշնամու արկից հրդեհված դժբախտ «Կոմունիստ Վանյա»-ն, վոր ղեկը կոտրած, հեռագիրը կտրված, լափիններով շրջապատված՝ բոցավառվում եր գետի սառցաջրերի մեջ: Վորքա՛ն յերկար, վորքա՛ն անդադրում աղաղակում եր նրա չչակը:

Նրա շուրջը ջրի շատրվաններն ավելի ու ավելի հաճախ եյին բարձրանում, ջրի յերեսին արդեն սև կետեր եյին յերևում ու թաղնվում— դեպի ափ լող ընկած մարդիկն եյին դրանք, և հոսանքը դեպի ներքև եր տանում այրված տաշեղներ, ինչ-վոր դույլեր, տաբուրետներ, իսկ չչակը չեր լռում ու չեր լռում— գոլորշու մեջ կորած, կրակից տոչորված, խելակորույս, մահվան

սարսափելի շչակը: Տարօրինակ ու անակնկալ կերպով վրա հասավ այդ աղետը:

Դեռ նախորյակին ռազմական նավատորմն զգալի հաղթանակ տարավ սպիտակ գվարդիական նավատորմի դեմ. Բիտկի գյուղի տակ յերկու որ ճակատելուց հետո վերջինս դեպի վեր պետք է փախչեր, և մեր նավերն անցան յերկու ափին բանակած սպիտակների թիկունքը: Հետապնդումը ամբողջ մի որ ևս շարունակվեց, և միայն յերրորդ առավոտը նավատորմը խարիսխ գցեց Կամայի կապույտ, փիրուզե ու սաթի նման ջրերի սքանչելի ու ընդարձակ մարմանդում՝ նոյեմբերի պայծառ արևի տակ:

Վորոշված եր միաժամանակ կանգ առնել և սպասել դեսանտի գալուն, վորովհետև հետախույզները հուզիչ լուրեր եյին բերել, թե «Պյանիյ բոռ» գյուղի մոտ ափերն ուժեղ կերպով ամրացված են, վորոնք առանց մի հետևակի ոգնության, գետից գրավել չեր կարելի: Բացի այդ, արկերի պաշարը բոլորովին նվազել եր, նավերի ու ապրանքանավի վրա մնացել եյին տասնութից—հիսուն արկ: Հետևակին սպասելով, վոր ամեն անգամ ել շատ ուշանում եր, մոտավոր կատերները գնացին հետախուզության, իսկ նավաստիները հեռվից հաճույքով դիտում եյին փրփրի ամպերի մեջ հազիվ նշմարվող, աներևակայելի արագնթաց, սլացող մարմիններ, վորոնց վրա սպիտակները բոլորովին անպատակ ու փոթորկային կրակ եյին բացել:

Արկերից առաջացած բարձր ջրասյուների մեջ հրբեղեն մի աղեղ եր խաղում, և գետի վրա րոպեն մի անգամ փրփրակալ, ձյունի պես սպիտակ ու փայլուն շատրվաններ եյին բարձրանում ու հալվում: Ծանծաղուտից սարսափահար կարապների մի յերամ բարձրացավ, նրա մոտից մի հիդրոպլան վազ տվեց ու ճչաց, և ոդը լցվեց կարապների ճիչով, սպիտակ թևերի թրթռոցով ու պտուտակի մեղվային դժժոցով:

Մարկինն ել չդիմացավ: Մարկինը, վոր «Կոմունիստ Վանյա» լավագույն նավի հրամատարն եր, վտանգին ընտելացած, վտանգի վրա սիրահարված, պա-



տանու պես, չկարողացավ հեռվից դիտել այդ առավոտվա մարտական խաղը:

Նրան գրգռում ու հրապուրում եյին խորհրդավոր լռությունը պահպանող՝ թե՛ «Պյանի բոռ»-ի ավազուտ դարափուլը, թե՛ թաքնված թփուտը, թե՛ ափին, ինչ-վոր մի տեղ պահված, համբերությամբ սպասող մարտկոցը:

Թե ի՛նչպես խարիսխը քաշեցին, թե ի՛նչպես սահեցին արգելված ափի յերկարությամբ, թե ի՛նչպես կարողացան գնալ—հեռանալ իրենց կայանից, վոչվոք լավ չի հիշում: Յեվ հանկարծ շատ մոտիկ, համարյա իր առջև, Մարկինը նկատեց ծածկարանն ու նրա հետևում՝ անշարժ, դեպի իրեն ուղղված փողաբերանները:

Մի նավն առանձին մարտկոցի դեմ կռվել չի կարող, բայց հաղթանակից հետո այդ առավոտն այնքան արբեցուցիչ եր, այնքան խելաժաժ, վոր «Կոմունիստ»-ը չնահանջեց, չթաքնվեց, այլ գրգռիչ կերպով մոտեցավ ափին՝ գնդացրով ցրիվ տալով հրանոթների սպասավորությունը: Քաջերի խելահեղությունը մենք գովերգում ենք: Բայց այս անգամ Մարկինի կործանումը կանխորոշված եր:

«Կոմունիստին», վոր շատ եր առաջ գնացել, ոգնության յեկավ «Պրիտկի» ականակիրը: Նախազգացումներին կարելի յե չհավատալ, բայց թե ի՛նչպիսի հոգնեցուցիչ հուզմունքով եյին բռնված բոլոր նրանք, ովքեր «Պրիտկու» կամրջակի վրա եյին: Սարսափ չի այդ— այդ զազիր հիվանդությանը վոչ վոք յենթակա չի յեղել—բայց մի տեսակ առանձին, միակ, սրտաճմլիկ սպասելիք, վոր յես ինքս ել անձամբ ունեցել եմ, յերբ ականակիրն առանց վորևե կասկածի մոտենում եր «Կոմունիստ»-ին:

Նավից-նավ տեղի ունեցող կարճ խոսակցությունը Մարկինի համար վերջինը յեղավ: Տորմհրամը (նավատորմի հրամանատար) մեգաֆոնով հարցրեց.

— Մարկի՛ն, դուք ո՞ւմ վրա յեք կրակում:

— Մարտկոցի վրա յենք կրակում:

— Վո՞ր մարտկոցի:

— Ա՛յ, են՝ ցախերի յեանի, տեսնո՞ւմ եք, փողաբերանը պսպղում ե:

— Իսկույն ևեթ ամբողջ թափով նավը հետ տվեք:

Բայց արդեն ուշ եր: Ականակրի մեքենան հենց նոր եր կատաղի թափ արել դեպի յետ, «Կոմունիստ»-ը հազիվ եր հեռացել նրան, յերբ սպիտակներն զգալով, վոր վորսը ձեռքներից փախչում ե, կործանիչ կրակ բացին: Արկերը կարկուտի պես եյին թափվում: Պոչին, կողերին, քթի առաջ, չորս կողմից: Նրանք կամրջակի գլխավերևից անցնում եյին կեղևագնդակի պես, սիրտ մաշող վոռնոցով, գլորվելով և օդը ճեղքելով: Յեվ մի քանի րոպեյից հետո «Կոմունիստ»-ը պարուրվեց գոլորշու ամպով, վորի միջից պայթելով դուրս պրծավ վոսկեղեն մի լեզու, և կտրած ղեկով ափից-ափ թավալեց:

Այն ժամանակ չչակն ոգնություն կանչեց:

Չնայած հրետանու սարսափելի կրակին, մենք վերադարձանք դեպի խորտակվողը, հույս ունենալով նրան ել բուքսիրի վերցնել այնպես, ինչպես Կազանի տակ՝ «Տաշկենտը» խորտակվելիս, յերբ մեզ հաջողվեց բուքսիրի վերցնել և կրակի միջից դուրս բերել նրան:

Բայց լինում են ճիգեր, վորոնց ժամանակ ամենաբարձր արիությունն անզոր ե լինում, առաջին իսկ արկը պոկեց «Կոմունիստ-Վանյա»-ի ղեկի պարանն ու հեռագիրը: Նավը վոր վոչ մի ղեկավարություն չուներ, տեղում պտույտ յեկավ, և շատ մեծ ռիսկով մոտեցող ականակիրը չկարողացավ բուքսիրի վերցնել մեռնող նավին:

«Պրիտկին» թափով յետ դառնալով՝ պետք ե հեռանար:

Թե ինչպես այն ժամանակ սպիտակները մեզ ձեռքից բաց թողին, ուղղակի անհասկանալի յե: Կիպ մոտիկից եյին կրակում: Ականակրի ապշեցուցիչ արագությունն ու իր հրանոթների կրակը միայն նրան դուրս բերին ծուղակից: Յեվ տարօրինակ բան. յերկու մեծ վորոր, առանց կրակից վախենալու, յերկար ժամանակ սավառնում եյին ուղղակի ականակրի քթի ա-



ռաջ, ամեն րոպե կորչելով ջրի մեջ ընկնող արկերից բարձրացող լափինների հեռևը:

Այդ մարդկանց թվում, վոր հաջողվեց փրկել, գտնվում եր նաև ընկեր Պոպլեվինը— Մարկինի ոգնականը՝ լռակյաց, արտասովոր համեստության տեր և արի մի մարդ, նավատորմի լավագույններից մեկը. Նա յերկար ժամանակ պահպանում եր դեմքի կապտավուն գունատությունը. Նրա վրա առանձնապես պարզ յերևան եյին գալիս մահվան հետքերը, յերբ աշնանային յերկինքն անամպ փայլում, և ջուրն անվրդով քչփչում եր Կամայի վոսկենման ափերի տակով:

Նա վարձահատույց յեղավ իր ընկերոջ և իր նավի խորտակման համար: Գիշերը, յերբ ամենաուժեղ մարդիկ հոգնում եյին, Պոպլեվինն անաղմուկ բարձրանում եր կամրջակի վրա և, աստղազարդ մութ յերկնքի տակ, մենակ նայում, ականջ եր դնում և իմանում գիշերվա ամենափոքր շարժումը, ու նրա սրբազան վրեժը յերբեք չեր դադարում, չեր թուլանում:

Մարկինին ամբողջ գիշերն սպասում եյինք, Մարկինը չվերադարձավ, և նրա մասին մտահույզ եյին թե՛ ղեկի մոտ կանգնած ու լռակյաց շտուրվալները, թե՛ հրանոթների մոտի նշանառուները, թե՛ իրենց ապակիների մոտ կանգնած դիտողները, վորո՛նք խեղդված արցունքից հանկարծ թվացին պղտոր-ջրանման:

Խորտակվեց Մարկինն իր կրակոտ տեմպերամենտով, թշնամուն ջղայնորեն, գրեթե գազանի հոտառությամբ գուշակելու ընդունակությամբ, իր անզուգ կամքով ու վեհությամբ, կապույտ աչքերով, խիստ հայհոյանքով, բարությամբ ու խիզախությամբ:

Խորտակվեց «Կոմունիստ-Վանյա»-ն: Ականակիրներից շատերի կրակված թնդանոթները համարյա առանց արկի մնացին, իսկ խոստացված դեսանտը չկար ու չկար: Այն ժամանակ մթնշաղի մեջ մոտորավոր կատերի վրա խավար, յերկարավուն, շարք-շարք դարսած չորս առարկայից բրեզենտը յետ քաշեցին:

Ականահատներ, դրոշակակրի նավի շտուրմանն ու հրամանատարը, քարտեզի վրա կռացած, յերկար խորհրդակցում եյին և կաբինետից դուրս գալիս լռա-

կյաց էյին, երբ ձեռք էյին սեղմում, գնացողները՝ առանձնապես ամուր: Տորմհրամը չորս նավաստու և մի սպայի ուղեկցեց դեպի տախտակամածը, և մի քանի րոպեյից հետո, «ձկնիկ» տիպի ականներ բարձած, կործանիչը կտրավ կղզու հետևը:

Կործանիչը վերադարձավ լուսադեմին, պոչին այլևս չէյին յերևում սև, յերկար, բեխավոր դույլերի նմանող ականները: Այժմ մնում եր մի բան՝ հանդիստ սպասել: Յեվ, իսկապես, մյուս օրն սպիտակները, համառարած հարբեցողությամբ տոնելով «Կոմունիստ»-ի խորտակումը՝ հարձակման անցան:

Գալիս էյին նավահետքային զորասյուներով, խանդավառությամբ, ասես՝ զորահանդես էյին գնում: Ինքը՝ ադմիրալ Ստարկը՝ սպիտակ գվարդիական նավատորմի հրամանատարն անձամբ ամենից առաջ մասնակցեց յերթին: Նրա դրոշակն «Որյոլի» վրա յեր ծածանում: Բայց հազիվ հավասարվելով «Կանաչ կղզուն», հանդիսավոր յերթը պետք է կանգ առներ: «Տրուդ» շոգենավը, վոր առաջից եր գնում, հանկարծ կանգնեց, քիթը բոլորովին պոկվեց իրանից—ականներն իրենց բանը տեսել էյին:

Այժմ Կամայի սառցապատ ափերին, համարյա կողք-կողքի, ընկած են յերկու նավի—«Կոմունիստ»-ի և սպիտակ գվարդիական «Տրուդ»-ի այրված ու վառված, փուլ յեկած կմախքները: Յեվ ո՞վ է իմանում, թերևս, գետի անթափանցելի մակերեսի տակ, մութ հատակին, հոսանքն իրար է գամել Մարկինին ու այն անարգներին, վոր գնդացիրներից կտորում, վոչընչացնում էյին նրա խեղդվող խմբին:

Կաման թողնելով, թերևս ընդմիշտ, ծովագնացները յերկար ու գժկամ հրաժեշտ էյին տալիս իրար: Վոչ մի բան այնքան սերտ կերպով չի մոտիկացնում մարդկանց, վորքան միասին անցկացրած վտանգները, կամրջակի վրայի անքուն գիշերները և կամքի ու վոգու այն յերկար, հեռվից աննկատելի, բայց ամենատանջալի ճիգերը, վոր նախապատրաստում, հնարավոր են դարձնում հաղթանակը:



Վոչ մի պատմություն չի կարող գրի առնել և ըստ արժանույն գնահատել այն մեծ ու փոքր սխրագործությունները, վոր Վոլգայի ռազմական նավատորմի ծովագնացներն էյին ամեն օր կատարում: Դժվար թե հայտնի լինի այն մարդկանց անունը, վոր իրենց կամավոր կարգապահությամբ, իրենց անվեհերությամբ ու համեստությամբ ոգնեցին նոր նավատորմ ստեղծելու գործին:

Ահավասիկ հանդիստ, սակավախոս Յելիսեյեվը՝ հրաշալի նշանառուն, վոր հեռահար հրանոթից տասներկու վերստ հեռու դիստանցիայում մի մակույկ վոչնչացրեց, ահա նա՝ իր կապույտ, արտեվանգուրկ աչքերով, վոր արկը պայթելիս են խանձվել և շարունակ հառած են հեռուները:

Ահավասիկ Բարկինը՝ հիվանդ, շարունակ տաքության մեջ, հարբածի աչքերով, վորի կյանքի օրերը հաշված են և վորն արքայավայել վատնում է իր անհոգ, բարի ու անսահման տոկուն վոգու գանձերը:

Այդ նա յեր սպիտակների համար ականադաշտ պատրաստել, վորի վրա հոդս ցնդեց նրանց ամենաուժեղ «Տրուդ» շոգենավը:

Ահավասիկ Նիկոլայ Նիկոլայեվիչ Ստրույսկին՝ Կամայի յերկրորդ կիսե արշավանքի նավատորմի դրոշակակիրի նավի շտուրմանն ու Ոպերատիվ վարչության պետը: Ամբողջ քաղաքացիական կռիվների ժամանակ խորհրդային իշխանության անխարդախ ծառայություն մատուցած՝ լավագույն մասնագետներից ու կրթված ծովագնացներից մեկը: Այնինչ նրան ու միքանի կրտսեր սպայի բռնի կերպով զորակոչել և համարյա պահակի հսկողությամբ են ճակատ բերել: Նրանք «Մեժեն» են յեկել հեղափոխությունն ատելով, բոլշևիկներին ի սրտե համարելով գերմանական լրտեսներ, ազնվարեն հավատալով «Ռեչի», կամ «Բիրժովկի»-ի ամեն մի խոսքին:

Գալուն պես, յերկրորդ առավոտը նրանք մասնակից յեղան ճակատամարտին: Սկզբից՝ ոտար, անարդար, ատելու գործին բռնազբոսիկ կերպով մասնակից արված մարդկանց մութ անվստահություն, սառը քա-

ղեքավարություն։ Բայց առաջին իսկ գնդակից ամեն ինչ փոխվեց։ Հո չի՞ կարելի կիսատ թողնել, երբ խմբի մի խոսքից է կախված տասնյակ մարդկանց կյանքը, որոնք ամեն մի հրաման կուրորեն են կատարում, և ականակրի— մարտական այդ սքանչելի մեքենայի կյանքը։ Ամեն մի նավաստուց մի-մի պողպատե թել է գնում դեպի նավապետի կամրջակը, այն ձայնը, որ հրամայում է մեքենային, արագությանը, ձեռքերի մեջ դողդողացող չտուրվալի անիվին։ Լավ ծովագնացը կռվի մեջ սաբոտաժ անել չի կարող։ Ամեն մի քաղաքականություն մոռացած՝ նա կրակին կրակով է պատասխանում, համառորեն կհարձակվի, փայլուն կերպով կղեկավարի և անվրդով կկատարի իր պրոֆեսիոնալ պարտքը։ Իսկ այնուհետև, իհարկե՝ նա այլևս ազատ չի. Նրան կոմիսարի, խմբի, կայմի կարմիր դրոշի հետ է կապում հաղթողի պարծանքը, ինքնասիրությամբ իր պիտանիությունը գիտակցելը, այն բացարձակ իշխանության պարծանքը, որով հենց իրեն՝ սպային, ինտելիգենտին շրջապատում են վտանգի րոպեյին։

Արշավանքի տասնօրյա կյանքից հետո, որն առհասարակ շատ է մոտիկացնում, առաջին հաղթանակից հետո, առաջին հանդիսավոր հանդիպումից հետո, որի ժամանակ, սպիտակներից ազատագրված, մի որևէ փոքրիկ քաղաքի բանվորները նվագախմբի հետ դուրս են գալիս նավահանգիստ և միակերպ ամուր սեղմում թե ամենից առաջ ափ թռած նավաստու ձեռքը, թե այն «կարմիր սպայի» յերես-առած, արիստոկրատական մատները, որն «ոտար» ափ է իջնում, անվճռականորեն չուրջը մոտիկ տալով, դեռևս համարձակություն չունենալով հավատալու, որ ինքն էլ ընկեր է, ինքն էլ անդամ է «աշխատանքի միասնական բանակին», որի մասին այնքան հուզված, անճոռնի և ցրնծագին հայտարարում է գավառական «Ինտերնացիոնալի» խռպոտ փողը։

Եվ հանկարծ այդ մասնագետը, կայսերական ծառայության առաջին աստիճանի կապիտանը, սարսափով զգում է, որ իր լացը գալիս է, որ իրեն շրջա-



պատողը ոչ թե գերմանական լրտեսների մի ավազակախումբ է, այլ ամբողջ Ռուսաստանը, որին անչափ հարկավոր են իր փորձը, իր ակադեմիկ գիտությունները, տարիների նստակյաց աշխատանքով դաստիարակված իր ուղեղը։ Ինչ-որ մեկը ճառ է ասում— ա՛խ այդ ճառը, կրակոտ, կիսագրագետ, կոպիտ ճառը, որ դեռևս մի շաբաթ առաջ, բացի ծամածուռ ծաղրից, ուրիշ բան չէր առաջացնի,— իսկ առաջին աստիճանի կապիտանը նրան ականջ է դնում սրտատրոփ, դողդոջ ձեռքերով, վախենալով խոստովանել իրեն, որ այդ կնանոնց, դասալիքների ու խուլիգանների ագիտատոր ընկեր Աբրահամի, մուժիկների ու խորհուրդների Ռուսաստանն իր Ռուսաստանն է, որի համար նա կռվում էր ու մինչև վերջ պիտի կռվի՝ առանց ամաչելու Նրա վոջիլներից, սովից, սխալներից, դեռևս առանց իմանալու, բայց զգալով, որ Նրանն են՝ իրավունքը, կյանքն ու ապագան։



Մի շաբաթ հետո, Մաքուր օձյակը հագնելով, գըլխից ու յերեսից ածխի ու վառոդի մրմուրը (КОПОТЬ) լվանալով, ուսապանակների ու թեզանիքների խավոտ հետքերը դեռևս չկորցրած կիտելի բոլոր արծվանշան կոճակները կոճկելով՝ ընկ. Ստրույսկին գնում է բոլշևիկյան իր հրամանատարության հետ բացատրվելու։ Նա խոսում է և բազկաթոռի թևերը յերկու ձեռքով պինդ բռնում՝ ինչպես թունդ նավաճոճի ժամանակ։

— Նախ՝ յես չեմ հավատում, որ դուք և Լենինն ու կնքած վագոնի մյուս մարդիկ գերմանացիներից փող վերցրած լինեք։

Մեկ—կարճատև հանդիպում, ինչպես համազարկից հետո։ Ինչ-որ մի հեռու տեղ, ուր ծովային կորպուսն է, «Շտանդարտի» վրա համաշխարհային պատերազմի

պատճառով ճաշկերույթներ և փոսեր գնեք—պայթյուններ և խորտակում: Յետացած Հոկտեմբեր:

— Յերկրորդ՝ ձեզ հետ է Ռուսաստանը, ձեզ հետ ենք և մենք: Բոլոր այն կրտսեր ընկերներին, վորոնք կցանկանան իմ կարծիքն իմանալ, յես միևնույն բանը կասեմ: Յեվ յերրորդ՝ յերեկ մենք Յելարուգը գրավեցինք: Ափին, ինչպես գիտեք, մինչև հարյուր հատ գյուղացու գլխարկ է գլորված: Ամբողջ քարափն ուղեղով է նախշված: Դուք ինքներդ եք տեսել՝ տրեխները, տոլաղները, արյունը: Մենք կես ժամ ուշացել եյինք: Այս բանն այլևս չպետք կրկնվի: Կարելի չե գիշերը գնալ: Իհարկե՝ վտանգավոր փարվատեր է, թերևս մարտկոցի պես մի զարանակալություն լինի... բայց...

Գրպանից դուրս է բերում «Հյուսիսային և Հարավային նահանգների պատերազմի որերի գետային նավատորմի գործունեյության» թերթոտած մի հատորիկը:








## ՀԱՇՏԱՐԽԱՆ

### I

Սկզբի որերը:

Մութ, մալի գիշերներ և անափ տափաստան: Թմբի տակ՝ ինչպես փետուրները ցցած գիշատիչ թռչուններ՝ պոլովեցի նեղլիկ ու հեռու ընկած լուսնի լույսի տակ սևորակ թուրքերը հանգստանում են:

Նրանք հենց Իգոր իշխանի օրով էլ այդպես եյին՝ իրենց տաք մորթե գտակներով, գետնին կպած՝ ճամբակողի քարի պես: Յեվ, ինչպես հարյուր տարի առաջ, նրանց մոտով սպիտակ Ռուսաստանը գնում է հարավ կռվելու:

Աղջամուղջի մեջ ճանապարհին ճռնչում ու զրնգում են զինվորական գնացքները, բայց մարդիկ տափաստանային մենավոր կիսակայաններում ավելի հանգիստ են, ամուր, ավելի համոզված, քան մայրաքաղաքի սարսափելի կայարաններում, վորտեղ բացոթյագն ու հիվանդանոցը, գիշերոթի տունն ու ճամբարը զզվելի կերպով խառնված են իրար: Մաքուր քամին անսահման տարածությունների մեջ ցրիվ է տալիս քաղաքից մեր բերած փոշու վերջին մնացորդները:

Այստեղ արդեն կուլին իր իրավունքների տերն է դառնում: Առաջին վիրավորի հետ, վորին նստեցնում են վագոնի բարձր սանդուղքին, կռիվը մեր կյանքի մեջ է մտնում, վոր մինչև վերջ այնտեղից դուրս չգա:

Քառասուն տարեկան մի մարդ է այդ՝ կարճլիկ, կարճ խուզած գլխով և մանր աչքերով, վորոնց մեջ շարունակ յերևում է իր հոգու հարթ ու փոսիկ հատակը: Մեծ ու արևավառ ճակատ՝ հարավի թալկացնող արևի հետքերով պատած՝ բայց վորի վրա վոչ մի կասկած իր խայթող ակոսը չի թողել: Կազակի թուրը նրա թևն արմնկից կտրել է և շապկի մոխրագույն քաթանին քսված արյան հետքերը մինչև այսոր էլ մնում են: Հոր հետ է տասներեք տարեկան տղան՝ արդեն բոլորովին մեծ, գեղեցիկ և իր գեղեցկության մասին վոչինչ չիմացող, կեսերեխա, կիսամարտիկ:

Վորքա՛ն յերկար ու պարզ է մտաբերվում այդ տղայի դեմքը․ այն ամբողջությամբ մի կողմ է դարձած, ասես՝ մի ուժեղ քամու դեմ, և նրա վրա կարմրին է տալիս այնքան մոտիկից անցկացած և հրավառ թևերով նրա մանկությունը շոշափած՝ հեղափոխության փայլը:

Թերևս նա հասունացած տարիք չիմանա, յերբեք մարդ չդառնա, գիրք չկարդա, կնոջ հետ չփում չունենա: Այս արագասլաց ժամանակը նրան կտանի մի վորևե կանաչ տափաստան, հանկարծակի կալմիկներից պաշարված: Նա յերկար կպաշտպանվի՝ իր հայրերի ու յեղբայրների հետ ձեռք-ձեռքի տված, հավանաբար ընկնի, և անսահման մավի յերկնքում գիշատիչ թռչունը դանդաղ, դեռնատարած պտույտներ անի նրա դըլխավերևը: Մահու սարսափը, վոր թույլ դեմքերի վրա սառում է, ինչպես ճարպը՝ ափսեյի մեջ, իր լավագույն սառնամանիքային նախշերը կդնի այդ ուժեղ ու առնական դեմքին՝ հեքիաթային, անսահման ու անշարժ ժպտացող նախշեր:

Այսպես են վոչնչանում հեղափոխության զավակները:



## II

Հաշտարխանը ընկճող է: Հաշտարխանն անհուսալի յե: Նա թեժացած, դեղին քարի պես փռված է հորդացած Վոլգայի մեջտեղը: Հեղեղված դաշտերի վրայով դեպի քաղաք են տանում յերկաթգծի նեղլիկ թմբերը—վոսկե թելերը՝ աղի, պղտոր, անհանգիստ ջրերի ծովում:



Ծովի հոտ է բուրում, արևն այրում է, և չցամաքող ցեխից, ցածլիկ՝ անդեմ ու անտարիք տներից, քարից ու փոշուց, փոշուց ու դարշահոտությունից, ավերակներից ու ամայություններից բաղկացած քաղաքը հազիվ է շունչ քաշում:

Կյանքը միայն գիշերն է սկսվում: Տենդից ու գիշերվա շոգից ուժասպառ յեղած դեմքերն էլեկտրականության տակ այնքա՛ն տարորինակ գունատ են: Միակ պուրակի մեջ, վորտեղ հին ծառերը սակավ են, ներսից լուսավորված ու ծաղիկներով լեփլեցուն մի դագաղ է լուսավորվում: Կարծես՝ իսկ և իսկ տարորինակ վարդերը, կակաչներն ու մեմփրածաղիկներն իրենք են փայլը ճառագայթում. հեղափոխականների գերեզմանն է այդ՝ մինչև որս իմ տեսածներից ամենից հանճարեղը:

## III

Հաշտարխանը շրջապատող տաք ու աղոտ անապատը հազվագյուտ ոազիսներ ունի—թաթարական հնամենի այգիներն են դրանք: Այնտեղ խաղողն է փըթթում, մեղրի, գինու ու անանուխի հոտ է բուրում:

Ծույլ յեզը հնադարյան ճռճռան սարքն անվերջ պտտեցնելով՝ աղի ճահճից ջուր է հանում այգիները:

Սպիտակ վարդերն այնքա՛ն դժգույն են ու ան-



շարժ և արձակում են ծանր ու թանկարժեք շնչառությունը: Նրանք անապատի մեջ չոր կավից շինած զով ու ցածլիկ մեհյանների տպավորություն են թողնում, վորտեղ սև փայտե վոտքերի վրա դրված ասիական աստվածիկն է թագավորում՝ արհեստական ու յերկար վոտքերի թաթերն ու ձեռքի ափերը խաչաձև ծալած, և վոսկե ժպիտով ժպտում է արևին:



Ցածր կռացած ճյուղերից դեղձերն անաղմուկ թափվում են թավշանման կանաչ խոտերի մեջ. Հուրհրան պոմիդորները չոր ցողունի վրա սքանչելի յեն և չափազանց գեղեցիկ՝ ասես առավոտից հագցրած թանկարժեք զարդեր: Հապա վառվռուն սալորնե՞րը. սրանց չոր ու սաթանման մաշկի տակ տաքացրած գինի յե խմորում:

Բարձր յերկնքում՝ տոչորվող այգիների գլխավերևը՝ հեռավոր մի դռռոց է լսվում: Դռռոցը զլում է, բայց շուրջը դրախտն է փախչում, ու չես ուզում աչքդ բաց անել:





Այդ մեղուներն են դժժում խաղողի այգու մեջ, հասունացող ամրան ավետիքն է այդ:

Յեվ հանկարծ սթափում. մարդ ու ծառուղի թողած՝ վազեվազ հավաքվում են սարսափահար այգեպանները, և բոլորի դեմքերը դեպի յերկինք են դարձած: Այդտեղ՝ փետրամպերի միջից յերեք թշնամի թռչուն է յեռանկյունաձև սլանում, և դառնալու ժամանակ արևի առաջ նրանց թևերն արծաթազօծվում են՝ վստահ, համարյա վոչ մի բանից չվախեցող, զուտ անգլիական բենզինով ճախրող թևերը:



Ցածր թռչող յերեք գիշատիչի դեմ անտառի միջից բարձրանում է մեր միակ ու ծանրաշարժ օդանավը: Սա իր նուրբ ու անկայուն մեխանիզմի մեջ ըղդում է վնասակար, ուտիչ մի «խառնուրդ», վորը կանգ է առնում նրբագույն անոթների մեջ, ընդհատում է առաջացնում և ամեն բոպե սպառնում է իսպառ վոչընչացնել: Անհույս մի թռիչք է այդ:

Օդաչուն արհամարհում է փրփուր ամպերի թուխպը, վորոնք սպիտակ թերակղզու պես լողում են յերկնային ծովում և, ուղղակի դեմից, առանց պտույտ գործելու, բայց ձիգ աղմկով, ասես՝ կատարելապես ծանր սպառազեն հագած զինվոր, բարձրանալով՝ սլանում է դեպի անտեսանելի օդալերան գագաթը:

Ո՞վ է նա, այդ անծանոթ թռչողը, այդ վո՞ր թագավորի սիրտն է բաբախում նրա կրծքի տակ, վո՞ր քաջերի արյունն է նրան ներշնչում իր այդ անմիտ, անհամեմատելի չեշտակի թռիչքը:

Այնտեղ՝ ներքևում, անպաշտպան քաղաքն է փռված. նա իր կեղտոտ փողոցներով, իր վայրագ ու անպետք մարդկանցով, վոր պատրաստ եյին հեղափոխու-



1557—5

Թյանն ու իր կյանքի բոլոր կարմիր շառավիղները բնաջնջելու, վոչ վոքի չկարողացավ արշավանքի վոգի ներշնչել:

Այնուամենայնիվ նա բարձրանում է: Յերկնքից արդեն գնդացիրների ճռճռոց է լսվում, և, թշնամու մեքենաներից քիչ վերև, ծխի քուլաներ են բարձրանում. ափի միակ թնդանոթն է այդ, վոր հսկայական աչքը դանդաղորեն պտտեցնելով՝ հեռավոր նպատակը գտել և մահ է նետում տարածության մեջ:

Նրանք փախան: Նրանք չդիմացան այդ չեչոտակի մոտեցման: Հրե՛ն, նրանց արծաթանման թիկունքն արդեն հեռվից է պսպղում ու թշնամու դղրդոցը հազիվ է լսվում: Մեր ոդանավն ուրախ և ընդարձակ կամար տալով տուն է սլանում: Հավանորեն ոդաչուն հիմա դիմակի տակ պարզերես է, և նրա ամեն մի դիմագիծը՝ ավարտված ու հսկայական, իսկ աչքերը սևեռուն ու փայլուն են, ինչպես վաղուց անհայտացած ռազմատենչ թռչունների աչքերը:

## IV

Տասը հուլիսի, հազար ինն հարյուր տասնեինն թվի:

— Ընկե՛ր հրամանատար, գործկոմի մարդիկ խնդրում են մյուս ափը գնալ, թո՛ւյլ տվեք անցկացնել:

— Չի՛ կարելի, նրանք մեզ հետ աշխատանքի պիտի գնան և ցույց տան այն գյուղերը, վոր կազակները գրավել են:

Առաջ է ընկնում հաղթանդամ, արևառ դեմքով, ուրախ և աշխույժ աչքեր ունեցող մի մարդ՝ ինչ-վոր գյուղական կոմիտեյի նախագահ, վոր կադետների գալուն պես փախել է տափաստանի իր գյուղից և շատ հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում: Բանից դուրս է գալիս, վոր կազակների յերկու գունդ արդեն գրավել են ջուրն խվեր, քսանհինգ վերստի վրա գտնվող առափնյա մի գյուղ, և յեկեղեցու հետևի հրապարակում չորս հրանոթ կա պահված: Արշալույսի հետ այդ ամբողջ ուժը պետք է շարժվի Ռ.—ում յեղած մեր շտաբի վրա: Իսկ հիմա ո՞ւր են նրանք:

Ո՞վ: Կազակնե՞րը: Լողանում են: Այսօր մինչև



գիշեր նրանց հանդիստն է. թե ձի, թե մարդ— բոլորը գետի մեջ են: Շատ շոգ է:

Յեվ իսկապես՝ արևը կրակ է թափում: Գետն անշարժ տարածվել է վոսկեդույն ավազե ափերի մեջ: Խաշում է: Յերբեմն-յերբեմն ջրի միջից մի ահագին ձուկ է փայլում: Թե առափնյա մարտկոցները չեյին լինի՛, ինչքա՛ն լավ կլիներ հիմա, նիրհող ու տաքացած գետի յերեսով մոտենալ այդ ափին, վորտեղ վայրի հորդան լողանում է գետում, վորտեղ կոհակների մեջ արևից փայլում են ձիավորների լայն թիկունքները: Գիշերն արշավանք է նշանակված:

Հրաշալի գիշեր է: Դարձյալ այդ ցածրիկ ու վարդերանգ լուսինը, յերկաթե ու մարգարտե, սո՛ւր՝ ինչպես յեղեվինի հոտը և քնքուշ՝ ինչպես խաղողի այգու ծաղկումը:

Ականակիրները սուսիկ գնում են հոսանքին հակառակ, ժամանակն անցնում է, առագաստաձողերը ցանցի պես թրթռում են յերկնքում, և նրանց մեջ կատարյալ աստղորս է:

Հետևներս ենք թողնում այն գյուղերը, ուր հարյուրավոր թշնամիներ են հանգստանում ու խորհում վաղվա արշավանքի մասին: Մթության մեջ նավը տեղ է ընտրում, հրանոթներն ուղղում ու կամացուկ հրամանի հետ հսկա մարմիններից շաղ է տալիս կրակը:

Այնտեղ՝ ափին, արդեն մեռնում են:

Փոքրամարմին, սովդեպական*) մի գյուղացի ձեռքերն ականջներին սեղմած՝ կանգնել է յերկաթե կամրջակին: Համազարկերի մոգական լույսից մի ակընթարթ յերևում են նրա դեմքը՝ չեկ ու նոսր մորուքով, նրա սպիտակ շապիկն ու բոբիկ վոտքերը: Նա շշմել է, բայց ափին տեղի ունեցող ամեն մի պայթյունից հետո այդ դեմքի վրայով սահում է մի տեսակ մեհ ժպիտ, իշխանության՝ կարծես թե ամաչկոտ, չըդիտակցված, գրեթե մանկական արտացոլում: Ահա նա կանգնած է տրեխներով, ռուս մուժիկը տրեխներով, ռազմանավի գրահապատ տախտակամածին, և ամբողջ այդ արագընթաց տիտանն իր հլու մեխանիզմով, հե—

*) Սովդեպական (совдепец)-պատգամավորների խորհուրդների յերկրի քաղաքացի: Ծ.թ.

թյունն ու իր կյանքի բոլոր կարմիր շառավիղները բնաջնջելու, վոչ վոքի չկարողացավ արշավանքի վոգի ներշնչել:

Այնուամենայնիվ նա բարձրանում է: Ցերեկից արդեն գնդացիրների ճռճռոց է լսվում, և, թշնամի մեքենաներից քիչ վերև, ծխի քուլաներ են բարձրանում. ափի միակ թնդանոթն է այդ, վոր հսկայական աչքը դանդաղորեն պտտեցնելով՝ հեռավոր նպատակը գտել և մահ է նետում տարածության մեջ:

Նրանք փախան: Նրանք չդիմացան այդ չեչտակի մոտեցման: Հրե՛ն, նրանց արծաթանման թիկունքն արդեն հեռվից է պսպղում ու թշնամու դողդոջը հազիվ է լսվում: Մեր ոդանավն ուրախ և ընդարձակ կամար տալով տուն է սլանում: Հավանորեն ոդաչուն հիմա դիմակի տակ պարզերես է, և նրա ամեն մի դիմագիծը՝ ավարտված ու հսկայական, իսկ աչքերը սևեռուն ու փայլուն են, ինչպես վաղուց անհայտացած ռազմատենչ թռչունների աչքերը:

## IV

Տասը հուլիսի, հազար ինն հարյուր տասնևինն թվի:

— Ընկե՛ր հրամանատար, գործկոմի մարդիկ խնդրում են մյուս ափը գնալ, թո՛ւյլ տվեք անցկացնել:

— Չի՛ կարելի, նրանք մեզ հետ աշխատանքի պիտի գնան և ցույց տան այն գյուղերը, վոր կազակները գրավել են:

Առաջ է ընկնում հաղթանդամ, արևառ դեմքով, ուրախ և աշխույժ աչքեր ունեցող մի մարդ՝ ինչ-վոր գյուղական կոմիտեյի նախագահ, վոր կադետների գալուն պես փախել է տափաստանի իր գյուղից և շատ հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում: Բանից դուրս է գալիս, վոր կազակների յերկու գունդ արդեն գրավել են ջուրն իվեր, քսանհինգ վերստի վրա գտնվող առափնյա մի գյուղ, և յեկեղեցու հետևի հրապարակում չորս հրանոթ կա պահված: Արշալույսի հետ այդ ամբողջ ուժը պետք է շարժվի Ռ.—ում յեղած մեր շտաբի վրա: Իսկ հիմա ո՞ւր են նրանք:

Ո՞վ: Կազակնե՞րը: Լողանում են: Այսօր մինչև



գիշեր նրանց հանգիստն է. թե ձի, թե մարդ— բոլորը գետի մեջ են: Շատ շոգ է:

Յեվ իսկապես՝ արևը կրակ է թափում: Գետն անշարժ տարածվել է վոսկեդույն ավազե ափերի մեջ: Խաշում է: Յերբեմն-յերբեմն ջրի միջից մի ահագին ձուկ է փայլում: Թե առափնյա մարտկոցները չեյին լինի՛, ինչքա՛ն լավ կլիներ հիմա, նիրհող ու տաքացած գետի յերեսով մոտենալ այդ ափին, վորտեղ վայրի հորդան լողանում է գետում, վորտեղ կոհակների մեջ արևից փայլում են ձիավորների լայն թիկունքները: Գիշերն արշավանք է նշանակված:

Հրաշալի գիշեր է: Դարձյալ այդ ցածրիկ ու վարդերանգ լուսինը, յերկաթե ու մարգարտե, սուր՝ ինչպես յեղեվինի հոտը և քնքուշ՝ ինչպես խաղողի այգու ծաղկումը:

Ականակիրները սուսիկ գնում են հոսանքին հակառակ, ժամանակն անցնում է, առագաստաձողերը ցանցի պես թրթռում են յերկնքում, և նրանց մեջ կատարյալ աստղորս է:

Հետևներս ենք թողնում այն գյուղերը, ուր հարյուրավոր թշնամիներ են հանգստանում ու խորհում վաղվա արշավանքի մասին: Մթության մեջ նավը տեղ է ընտրում, հրանոթներն ուղղում ու կամացուկ հրամանի հետ հսկա մամիկներից շող է տալիս կրակը:

Այնտեղ՝ ափին, արդեն մեռնում են:

Փոքրամարմին, սովդեպական*) մի գյուղացի ձեռքերն ականջներին սեղմած՝ կանգնել է յերկաթե կամրջակին: Համազարկերի մոգական լույսից մի ակնթարթ յերևում են նրա դեմքը՝ չեկ ու նոսր միրուքով, նրա սպիտակ շապիկն ու բոբիկ վոտքերը: Նա չչմել է, բայց ափին տեղի ունեցող ամեն մի պայթյունից հետո այդ դեմքի վրայով սահում է մի տեսակ մեհ ժպիտ, իշխանության՝ կարծես թե ամաչկոտ, չըդիտակցված, գրեթե մանկական արտացոլում: Ահա նա կանգնած է տրեխներով, ռուս մուժիկը տրեխներով, ռազմանավի գրահապատ տախտակամածին, և ամբողջ այդ արագընթաց տիտանն իր հլու մեխանիզմով, հե-

*) Սովդեպական (совдепец)—պատգամավորների խորհուրդների յերկրի քաղաքացի: Ծ.Թ.

ռաչափի մոտ յեղած թնդանոթաձիգ նավագնացով նրան է պատկանում ու նրա՝ Սալողնիկի գյուղացի Իվան Իվանովիչի գերագույն կամքին է ծառայում: Աշխարհում յերբեք և վոչ մի տեղ գեղջկական տրեխները կանգնած չեն յեղել այդ բարձր, վեհ կամրջակին, հարյուր միլիմետրանոց հրանոթների ու ականային ապարատների վրա, ամբողջ Ռուսաստանի վրա, հեղափոխությունից ջարդ ու փշուր յեղած և նորից սկսված վողջ մարդկության վրա:

Բամբակն ականջներից հանելով՝ ծովային ակադեմիայի լուսատու աստղ Վեկմանը կռանում է դեպի լուռ ու մունջ, կծկված, գունդ դարձած և հրճվող Իվան Իվանովիչն ու մթության մեջ հարցնում նրան.

— Ընկե՛ր տովդեպական, ղանգակատնից բա՞րձր, թե՞ ցածր, մենք ճի՞շտ ենք խփում արդյոք:

Իվան Իվանովիչը չի պատասխանում, բայց նրա փայլող աչքերից ու կնճռոտած ճակատից յերևում եր, վոր ճիշտ են կրակում:

Լուսանում է:

Ահա ափին բոլորովին մոտիկ մի արկ շրմփաց:



— Կա, չկա՝ Միկիտի տանը դիպավ: Հարուստ գյուղացի յե, տասը կով ուներ, վոչ պակաս. յեկվոր սպաներն ել նրա տանն են:

Սպիտակները չեն պատասխանում, բայց մթության մեջ զգացվում է նրանց հուսահատական փախուստը: Կիսատ-պռատ հագնված՝ նրանք իրենց խամ ձիերով ամբողջ այդ յերկար ու յեռուն գիշերը պիտի փախչեն տափաստանով, իսկ նրանց հետևից՝ հանկարծակի հարություն առած՝ նախնադարյան սարսափի ուրվականը: Միկիտի տունն այրվում է, թնդանոթները վաղուց լռել են:

Ականակիրը խարիսխը քաշում և գնում է հոսանքն ի վայր:



V

Սքանչելի յեն հեղափոխության ծերունիները: Սքանչելի յեն այդ մարդիկ, վոր վաղուց արդեն անց են կացրել մարդկային սովորական կյանքը, և հանկարծ այնտեղ, վորտեղ սովորաբար վարագույրն իջնում է և քունն ու խավարն են վրա հասնում, ապրինի յերիտասարդության վոսկու թելերն են հյուսում:

Ահավասիկ Սաբուրով Ալեքսանդր Վասիլևիչը: Նրա մեծ վորդին պատերազմում սպանվել է, իսկ կինն աննկատելի կերպով կծկվել ու դարձել է մտքերի ու զգացումների թեթև, փափուկ, գորշ — մոխրագույն մի կծիկ: Նա ինքն ավարտել է ամբողջ գամման-լեյտենանտական ուսադիրներից մինչև Փարիզ գաղթելը՝ դեռ Ծմիդտի որով, վորի գործի մեջ խառնված եր յեղել անուղղակի կերպով:

Տարագրության մեջ Սաբուրովն ապրում եր այնպես, ինչպես հազարավոր քաղաքական վտարանդիներ— Փարիզի հասարակ փականագործից կառավարչի պաշտոնին հասավ: Գրողի տարած մեծ ժամացույցը ցույց եր տալիս Սաբուրովի հիսուն ութ տարին, յերբ տեղի ունեցավ հեղափոխությունը, և նա, ամեն ինչ թողած, վերադարձավ Ռուսաստան, վոր մեկեն ճակատ գնա վորպես ծովային սպա:



Հավանական է, վոր դեռ ալեոր Բալթիկի վրա լողալիս, նավի վրա մենակ նստած՝ լսում եր, թե ինչպես ծանր ալիքները խփվում են նավի կողքերին, ինչ փութկոտությամբ նավաստիները վազվզում են տախտակամածի վրա, ի՛նչպես է շնչում ու ծփում ծովը. հաշվում եր կորցրած տարիները և իր առաջ տեսնում եր իր նոր, խելացնոր յերիտասարդ կոչումը:

Նա Վոլգա յեկավ չեխոսլովակյան հարձակման թունդ ժամանակ, և Կազանի տակ նրան տվին ծանր,

դանդաղաշարժ, յերկաթապատ մի սալրանքանավ, վորի վրա հերթով վորոտում և հետո սառում ու ծըխում եյին հեռահար հրանոթները:

Ի՜նչ հրաշալի յեր նա ղեկավարում կրակը: Փոքրամարմին, փրչոտամիրուք, վորի միջից յերևում է հավիտենական ծխամորճի կոթը, քիչ շիլ՝ թաթարական աչքերով ու Ֆրանսիացու պես խոսող Ալեքսանդըր Վասիլեվիչը մեկ ել տեսար փոքր ինչ կկզեց հրանոթի մոտ, շվշվացրեց, աչքերը կկոցեց, աչքի մեկը ճտեց Սամբեկի նախշուն աշտարակին, վոր այնքան հնամենի, այնքան պատկառելի ու ներքուստ գեղեցիկ է, ինչպես ինքը, ու սկսեց կատաղի հրետակոծությունը:

Յերրորդ հրազարկից Կազանում ինչ-վոր այրվում է, թշնամին պատասխանում է, և փոքրիկ բուքսիրը փնչալով ու տնքալով՝ «Սերյոժա»-ն շտապ դուրս է քաշում պայթող արկերի անձրևի տակից:

Ո՜, այդ հակապատկերները. ծանրաշարժ հսկան, իր մազաչափ անսխալ կրակը, այդ հսկայական հրանոթներն ու նրանց կառավարող բարի, փոքրամարմին, ժիր Ալեքսանդր Վասիլյեվիչը, վոր մրջյուն չի տրորի, բայց դառնում է անծպտուն, սառը, ինչպես քար, անց է կենում կույր, թևատարած մահը, վորի թևերը թաց են թունավորված, յեռացող ու պտտավող ջրի շատրվաններից:

Մահն անցնում է մոտով, չհամարձակվելով կպնել այդ արքայական ծերության վաթսուններորդ տարին:

VI

Le Jour de gloire est arrivé
Formez vos bataillons!

Սև ու կարմիր գույնը ներկում է մեր դրոշակները: Սև՝ դանդաղ թաղումների օրերին:

Կիզացած քաղաքի միջով անցնում է ծովագնաց յերաժիշտների խումբը:

Փողերը փայլում են, քայլերը դղրդում են անկենդան սալահատակին, և դրոշակները թվում են սև քարից քանդակված— այնքան ծանր են ու մռայլ: Ծալքերը շարժվում են, ասես՝ մռացության մեջ, և յերա-



դում զով ու անհուն յերկնքի մասին, հյուսիսի վաղ գարնան մասին, Կրոնշտադտի վրա սավառնող առաջին վորորների մասին, ապրիլյն տեղացող ձյան փաթիլների մասին:

Վողջ Հաշտարխանը շնչահեղձ է լինում: Միայն ձկնորսական նավակների թեթև կայմերն են հեշտությամբ շնչում ջրի յերեսին: Քաղաքը փռված է՝ աչքերը խուփ, փոշուց ու քրտինքից խոնավ, առանց հանգիստ գտնելու առուների մոտ, վորտեղ, տենդախտով տոգորված շոգն ավելի թունդ է ծխում:

Քաղաքի միջով, հավասար ու համաչափ քայլերով անցնում են նավաստիները: Ամայության վրա, ավերակների մեջ և քարերից ու անճոռնի տանիքներից կուտակված վողջ դատարկության վրա ճախրում, թրթռում, կանչում է «Մարսելյոզ»-ը, այն, վոր շոշափել է բարձր, դանդաղ նոտաներ, վորոնք արդեն ավարտել են սասանվածի մասին վիշտ արտահայտող բոլոր յելևէջները: Մարսելյոզը բարձրունքներն է հասել: Այնտեղ՝ ուղղակի յերկնքի տակ, յերգ է, արծիվը շրջահայում ու տեսնում է վողջ կյանքը, վոր ճանապարհի պես փռվում է ներքևում հեռո՜ւ-հեռու, անվերջ ու անսկիզբ:

Ցեվ տեսնում է. ահա յերկնագույն լայն գետը, վոր աղի ավազների միջով դեպի ծով է հոսում: «Մարսելյոզ»-ը գլում է և ավելի վեր բարձրանում: Դագաղը հանդարտ օրորվում է, անցորդներն ամեն կողմից նայում են փոքրիկ թափորին, ծովագնացների դեմքերին, վորոնք յերաժշտության վառ շղարշով պարուրված և՛ տեսնում, և՛ չեն տեսնում իրենց շուրջը:

Իսկ «Մարսելյոզ»-ը միևնույն ժամանակ, հենվելով փողի պղնձին ու թմբուկի լայն կրծքին՝ վողջունում է անմարդ ու խաղաղ գետի հոսանքին հակառակ գնացող յերկարավուն նավին: Հիշատակի թևերին բազմած՝ նրան հետևում է սգո յեղանակը:

Դրոշակն արթնացավ ու թրթռաց: Ասես՝ ծովից փչող, յերեք լայն ու գորշ խողովակից բարձրացող ածխափոշով հագեցած թարմ քամի կպավ նրան: Ծովագնացներն աչքերը վեր չեն բարձրացնում, և, օրորվե-

դանդաղաշարժ, յերկաթապատ մի ապրանքանավ, վորի վրա հերթով վորոտում և հետո սառում ու ծըխում եյին հեռահար հրանոթները:

Ի՜նչ հրաշալի յեր նա ղեկավարում կրակը: Փոքրամարմին, փրչոտամիրուք, վորի միջից յերևում է հավիտենական ծխամորճի կոթը, քիչ շլդիկ՝ թաթարական աչքերով ու ֆրանսիացու պես խոսող Ալեքսանդըր Վասիլևիչը մեկ էլ տեսար փոքր ինչ կկզեց հրանոթի մոտ, շվշվացրեց, աչքերը կկոցեց, աչքի մեկը ճտեց Սամբեկի նախշուն աշտարակին, վոր այնքան հնամենի, այնքան պատկառելի ու ներքուստ գեղեցիկ է, ինչպես ինքը, ու սկսեց կատաղի հրետակոծությունը:

Յերրորդ հրազարկից Կազանում ինչ-վոր այրվում է, թշնամին պատասխանում է, և փոքրիկ բուքսիրը փնչալով ու տնքալով՝ «Սերյոժա»-ն շտապ դուրս է քաշում սայթող արկերի անձրևի տակից:

Ո՜, այդ հակապատկերները. ծանրաշարժ հսկան, իր մաղաչափ անսխալ կրակը, այդ հսկայական հրանոթներն ու նրանց կառավարող բարի, փոքրամարմին, ժիր Ալեքսանդր Վասիլյեվիչը, վոր մրջյուն չի տրորի, բայց դառնում է անծպտուն, սառը, ինչպես քար, անց է կենում կույր, թևատարած մահը, վորի թևերը թաց են թունավորված, յեռացող ու պտտավող ջրի շատրվաններից:

Մահն անցնում է մոտով, չհամարձակվելով կտրել այդ արքայական ծերության վաթսուներորդ տարին:

VI

Le Jour de gloire est arrivé
Formez vos bataillons!

Սև ու կարմիր գույնը ներկում է մեր դրոշակները: Մեր՝ դանդաղ թաղումների օրերին:

Կիզացած քաղաքի միջով անցնում է ծովագնաց յերաժիշտների խումբը:

Փողերը փայլում են, քայլերը դղրդում են անկենդան սալահատակին, և դրոշակները թվում են սև քարից քանդակված— այնքան ծանր են ու մռայլ: Ծալքերը շարժվում են, ասես՝ մոռացության մեջ, և յերա-



դում գով ու անհուն յերկնքի մասին, հյուսիսի վաղ գարնան մասին, Կրոնշտադտի վրա սավառնող առաջին վորորների մասին, ապրիլյան տեղացող ձյան փաթիլների մասին:

Վողջ Հաշտարխանը չնչահեղձ է լինում: Միայն ձկնորսական նավակների թեթև կայմերն են հեշտությամբ շնչում ջրի յերեսին: Քաղաքը փռված է՝ աչքերը խուփ, փոշուց ու քրտինքից խոնավ, առանց հանգիստ գտնելու առուների մոտ, վորտեղ, տենդախտով տոգորված շոռն ավելի թունդ է ծխում:

Քաղաքի միջով, հավասար ու համաչափ քայլերով անցնում են նավաստիները: Ամայության վրա, ավերակների մեջ և քարերից ու անճոռնի տանիքներից կուտակված վողջ դատարկության վրա ճախրում, թրթռում, կանչում է «Մարսելյոզ»-ը, այն, վոր շոշափել է բարձր, դանդաղ նոտաներ, վորոնք արդեն ավարտել են սպանվածի մասին վիշտ արտահայտող բոլոր յելևէջները: Մարսելյոզը բարձրունքներն է հասել: Այնտեղ՝ ուղղակի յերկնքի տակ, յերգ է, արծիվը շրջահայում ու տեսնում է վողջ կյանքը, վոր ճանապարհի պես փռըվում է ներքևում հեռո՜ւ-հեռու, անվերջ ու անսկիզբ:

Յեվ տեսնում է. ահա յերկնագույն լայն գետը, վոր աղի ավազների միջով դեպի ծով է հոսում: «Մարսելյոզ»-ը գլում է և ավելի վեր բարձրանում: Դագաղը հանդարտ օրորվում է, անցորդներն ամեն կողմից նայում են փոքրիկ թափորին, ծովագնացների դեմքերին, վորոնք յերաժշտության վառ շղարշով պարուրված և՛ տեսնում, և՛ չեն տեսնում իրենց շուրջը:

Իսկ «Մարսելյոզ»-ը միևնույն ժամանակ, հենվելով փողի պղնձին ու թմբուկի լայն կրծքին՝ վողջունում է անմարդ ու խաղաղ գետի հոսանքին հակառակ գնացող յերկարավուն նավին: Հիշատակի թևերին բազմած՝ նրան հետևում է սգո յեղանակը:

Դրոշակն արթնացավ ու թրթռաց: Ասես՝ ծովից փչող, յերբեք լայն ու գորշ խողովակից բարձրացող ածխափոշով հագեցած թարմ քամի կպավ նրան: Ծովագնացներն աչքերը վեր չեն բարձրացնում, և, օրորվե-

ղով դեպի քաղաքի արվարձանները՝ նրանցից մեկը հիշում է— այդ ««Ռաստորոպնու» վրա յեր:

Յերաժշտափողերի հուժկու կոկորդից մի րոպե ար-ցունքների խռռոց է լսվում, բայց փողերը կարգի յեն ընկնում, և հեղափոխական հիմնը նորից է սավառնում, լողում արիության ու վեհության ջինջ յերկնքում:

«Ռաստորոպնու» վրա յեր այդ: Նա հետախուզու-թյան եր գնացել՝ յուրայիններից հեռու և գետափին դարան եր հայտաբերել: Ականակիրը, վոր կես մոտի-կից գնդակոծվում եր, յերկու հրանոթից կրակ է բա-ցում:

Յեվ պաշտպանության թունդ իրարանցման ժամա-նակ, յերբ կոմենդորներն իրենց թնդանոթների շնչից խանձված, փնտրում ու փոխում են նպատակը, յերբ դատարկ պարկուճները գնգում են, լոցմանը մոտիկ արկերի վզզոցից գլուխը վախկոտությամբ կռացնում է, յերբ փոքրամարմին հրամանատարը դատարկ արկղին կանգնած՝ տեսնում է քթից մինչև նավախելը լափին-ներով շրջապատված իր նավը, վոր իր ձայնի ու կամքի մազաչափ յերերումից է կախված— ահա այդ ժամանակ վիրավորվում և անձայն մեռնում է նավաստի Յերիկո-վը: Ահավասիկ բոլորը:

«Մարսելյոզն» իր պատմությունը վերջացրեց: Դա-գաղը սահուն սողում է յեղբայրական ուսերի վրա: Գուցե նա՝ մեջը պառկողը, ուզում է— վերջին ան-գամ— հարցնել իր դատարկ մահճակալի մասին, կամ այն մասին, թե հիմա ո՞վ է առավոտները կամրջակին բարձր կանգնած՝ նավից-նավ հաղորդում ազդանշանի դրոշակների արտահայտիչ այբուբենը: Բայց մահն սպիտակ-կապտավուն շրթունքներից ձեռք չի քաշում, ու չասված բառերը վոչ վոք չի լսում: Դագաղը հնա-զանդում է, և նրա հետևից, սաես նավախելի հետևից, վազում, անվերջ տարածվում են տխրության յերկու ներդաշնակ ալիք, վորոնք ոտար ու թշնամի քաղա-քում պատահական դեմքերին իրենց հատակ ու ալի փրփուրն են նետում:



Գիշերը Ն.-ից հեռագիր:

Տորմհրամը գնում է ներքև, վոր վաղը յերեկոյան հասնի խորհրդակցությանը:

Մարդ ափսոսում է Ն.-ից հեռանալ սպիտակ հար-ձակման թունդ ժամանակ, վոր յերկու ցերեկ ու մի գիշեր է, ինչ շարունակվում է: Գետի վրա հրետանու հատուկենտ վորոտ է, բանակն անհանգիստ քուն է մը-տել՝ առանց հանվելու, զենքն ու հացը գլխի տակ դը-րած: Բոլոր կրակները հանգած են: Մոմերի լույսի տակ քարտուղարը վերջին կարգադրություններն է ըն-դունում ու հանձնում, անհատատ գրիչը սահում է թղթի վրա, քամին տատանում է միակ լույսը, վորի վրա լռիկ ու մութ թիթեռներ են թռչկոտում: Ջրի մեջ աստղեր են յերերում, և գիշերվա ձայներին ռադիոյի անընդհատ միապաղաղ վզզոցն է խառնվում: Ըստ յե-րևույթին ցամաքի յերկու չոր ու ցամաք հեռագրի ընդհատումներին բարակ ու սրածայր կայմը քնքուշ ու անլսելի վողջույն է հղում յերկնքին: Գորշ ամպի մի-ջից փայլակներն են պատասխանում նրան:

VIII

Պոլոզենկոն հսկա հասակի տեր մի նավաստի յե՝ ծանրաշարժ, դանդաղ, մութ դեմքով ու մութ մա-զերով:



Սեղանի առաջ նստելիս ակա-մայից աչքի յեն ընկնում նրա մեծ ու կոշտուկ ձեռքերը, վորոնք ի-րերը միշտ այնտեղից են բռնում, վորտեղ նրանց խորհրդավոր հավա-սարակշռության կետն է թաքնված: Այն ամենը, ինչի վոր Պոլոզենկոյի տիտանային մատներն են կպչում, ակամայից բաժանվում է հավասար ու համապատասխան մասերի, և այդ մա-սերը նրա ձեռքում արդեն ապրում են և տարածության մեջ ոգնում իրար:

Առմնկից սկսած մինչև դաստակը՝ նրա արևառ բազկի վրա կապտին է տալիս ճապոնական ասեղով ծեծված նրբագեղ ու զարհուրելի մի վիշապ: Պոլոզենկոն դաջոտ է, և յերբ նա իր կոտրված, բոլորովին անպետքացած մեքենայով— վորի մոտ շրապնելի գուլաներ են սպիտակին տալիս— բարձրանում է, նրա թևքերը քըշտած են, և փոթորկից հողմահար, արևից վողողված, քաջերի խելահեղությունից հալածված՝ նա թևի վրա տեսնում է ասիական անդրդվելի, փոքրիկ մի հրեշ, կենդանացած, գուլաներ արձակող բաց յերախով և, ասես դաշույն, բարձրացրած պոչի ծայրով:

Այն ժամանակ Պոլոզենկոն ծիծաղում է, քամին նրա շրթունքներից խլում է այդ ծիծաղը, և ներքևում հեռո՜ւ-հեռու պայթում է նրա նետած չուգունը:

Մոտ որերս տոթ Հաշտարխանում մեռավ Պոլոզենկոյի վեց ամսական տղան: Այս բանից հետո նա որական յերեք-չորս անգամ է բարձրանում՝ հակառակ բոլոր նախազգուշացումներին: Այժմ նրա մեծ դեմքին մի գիծ էլ է առաջացել՝ իր պես ուղիղ ու սուր, վորի նշանակությունն անխուսափելի յե և անդրդվելի, և վորի առաջ մարդկային աչքերը խոնարհվում են, չհամարձակվելով ճանաչել այն:

IX

Հաշտարխանի Ծովային Հիվանդանոցում տեղավորվել է Կրյուչկովի ընտանիքը, ավելի ճիշտ՝ ընտանիքի մնացորդները:

Նրանք աղքատիկ ճաշի եյին նստած, յերբ պատահականորեն, ցանկալի համարվեց անգլիական ռազմանավից ռումբ նետել նրանց ծակ տանիքին: Ամեն ինչ խորտակվեց՝ պատառպատառ յեղած, փոշիացած, փայտի բեկորների ու հողակույտերի տակ թաղված: Անվնաս մնացին մայրը, ութ և յերկու տարեկան տղաները. ստիպված յեղան վերջինիս վոտը ծնկից կտրել:

Անդամահատությունից հետո մայրը տասներկուերորդ որն է, ինչ գիշեր-ցերեկ նստած է հիվանդի մահճակալին և ձեռքերի վրա պահում է անքուն մանկանը, վոր չի կարողանում պառկել: Մոր մազերը չեկ



են, նա ֆիննական տիպի լայն դեմք ունի՝ դուրս ցցված այտոսկրներով, և բան չտեսնող աչքեր— սարսափահար անասնի աչքեր:

Յերեխան նրա ձեռքերի վրա բոլորովին մերկ է, սպիտակ վերմակի մեջ փաթաթած ու փոքրիկ. ահագին մի կծիկ մառլա ու վիրակապ՝ նիհար ու արևառ վոտքին: Ձեռքերն անհանգիստ շարժվում են, բայց այդ յերկու տարեկանի գլուխը հանգիստ է, գունատ ու խոհուն, ինչպես մեռնող աստծունը: Թուլությունից աչքերը փակվում է, բայց այդ ժամանակ նրա ճակատն այնպիսի մի խորհրդավոր մտքով է լուսավորվում, վոր մայրը սարսափահար յեղած դադարում է վորորալ, իսկ համարձակ բժիշկն մանկան անշարժ այտից յետ է քաշում ամեն ինչի ընտելացած իր անքաղաքավարի մատները: Յերբ յերեխաները մեռնում են, հավանորեն նրանց աչքի առաջ է գալիս իրենց ամբողջ չեղյալ կյանքը՝ յերազներով անդրադարձած, ինչպես հայելի: Մի ժամվա տանջանքից, մի գիշերվա զառանցանքից նրանց վրայով մի ամբողջ կյանք է անցնում, և այն տալիս են առանց ափսոսելու, ինչպես տոն որին մի անգամ հագած և բոլոր գույների ու բուրմունքների հետ ընդմիշտ հանված հագուստը:

Կոպերը կիսախուփ են ու դողդողում են: Մերկ մարմնի վրա ցավալի կերպով կեղտի բծեր են յերևում, իսկ վիրակապից վարդագույն խոնավությունն ավելի ու ավելի յե դուրս տալիս: Մայրը նայում է նրան անշարժ, քարացած: Իսկ կուրծքը կապած մի նավաստի հարևան մահճակալին նստած՝ կիսաձայն սիրտ է տալիս նրան:

— Ամեն մարդու հո վոտ պետք չի՛: Խելացի տղա յե, կարելի յե սովորեցնել և դարձնել, որինակ, հեռագրող:

Ինչո՞ւ հեռագրիչ: Վիրավորն ինքն զգում է, վոր անհաջող բան ասաց: Բայց չէ՞ վոր մի բանով պետք է մխիթարել, արցունքը կտրել, արյունը կախարդել:

Փոքրիկ Ֆեդյան հանգիստ նայում է իր մարմնից քանդվող վիրակապերին: Նա մեծ հոգու տեր է:

X

Օրեր են լինում, յերբ դեպքերը ծայր աստիճան աճում ու խառնում են: Նույնիսկ մանր-մունր բաները բազմիմաստ են թվում, արևածագը յերկար ու անհույս օր է գուշակում, յերեկոն կարմրին է տալիս ու յերկարում, ինչպես մի հուշ: Հասկանալի յե դառնում հին մարդկանց սարսափը՝ թռչունների կանչից, քարի ընկնելուց, անկենդան առարկաների ճրճռոցից ու փախուստից առաջացած: Վո՞րտեղից է մարդկանց վրա իջնում, լեռնային մշուշի պես հովիտների վրա հազվադեպ իջնում այդ սարսափը, անհայտի այդ նախազգացումը, վոգու այդ անսպառ տանջանքը:

Վոչ. ճակատում վոչ կռիվներն են սարսափելի, վոչ վերքերը, վոչ ել կրակը: Կռվի մեջ չի, վոր ուժեղներն ու յերիտասարդները ծերանում, ճեղքվածքներ են տալիս, կռիվը չի, վոր ջղերը ցամաքեցնում և սրտին ստիպում է դանդաղ ու ընդհատումներով բաբախել:

Այս բանի անունը հոգու գաղտնի հիվանդությունն է, ինչպես կուզեք, անվանեցեք այն— մասսայական ներշնչում, խուճապ, կպչուն, անհիմն վհատություն— ահավասիկ պատերազմի անբուժելի և խորհրդավոր ախտը:

Ամենաառողջ զորամասը կարող է արթնանալ հիվանդացած, վարակված, սարսափի ընդհանուր գլխապտույտով բռնված: Յեվ այն ժամանակ հարկավոր է խելքի ամբողջ մեծությունը, նրա վողջ կենտրոնացած, սառցե կարողությունը, վոր կարելի լինի յետ վանել բացարձակ թշնամուց շատ ավելի վտանգավոր ցնորքներն ու փախչողներին տեղում պահել:

Փորձության որը վերջապես մեզ համար ել հասավ: Թե ի՞նչպես սկսվեց, ինչո՞ւ և վո՞րտեղից— յերբեք և վոչ վոք չի կարող իմանալ: Տափաստանի միջով մի ձիավոր եր սլանում՝ փոշու ամպերի մեջ կորած:

Ահա և բոլորը: Ձին ու ձիավորը մեր ու թշնամու դիրքերի արանքով սլանում են անմտորեն, աննպատակ ու ֆուրիաներից հալածված: Ձիու շարժումները, նրա գլխի թեքվածքը, կրծքի ու շրթունքների փրփրի փաթիլները, տրոփյունն ու խորդալը— այս բոլորը միանում, դառնում եյին անզուսպ ու վերջին հուսահատություն՝ փախչել, փախչել, փախչել:





Ըստ յերևույթին, վոչ մի բան չի փոխվել: Առաջվա պես գետի կապույտ հայելու վրա արևն հալցնում է նավերի անդրադարձումը, հոգնած ձիու բեռնասայլը թխթխկալով՝ մի խուրձ թարմ խոտի մեջ կոլոլած մի վիրավոր է տանում, իսկ վերնակում, դիտակետի թաղկացած տեղում արդեն տագնապն է թագավորում:

Անմարդ դաշտում տասնյակ աչքեր թշնամի շարժում են փնտռում: Սփրթնած մի զինվոր հեռախոսի փողն ամբողջ ուժով սեղմել է ականջին: Յեվ նրանք արդեն ինչ-վոր բան տեսնում են— հեռո՛ւ, հորիզոնի վրա, դեպի աջ, դեպի ձախ, մոտիկ: Անըմբռնելի, ամենուր, ցիրուցան յեղած, ամեն տեղից մոտեցող թշնամիների ամբողջ մի ֆանտաստիկ ամպ:

Տասը լարի միջով սպասումը վերնակից դեպի դիրքերն է հոսում: Ինչ-վոր մի տեղ՝ կրակոց, ինչ-վոր մի տեղ՝ անկարգ գնդացիր: Դիտողը կանգնել է բազրիքների մոտ՝ սիրտ չանելով դիտակն աչքերին մոտեցնել: Նրա ձեռքերը դողում են և նման են սարսափահար յեղած թևերի ծայրերի: Ելեկտրական ալիքի պես, սարսափն աչք չկտրող տարածության է հասնում: Յերկու հետաքրքրական ոդանավ գծում են յերկինքը— նրանք ասես մի քանի վերստի վրա դեռ տեսած գիշատիչներ լինեն: Հենց որ այդ իսկ դիտողը, առանց հուզմունքի,

X

Օրեր են լինում, յերբ դեպքերը ծայր աստիճան ա-ճում ու խառնվում են: Նույնիսկ մանր-մունր բաները բազմիմաստ են թվում, արևածագը յերկար ու անհույս օր է գուշակում, յերեկոն կարմրին է տալիս ու յերկարում, ինչպես մի հուշ: Հասկանալի յե դառնում հին մարդկանց սարսափը՝ թռչունների կանչից, քարի ընկնելուց, անկենդան առարկաների ճռճռոցից ու փախոցից առաջացած: Վո՞րտեղից է մարդկանց վրա իջնում, լեռնային մշուշի պես հովիտների վրա հազվադեպ իջնում այդ սարսափը, անհայտի այդ նախազգացումը, վոգու այդ անսպառ տանջանքը:

Վոչ․ ճակատում վոչ կռիվներն են սարսափելի, վոչ վերքերը, վոչ էլ կրակը: Կռվի մեջ չի, վոր ուժեղներն ու յերիտասարդները ծերանում, ճեղքվածքներ են տալիս, կռիվը չի, վոր ջղերը ցամաքեցնում և սրտին ստիպում է դանդաղ ու ընդհատումներով բաբախել:

Այս բանն անողը հոգու դաղտնի հիվանդությունն է, ինչպես կուզեք, անվանեցեք այն— մասսայական ներշնչում, խուճապ, կպչուն, անհիմն վհատություն— ահավասիկ պատերազմի անբուժելի և խորհրդավոր ախտը:

Ամենաառողջ զորամասը կարող է արթնանալ հիվանդացած, վարակված, սարսափի ընդհանուր գլխապտույտով բռնված: Յեվ այն ժամանակ հարկավոր է խելքի ամբողջ մեծությունը, նրա վողջ կենտրոնացած, սառցե կարողությունը, վոր կարելի լինի յետ վանել բացարձակ թշնամուց շատ ավելի վտանգավոր ցնորքներն ու փախչողներին տեղում պահել:

Փորձության որը վերջապես մեզ համար էլ հասավ: Թե ինչպես սկսվեց, ինչո՞ւ և վո՞րտեղից— յերբեք և վոչ վոք չի կարող իմանալ: Տափաստանի միջով մի ձիավոր եր սլանում՝ փոշու ամպերի մեջ կորած:

Ահա և բոլորը: Ձին ու ձիավորը մեր ու թշնամու դիրքերի արանքով սլանում են անմտորեն, աննպատակ ու ֆուրիաներից հալածված: Ձիու շարժումները, նրա գլխի թեքվածքը, կրծքի ու շրթունքների փրփրի փա-



թիլները, տրոփյունն ու խորդալը— այս բոլորը միանում, դառնում եյին անդուսպ ու վերջին հուսահատություն՝ փախչել, փախչել, փախչել:



Ըստ յերևույթին, վոչ մի բան չի փոխվել: Առաջվա պես գետի կապույտ հայելու վրա արևն հալցնում է նավերի անդրադարձումը, հոգնած ձիու բեռնասայլը թխթխկալով՝ մի խիտ թարմ խոտի մեջ կոլոլած մի վիրավոր է տանում, իսկ վերնակում, դիտակետի թաղկացած տեղում արդեն տագնապն է թագավորում:

Անմարդ դաշտում տասնյակ աչքեր թշնամի շարժում են փնտրում: Սփրթնած մի զինվոր հեռախոսի փողն ամբողջ ուժով սեղմել է ականջին: Յեվ նրանք արդեն ինչ-վոր բան տեսնում են— հեռո՜ւ, հորիզոնի վրա, դեպի աջ, դեպի ձախ, մոտիկ: Անըմբռնելի, ամենուր, ցիրուցան յեղած, ամեն տեղից մոտեցող թշնամիների ամբողջ մի ֆանտաստիկ ամպ:

Տասը լարի միջով սպասումը վերնակից դեպի դիրքերն է հոսում: Ինչ-վոր մի տեղ՝ կրակոց, ինչ-վոր մի տեղ՝ անկարգ գնդացիր: Դիտողը կանգնել է բազրիքների մոտ՝ սիրտ չանելով դիտակն աչքերին մոտեցնել: Նրա ձեռքերը դողում են և նման են սարսափահար յեղած թևերի ծայրերի: Ելեկտրական ալիքի պես, սարսափն աչք չկտրող տարածության է հասնում: Յերկու հետաքրքրական օդանավ գծում են յերկինքը— նրանք ասես մի քանի վերստի վրա դեռ տեսած դիտարկիչներ լինեն: Հենց որ այդ իսկ դիտողը, առանց հրամանքի,

իր յոթերուն գիտանոցից դիտում էր գաղտագած և արագընթաց թափառականների հարձակումը:

Հենց այդ վերնակից, առանց վորևէ բանի մասին մտածելու, բացի հեռակայությունից և ուղղանից, նա վարում էր մեր նավերի կատաղի ու կործանիչ կրակը, չնայած, վոր ձիավորի ալիքն արդեն լցնում էր արվարձանը, և անկյուններից վզվզում էյին փողոցային մարտի առաջին անզուսպ դնդակները:

Դիտողի դեմքը կռվի ժամերին պարզ ու հստակ է, ասես քամի լցրած առագաստ՝ հարթ ու կապույտ յերկնքում:

Հինգ որ փոքրիկ կայազորը քնում էր առանց հանվելու, հանդիստ կերպով հավաքում էր իր սպանվածներին և դրոհ դրոհի հետևից յետ մղելով՝ ուղղակի չէր նկատում վոչ մահվան մայր մանող կիսախուփ աչքերը, վոչ էլ նրա հագուստի ճեղքերից դուրս տվող հողանման դալկությունը: Ընկածներից զենքերը վերցնում ու նրանց մասին չէյին խոսում:

Նույնիսկ հեռեվակի համար սարսափելի «շրջանց» բառը, նույնիսկ այս էլ էր մոռացված: Ու թեև Ջյորնի Յարն իսկապես բոլոր կողմերից փաթաթել էյին և միայն մեջքն էր տվել Վոլգային ու Նավատորմին, շրջանցը վոչ վոք չէր խոստովանում: Յեվ հանկարծ այսպիսի մի թուլություն:

Նշանավորի թրթռուն ու կարմիր դրոշիկների կանչով նավից վերնակ յեկավ ավագ հրետավոր ընկ. Կուզմինսկին: Մինչդեռ նա ծովագնացի աչքերով այգիները, ձորերը, հեռավոր գյուղերն էր շոշափում, մյուսները լարված նայում էյին նրա դեմքին, մի դեմք, վոր ճանաչում ու սիրում էյին. սկզբից շրթունքները խիստ սեղմված են, այնուհետև, առաջին լարվածությունից հետո, նա շունչ է քաշում և մաքրում բյուրեղները: Աչքերը վճիտ են, ասես՝ բացակայում են: Ասես՝ օպտիկական թանգարժեք ապակիներ, նրանք այս րոպեյին դրված են մեծ տարածության վրա և չեն կարող վոչ կարդալ, վոչ ժպտալ: Դարձյալ լուռ դիտումն: Հետո՝ այտերը, սև ու նոսր միրուքը, գիշատիչ քիթը— մարտական փայլի վողջ դիմակը տեղից շարժվում է: Ժպ—



տի հետ վոսկե ատամները փայլեցին: Դիտակը մի կողմ է դրված, աչքերն արդեն իրենց տեսքն են ընդունել— նրանք մարդկային են ու խորամանկ:

— Ընկերնե՛ր, այդ հո հեծելազոր չի, կովե՛ր են, կովեր:

Վերնակում մեկեն հանդստացան: Բայց մի ժամից հետո լարվածությունը ավելի՛ ու ավելի աճեց ու դարձավ տանջալի:

Տափաստանն առաջվա պես հանդիստ է, ավազադույն ու դորշ—ծխադույնը մայրամուտին դառնում է լուրթ ու վարդագույն: Յեվ հետզհետե, առանց պայմանավորվելու, դիտողները շուռ տվին վանքի հեռավոր գծագրերից, վորտեղից ամբողջ առավոտը չարիք էյին սպասում և արդեն չէյին կարողանում պոկ գալ տափաստանի ընդարձակ ծովից, վոր հարյուրավոր վերստերով բացված ու լուսավորված է, ուր, բացի դանդաղ ու հսկա արծվաթռիչքներից, վոչ մի բան չի յերևում:

Յեվ հանդիստ, համարյա մտածկոտ, այն մարդու նման, վորին լսելի յե ոտարերկրյա հեռավոր յերաժշտությունը, հրետավորը նորից ափ վերադարձավ և, առանց տատանվելու, բարդ և միանգամայն անսպասելի հեռակայություն նշանակեց իր ծովային հեռահար հրանոթների համար:

Մեն մի հրազարկ հանկարծ անլուր գոռոցով թռավ տափաստանի մեջ և նորից ամեն ինչ լռեց:

Քամին շոյեց փետրախոտերը, վորոնք նրա ձեռքի տակ արծաթի տեսք էյին ստացել ու մինչև գետին կռացել:

Վերնակում, դիրքերում, կայմերի վրա, ուր մարտայիններն են բարձրացել— ամենուրեք լարված սպասում է:

Մի՞թե նրբամիտ մաթեմատիկոս Կուզմինսկին սխալվել է, սխալվել է գիտնականի ու զինվորի իր վողջ ընազդով, և դեպի անհայտություն նետած նրա արկը դաշտում խաղաղ կերպո՞վ պիտի պայթի, առանց վորևէ մեկին կպչելու, ի սարսափ կրակից ու թույնից վոչնչացած դաշտամկների:

իր յերերուն դիտանոցից դիտում եր գաղաղած և արագընթաց թափառականների հարձակումը:

Հենց այդ վերնակից, առանց վորևե բանի մասին մտածելու, բացի հեռակայությունից և ուղղանից, նա վարում եր մեր նավերի կատաղի ու կործանիչ կրակը, չնայած, վոր ձիավորի ալիքն արդեն լցնում եր արվարձանը, և անկյուններից վզվզում եյին փողոցային մարտի առաջին անգուսպ գնդակները:

Դիտողի դեմքը կռվի ժամերին պարզ ու հստակ է, ասես քամի լցրած առագաստ՝ հարթ ու կապույտ յերկնքում:

Հենց որ փոքրիկ կայազորը քնում եր առանց հանվելու, հանգիստ կերպով հավաքում եր իր սպանվածներին և գրոհ գրոհի հետևից յետ մղելով՝ ուղղակի չեր նկատում վոչ մահվան մայր մտնող կիսախուփ աչքերը, վոչ էլ նրա հագուստի ճեղքերից դուրս տվող հողանման դալկությունը: Ընկածներից զենքերը վերցնում ու նրանց մասին չեյին խոսում:

Նույնիսկ հետևակի համար սարսափելի «շրջանց» բառը, նույնիսկ այս էլ եր մոռացված: Ու թեև Չյորնի Յարն իսկապես բոլոր կողմերից փաթաթել եյին և միայն մեջքն եր տվել Վոլգային ու նավատորմին, շրջանցը վոչ վոք չեր խոստովանում: Յեվ հանկարծ այսպիսի մի թուլություն:

Նշանաբարի թրթռուն ու կարմիր դրոշիկների կանչով նավից վերնակ յեկավ ավագ հրետավոր ընկ. Կուզմինսկին: Մինչդեռ նա ծովագնացի աչքերով այգիները, ձորերը, հեռավոր գյուղերն եր շոշափում, մյուսները լարված նայում եյին նրա դեմքին, մի դեմք, վոր ճանաչում ու սիրում եյին. սկզբից շրթունքները խիստ սեղմված են, այնուհետև, առաջին լարվածությունից հետո, նա շունչ է քաշում և մաքրում բյուրեղները: Աչքերը վճիտ են, ասես՝ բացակայում են: Ասես՝ օպտիկական թանգարժեք ապակիներ, նրանք այս րոպեյին դրված են մեծ տարածության վրա և չեն կարող վոչ կարդալ, վոչ ժպտալ: Դարձյալ լուռ դիտումն: Հետո՝ այտերը, սև ու նոսր միրուքը, գիշատիչ քիթը — մարտական ֆամնի վողջ դիմակը տեղից շարժվում է: Ժպտ—



տի հետ վոսկե ատամները փայլեցին: Դիտակը մեկ կողմ է դրված, աչքերն արդեն իրենց տեսքն են ընդունել — նրանք մարդկային են ու խորամանկ:

— Ընկերնե՛ր, այդ հո հեծելազոր չի, կովե՛ր են, կովեր:

Վերնակում մեկեն հանդստացան: Բայց մի ժամից հետո լարվածությունը ավելի՛ ու ավելի աճեց ու դարձավ տանջալի:

Տափաստանն առաջվա պես հանգիստ է, ավազագույն ու գորշ—ծխագույնը մայրամուտին դառնում է լուրթ ու վարդագույն: Յեվ հետզհետե, առանց պայմանավորվելու, դիտողները շուռ տվին վանքի հեռավոր գծագրերից, վորտեղից ամբողջ առավոտը շարիք եյին սպասում և արդեն չեյին կարողանում պոկ գալ տափաստանի ընդարձակ ծովից, վոր հարյուրավոր վերստերով բացված ու լուսավորված է, ուր, բացի դանդաղ ու հսկա արծվաթռիչքներից, վոչ մի բան չի յերևում:

Յեվ հանգիստ, համարյա մտածկոտ, այն մարդու նման, վորին լսելի յե ստորերկրյա հեռավոր յերաժշտությունը, հրետավորը նորից ափ վերադարձավ և, առանց տատանվելու, բարդ և միանգամայն անսպասելի հեռակայություն նշանակեց իր ծովային հեռահար հրանոթների համար:

Մեն մի հրազարկ հանկարծ անլուր զրնգոցով թռավ տափաստանի մեջ և նորից ամեն ինչ լռեց:

Քամին շոյեց փետրախոտերը, վորոնք նրա ձեռքի տակ արծաթի տեսք եյին ստացել ու մինչև գետին կռացել:

Վերնակում, դիրքերում, կայմերի վրա, ուր մարտայիններն են բարձրացել — ամենուրեք լարված սպասում է:

Մի՞թե նրբամիտ մաթեմատիկոս Կուզմինսկին սխալվել է, սխալվել է գիտնականի ու զինվորի իր վողջ բնազդով, և դեպի անհայտություն նետած նրա արկը դաշտում խաղաղ կերպո՞վ պիտի պայթի, առանց վորևե մեկին կպչելու, ի սարսափ կրակից ու թույնից վոչնչացած դաշտամկների:

Յերկու անգամ ել մեծ ընդմիջումներով խփեցին միևնույն ուղղությամբ ու միևնույն արդյունքով: Յեվ հանկարծ հրաման— «չտապ կրակ»:

Նրանք կարծես գետնից դուրս յեկան՝ խիտ, սև շարքերով, կատաղի կրակով ձորից դուրս քշված: Նրանք յերեք հազար կալմիկ, չերկես ու կազակներ եյին, վոր Զյորնի Յարից տասնհինգ վերստ այն կողմը պատրաստվել եյին գիշերվա արշավանքի համար:

Նրանք փախչում եյին՝ ամեն մի քայլափոխում մարդկանց կորուստ տալով, անվերջ գազազած այդ հյուսիսցիների դեմ, վորոնք վեց որ նույն տեղում մնացել ու հրաշքով խուսափել են կոտորածից:

Քարտեզի վոլորքներից, թեթև ակնարկից ծովագնացը մի ամբողջ պատմություն գուշակեց— ամառային հորդ անձրև, վոր հեղեղը քանդել մի ամբողջ փոս ե դարձրել, խաղաղ գիշեր, յերբ ցեխոտ լանջին ամբակը սայթաքելով, մթության մեջ փնչացնելով և թաց ու փրչոտ այծենակաշի տակ լուցկին վառելով՝ հեծելազորն իջավ ձորի հատակը:

Ո՛, ինչպե՜ս քնեցին հաջորդ գիշեր Զյորնի Յարում: Ի՜նչպիսի ուրախությամբ եյին ձիերն ու զենքը մաքրում և արշալույսին ինչքա՜ն հեշտ անցան հարձակման:







## 1919 ԹՎԻ ԱՄԱՌԸ

### I

Սկսվեց հարձակումը:

Ճակատամարտերից հետո նավատորմի ջոկատներն այնքան են մոտեցել, վոր կարող են ռադիոյով անդադար հաղորդակցություն ունենալ իրար հետ:

Նավերը լարված ու գաղտնի կյանք են վարում. չե՞ վոր նրանք դեպի ծով են ճեղքում: Ամենորյա արշավանքները, հենց Ցարիցինի պաշարումը, վոր անողոք ե լինելու, տեղի յեն ունենում ինքնաբերաբար, ինչպես յերազում: Գլխավորը Կասպից ծովի ծովային քարտեզն ե, վորի վրա յերեկոները խորհուրդների լուռ ժամեր են անցնում:

Այս քարտեզը սովորական դետաքարտեզների նման չի— սրա վրա ջրերը յերփներանգված են հոսանքների սահուն գծերով, փարոսների աստղերով ու նախազգուշացումների անթիվ նշաններով: Այս քարտեզն իր խիտ սև ու սպիտակ գույներով շատ խորն ե: Ափերի այդ վոլորապտույտ գծերը, խորամանկ ծանծաղուտները, վերջապես անհատակ խորության հանող և արտաքինից խաղաղ այդ լճերը. քանի՛-քանի անգամ ֆանտազիան շրջում ե սրանց վրայով, առանց թեվավոր վոտքերը թրջելու:



1557—6



Լամպի աղոտ լույսը ընկել է դեմքերին, սեղանին-շախմատի տախտակին-կռացողների վրա։ Նրանք խաղում են հարյուրավոր վերստեր աշխատանքի խորամանկ քարտեզի այն կողմը՝ Բագվում, պորտ-Պետրովսկում և Եմբայում գտնվող խաղընկերների հետ։

Ցերբեմն ոպերատիվ վարչության պետերի աչքերը հեռավոր առաջխաղացումների յերազների մշուշն է պատում, յերբեմն կարմրությունը տեսաբանների քունքերն է տալիս— հազարավոր հնարավորությունների միջից հաղթանակ է փայլում նրանց, հետո նորից սիրտ մաշող կասկածներ՝ յերկու հավասարարժեք տեղաշարժերի առաջ, պարսկական հրապուրիչ ապահով ու դյուրամատչելի կապույտ ծովածոցը մուտք գործելու առաջ։

Արշավանքի սպասելով՝ հին նավաստիները շատ են ծխում և շատ էլ լուռ են, անհայտ բանի վրա ժպտում ու յերկար նամակներ են գրում տուն։

Իսկ յերիտասարդները մի տեսակ առանձին ուրախություն և կյանքի լիություն են ապրում։

Կգան յերկար, անափ ու անկնիկ օրեր, ուստի և առանձնապես հրաշալի յե թվում ամառը, վոր մինչև գոտկատեղը ընթանում է խաղողի այգիներում և մինչև խոպոպները խրված՝ հասունացած հաճարի մեջ։

Ցերբեք գիշերները աստղալույսի այդքան առատություն չեն ունեցել, տափաստանը չոր ու մանր ծաղիկների պատմուճանի մեջ այդքան սպիտակ ու արբեցուցիչ կերպով չի փթթել, յերբեք արյունը չի յերգել այնքան ուրախ ու վաղող ձիուն ներդաշնակ։

Դաշտն ասես ծով լինի, արևն այրում է, չեկ-վոսկեգույն յերիվարը թեթև շնչում ու թեթև վազում է,



քամին նրա աչքերից յետ է տարել բրոնզե բաշը և կաբապի, լայն քայլը շորորում է։

Ո՛, ծով, ո՛ կապույտ ծով։

II

Գիշեր։ Ցուրտ յերկինքը ծածկված է խոշոր ու նոսր աստղերով, և լուսինը շրջապատված է անասելի սպիտակ ու մատաղ ամպերով։ Վոլգան գնում է Կասպուն հանդիման, գիրկը լայն բացած, գնում է հազարավոր վտակներով, ու նրա թևերը կորչում են մառախուղի մեջ։



Ցերբեմն առագաստանավն իր ծիծեռնակաթևերով ձյունանման անցնում է մոտիցդ, չորս կողմից դիտում ծովափը, ուր աչքից չպիտի վրիպի լոտեսների և վոչ մի մակույկ։

Ցերբեմն պտուտակը խճճվում է ձկնորսական ուռկանների մեջ և ջրիմուռի պես յերկար քարշ տալիս հետևից, յեթե լոցմանը չնկատի վորսը պահպանող քնած մակույկը։

Վոչ վոք չի քնում։ Լուսնի լույսը սահում է վաղուց ի վեր ծանոթ դեմքերին։ Սևաբեխ, բարձրահասակ դընդացրորդ, և՛ «դրոշիկլի»[1]) կարճ խուզած ծոծրակ, և՛ ոսկորաբար դալուկ, իսկ այժմ ծովի մասին թախծող լոցմանի լայն դեմք։ Գեղեցկադեմ մի պատանի նավաստի ծալապատիկ նստել է և նույնպես ծով է անըրջում։

Կասպուց միայն մի նեղ շերտ է մեզ պատկանում։ Բայց այս շերտն էլ, վորտեղ Վոլգայի ամբողջ հեղեղը չի կարող խեղդել բուռն հոսանքը— ահա այս շերտն էլ բավական է, վոր ընդմիշտ արբեցնի։

Շատ դանդաղ, հեռվից սկսվում է ցերեկը։

Նավերը ծովի մեջ սկսում են մի քանի վերստի վրա յերևալ և թվում են անհասանելի հեռու կղզիներ։ Սև,

[1]) Դրոշիկ—դրոշակ ապա

ինչպես մի ժայռ, լողացող մարտկոց, սրա կողքին՝ թե-
վավոր խարխաչմուչկների ( шхуна ) ընտանիք, և հո-
րիզոնի վրա՝ մյուսների բարակ ծուխը:

Թունդ նավաճոճից հետո արտասովոր հանդարտու-
թյուն է տիրում կատերի ահագին յերկաթե տախտակա-
մածի վրա:

Թեյը ծխում է թիթեղե գավաթներից, վոր
դանդաղ ու ամաչկոտությամբ դասավորում են նավաս-
տու լուրջ ձեռքերը: Գրեթե յերկու ժամ աննկատելի
յերթ, և գիշերվա վողջ հոգնածությունը հալվում է
համաչափ սահումի և ամեն կողմից ցնցվող ջրի մեջ:
Նիրհը ջնջում է ուրվագծերի վերջին խստությունը, և
թվում է, թե ուղղակի գլխավերևվդ նավակայան է
շարժվում:

Յեվ մարդիկ ջղերով, շոշափելու վողջ ունակու-
թյամբ, ամբողջ եյությամբ զգում ու գիտեն վաղոր-
դյան ծովով յերթ կատարելու նպատակը, գիտեն և յեր-
կու ժամ էլ կարող են փառավոր կերպով հանգստանալ,
լվացած սպիտակեղենը արևի տակ փռել և ծխել ու նիր-
հել: Միայն դեմքերն են հանգիստ կերպով լարված,
ինչպես ժպիտը՝ վատ յերազի մեջ:

Վերջապես՝ և՛ մարտի տագնապ, և՛ թշնամու հե-
ռավոր սիլուետներ, և՛ ականից խորտակված իրենց
«Արագ» շոգենավի կմախք:

Չափազանց թեթև ու տոնական է դառնում: Չկան
գետի խարուսիկ վոլորները, դարաններն ու մշտական
նեղվածությունը: Սպիտակներն ամեն կողմից ու բա-
ցարձակ կերպով իրենց զորախաղերն են կատարում:
Յերկու շարժական սավեր պտտվում են ծանր, դանդա-
ղաշարժ հրանոթի մոտ, վոր նման է մեր լողացող
մարտկոցին, համառ կերպով խուսափելով կրակ տալուց
և դայթակղելով մոտենալու:

Ավելի աջ, հորիզոնի վրա, ևս չորս ծուխ, ընդամե-
նը յոթ սպիտակ՝ չորս կարմրի դեմ: Մենք կանգ ենք
առնում, հրետանային դուելն սկսվում է:

Սպիտակներն ապահով են. առաջին համազարկի
ծուխը նրանց նավախելիցն է դուրս գալիս: Նրանք





չգիտեն, վոր հրետանին վարողը այսօր համեստ, ան-
բարետես մի մարդ է, վորի համար ամբողջ կյանքը նա-
վի վրա յե կենտրոնացված, վորն իր գիտությամբ տա-
գորված յերիտասարդությունը անց է կացրել դառն
աղքատության մեջ և այժմ իր վողջ մեղմությունն
ու ստեղծագործությունը կենտրոնացրել է մարտական
կրակի վրա, վերջինիս հեռահարության ու ճշտության
վրա, հրետանիների ամենանուրբ յերազների ու ա-
ռանձնահատկությունների վրա:

Սպիտակները լավ են պատասխանում: Մեծ անծա-
նոթը, բանից դուրս է գալիս, վեց թնդանոթի յե տիրա-
պետում, և մեր նավի կողքին յերեք հսկա լափին
ծուխ են արձակում: Ջրի յերեսին, մեծ-մեծ ձկների
պես, արկի կտորներ են պսպղում, թպրտում, իսկ հետո
լսվում է պայթող ոդի ուշացած վռնոց ու սուլոց:

Մի շաբաթից հետո, յերբ սառը Սոբոլյեվը մարտ-
կոցի վրա այլևս չկար, մարտկոցի հրամանատարը՝
տասնմեկ թվի հին նավաստի Յելիսեյեվը՝ ընդհուպ մո-
տեցավ «Հաջի-Հաջի»-ին, ինքը յերեսունինն տեղից

ծակծկվեց և սպիտակներից մի հրանոթ ջարդեց: Կոմիսարը, յերկաթը կողքի մեջ, կամրջակից չհեռացավ: Կապիտանին մերձիմահ վիճակում տարան:

Ծովում մառախուղ եր, յերբ գնում եյինք, և առավոտյան միայն նրա միջից յերևաց տաք ու ուրախ ցամաքը:

III

— Յես Ժելիխովսկու կինն եմ:

Ինչ-վոր մի սառցի կտոր արագ-արագ հալչում է, և վերջապես թեթև, հանգստացնող արցունքներ են գալիս:

Կինը: Նրա դեմքի վրա, կարմիր, բորբոքված կոպերի վրա, սպիտակ թաշկինակի տակ կիտված մազերի վրա, նրա ամբողջ եյության վրա դեռևս թարմ են մեծ ընկերոջ դրոշմն ու շունչը, վորն արդեն չկա, վորն սպանվել է ճակատամարտի ժամանակ: Այդ կնոջ լայնացած աչքերի մեջ, վոր լայն ճակատի տակ փոս են ընկել, անբացատրելի նուրբ բյուրեղիկի վրա դեռ չի ջնջվել ամուսնու պատկերը, յերբ առավոտը վաղ, լուսադեմին նա դուրս եր գնում՝ լի թախծոտ նախազգացումներով, չգիտես թե ինչո՞ւ սեղանի վրա առանց ձեռք տալու թողնելով իր նավաստիական խղճուկ նախաճաշը:

Այժմ Ժելիխովսկու կինը համարյա ինքը՝ Ժելիխովսկին է, այդ նրա ձեռքերն են, վոր ջրից պարզած՝ ողնություն են աղերսում, այդ կրակից կուրացած նրա աչքերն են. Նրա ձեռքերի մեջ առած անողնական գլուխն է՝ սիրելի ու ջարդված, հատակն իջնելու պատրաստ գլուխը:



Նրա հետ չխոսե՛ք, նրան ձեռք չտա՛ք: Նա հերոսի



կին է, ՌՍՖՍՀ համար ընկած լավագույններից մեկի կինը: Նրա մեծ վշտին ոգնել չի լինի, նա արիություն ունի ապրելու և չի վախենում սարսափելի դիակը տեսնել վորևէ տեղ՝ հոսանքի հետ, ուղղակի շոգենավի անիվի մոտ դանդաղ լողալիս:

Կինը հանգիստ է և գիտե, վոր այնուամենայնիվ ջուրը նրան ծով կհանի, վորը նա սիրում եր: Նեղ գետից դեպի անհունություն— ահավասիկ այդ կնոջ մեծ դառանցանքը:

Յեվ ուզում ես խնդրել խելառ, անողոք մի պատահականություն— տո՛ւր նրանց, վորոնք ամենից թանգ են, սիրեցյալներին, վե՛հ ու անարատ մահ տուր նրանց, փրկիր նրանց գերությունից, դավաճանությունից, բանտից: Թող բա՛ց կռվում, հարազատների՛ մեջ, գե՛նքը ձեռքին մեռնեն այնպես, ինչպես Ժելիխովսկին մեռավ, ինչպես հարյուրավորներն ու հազարավորներն են ամեն որ մեռնում այս հանրապետության համար:

IV

Նախորյակ: Գիշերը Ցարիցինի գրոհն է, իսկ այսոր դեռ բոլորն աշխուժ են, ուրախ տրամադրված: Թե ի՛նչ է լինելու վաղը, անհայտ է, բայց այսոր լավ է: Շտաբի նեղլիկ ու մաքուր բակի դափնե-վարդերը փթթում են, և հին ձևի վողջ սպիտակ տունը, վորտեղ Ազինն է ապրում, կամքին հակառակ տոգորվել է նրա բուռն ուրախությամբ: Փարթամ ու բարկացկոտ մի այրի, ժպտերես, լայնափոր դավաթներով թեյ է բաժանում. վոսկեզօծ ապակյա ամանեղենի բարձր շարքերը թեթև շարժումից դողում են, սենյակի բուսականության ապակեփայլ տերևները պարզ ու հանդիսավոր կերպով կանաչին են տալիս ձյունափայլ և լայն վարաբանների ֆոնի վրա:

Մաքրություն, յուղանկարներ՝ Ադամ և Յեվայի զույգը դրախտի մեջ, լուսամուտներին վարագույրներ, անկողինների վրա չթե առագաստներ (պոլոգ): Յեվ հարկավոր է, վոր աշնան խաղաղ յերկնքի արծաթա-

փայլ լուսնից վողողված այդ հարկի տակ գրոհի նա-
խորյակին հավաքվեն ամենավճռական գլուխները—
խորշոմած, ասես՝ արդեն թուլացած ոչապարիկ, Մինա
Կալինինի փոքրիկ դեմքը՝ շրջապատված, ասես փշե-
րով, գզգզված մազերով: Յե՛վ Ազինի յերկարաձգա-
ցած գլուխը, վորի վրա պատասխանատվության անտա-
նելի ծանրություն ե ընկած, և՛ տորմհրամինը: Մի ժա-
մից հետո՝ լուսնակ ափի փոքրիկ տնակը, ասխական յե-
ռաձի կառքի արագավազ ձիերը, դեպի գետը տանող ճա-
նապարհն ու վերջին անգամ ձեռք սեղմելը—այս բոլորը
ժամանակը սրբեց տարավ: Հիշողության մեջ ամենից
յերկար հնչում ե յերաժշտական արկղի դյուրաբեկ ձայ-
նը, այո՛, հին տարիների յերաժշտական արկղի, վոր
պինդ փակված հարևան սենյակից մի ամբողջ ժամ
խանգարում եր նիստը:

Այժմ ել, յերբ շուրջը արդեն գիշեր ե, և կործա-
նիչների ղեկի հետևը փրփուրն ե յեռում, այդ արկղը
դեռևս դատարկված սեղանատան սեղանի վրա յե և,
ընդհատվելով՝ թոթովում ե իր յերաժշտական զանգա-
կի բառերը: Թմբուկը ժանգոտել ե, բանալին՝ կորել,
բայց արկղը յերգում ու ծիծաղում ե, և բյուրեղյա կա-
փարիչի տակ զառամած դրավչության ու լալագին սի-
րո ամբողջ մի աշխարհ ե թաքնվում:

Ամբողջ գիշեր գետի վրա պատերազմի ահարկու յե-
րաժշտությունը խելահեղություններ ե անում: Առա-
ջինն սկսում ե «Մարքս»-ը, սրա մոտից դեպի մառա-
խուղն ու մթությունը, ասես տեսիլներ, անցնում են շո-
գենավերը: Մեկը, յերկուսը, նաև հակառակ ափի յեր-
կարությամբ ել, վորտեղ արդեն արկեր են ընկնում:
Անտառի կանաչն աջից նույնպես լիքն ե վոսկե բռնկում-
ներով: Գետի տակից լափինների խիտ սյուներ են բարձ-
րանում: Ծովագնացներն անհանգիստ դիտում են ահա-
գին, հարթ ու սպիտակ, լապտերանման աստղերի ծը-
նունդը: Աստղն այնքան մեծ ու անվեհեր ե, վոր սկզբից
թվում ե, թե ազդանշանի կրակ ե, և առանձին մակույկ
են ուղարկում մարելու:

Առջևից պայթյունները մառախուղի մեջ կարմրին
են տալիս, թվում ե, թե բորբոքված վառարանի դուռ ե



անվերջ բաց ու խուփ անում: Հրամանատարությունն արդեն
վեր ե ածվել այն միահամուռ, արբեցնող վորոտին,
վոր նշանակում ե գրոհի սկիզբը: Ամեն մի նավ վառոդի
քողով պարուրված ե, ինքնուրույն ե շարժվում ու կըռ-
վում, մեն-մենակ՝ այն հակառակորդի դեմ, վորին նա
գիշերն ե գտել ու մարտի կանչել:

Հրվանդանի այն կողմն ե անցնում կործանիչների
մի խումբ. սրա հետևից՝ սև ականահանները, յերես-
քաշները հագած՝ գիշերվա ու աղջամուղջի այդ աշպետա-
ները— մեռյալ բեռան տխուր վորսորդները— իրենց նը-
շանակված վայրերն են գնում:

Լուսաբեմին կրակը դադարում ե: Ժամանակն ե,
վոր բանակը հարձակման անցնի, և տեղեկությունների
ուղարկած նավը, հողե լերկ բարձրունքի վրա, հանդի-
պում ե Ցարիցին գնացող մեր առաջին շղթային:

Դժվար ե այս առթիվ գրել: Պետք ե տեսնել վոտքե-
րը անընդհատ բարձրացնող այդ սև կերպարանք-
ները, վորոնք հեռվից այնպես անսահման թույլ
են, գնում են վաղորոք նշանակված ամենաառաջքաշ-
ված շղթայի մեջ, ինչպիսի վախճան ել վոր հարձակու-
մըն ունենա: Նավաստիները նրանց ևս տեսնում են
նավից: Մեկ ել տեսար՝ մեկը բացականչում ե.— «Ի՞նչ»:
«Վոչինչ, ձեռը փորն ընկավ»: Ավագն ել սովորական
ձայնով չի գոռում— «Լեզունե՛րդ, չա՛նվորդիք»: Շըր-
թունքները թրթռում են. առաջին շղթան, բա ի՞նչ ես
կարծել:

Լույսը բացվելուն պես սավառնակները հարձակում-
ներն սկսեցին: Առավոտվա վեցից մինչև գիշեր անընդ-
հատ ռմբանետում, այն ել՝ հատկապես գետի վրա: Այդ
հարձակումները սովորաբար ճնշիչ կերպով են ազդում:
Բայց անքուն գիշերից հետո, կատաղի կռվից հետո,
յերբ գլուխդ անուշ ու հիվանդագին պտտում ե և բոլո-
րը միմյանց հետ «դու»-յով են խոսում— վո՛չ, սարսա-
փելի չի: Յերկու շշոցը նշանակում ե՝ «հակառակորդի
սավառնակ եմ տեսնում»:

Մեկը մյուսի հետևից նավերը կրկնում են ականջ
ծակող սուլոցն ու խարխափներից դուրս են գալիս:
Սկսվում ե անհաջողությունների մի վիճակախաղ:

Ցուրաքանչյուր նավին միջին թվով չորսից-ութ ռումբ է հասնում: Ցերևում է, թե ռումբերն ինչպես են ընկնում զզվելի վնգստոցների ու խուլ պայթյունների ուղեկցությամբ: Մեկ այս տախտակամածն է արկերի բեկորներից ծակծկվում, մեկ՝ այն: «Բեստրաշնու» քիթը վնասվել է, հրամանատարն ու յերեք հոգի վիրավորվել են, խումբն շտապում է սպեղանի հասցնել վնասված տեղին, ու խիզախորեն պաշտպանվում է հարձակումը նորից վերսկսած ռմբատարից:

Մեկը մյուսի հետևից՝ թեթև կատերներն ու մարտակոցները, առաջին գիվիզիոնի լայնակող նավերն անհետանում են արկերի ու գոլորշու բեկորների ամպերի մեջ և այնտեղից անփորձ դուրս պրծնում— կործանիչները՝ փրփրի սպիտակ բեխերին մատորները գայրագին փընչեցնելով, մարտակոցները դանդաղ ու հանդիստ, դիտակցելով պատսպարվելու անհնար լինելը, մնացածները՝ պաշտպանելով ու յերկինքը ծածկելով պաշտպանողական կրակի սպիտակ քուլաներով:

Ցերեկոյան դեմ բարձր ափին պարզ սևին են տալիս մի քանի մենավոր կերպարանք: Մի ժամից հետո նրանք արդեն հարյուրներ են, և ամբողջ ճանապարհը փախըստականներով է բռնված: Մերոնք նահանջում են:



Բայց լավ են գալիս՝ հրացաններով, հոգնած ձիերի սանձից քաշելով, ուղտերը սովորական հնազանդությամբ և փարթամ ու վոչ յերիտասարդ կանանց նազանքով իրենց հետևից բերում են հրանոթները, սայլերն ու մարդկանց: Գրոհն անհաջող անցավ:

Գրասենյակում բազկաթոռին պառկեցրին մի գթության քրոջ, վոր ափին ընկած է յեղել: Դժվարին բա-



պեններին ոտար մարդկանց ծովի միջից միշտ էլ անըմպասելի և պարզ կերպով այսպիսի մարդիկ են յերևան գալիս: Նրանց միանգամ նայելիս մեծ հանգստություն ես զգում, և նրանք հիշողությանդ մեջ չեն մարում, վորքան էլ ուզում է հանդիպումը կարճ լինի: Նրանք չեն անհետանում, այլ կյանքը պարզապես նրանց մի կողմ է թողնում:

Այս աղջիկը ծիծաղեցնելու աստիճան բարակ ձայն ունի, վերմակի տակից յերևում են նրա պատառոտված կոշիկները: Աչքի մեկը, այտն ու կզակը ծածկված են վիրակապով, կլորիկ քիթը պեպենոտ է ու քերծվածքներով պատած: Նրա մեջ ամենահաստատունն ու ցավալին—կտրատվող, վատ հազն է:

Նա իր գունդն էր գնում Ուկրայինայի ինչ-վոր մի խուլ անկյունից, վերքերից հազիվ ապաքինված: Ցերկար ու տանջալից ճանապարհ: Մեծ ճանապարհի քարավան, գնացքների դժոխք և հարազատներից ընդմիշտ կտրվելու սարսափելի յերկյուղը, նրանց անուններն ու մարդկանց կորցնելու սարսափելի յերկյուղը, վորոնց հետ հեղափոխությունն է նրան կապել:

Վոլգայի ափերը, վորտեղ այս րոպեյիս իր սիրելի կուրանական խարույկներն են ծխում, նրան հասցնողը յեղել է անդրդվելի կամքն ու հոգու պարզ՝ չթի մաքրությունը, վորի առաջ ակամայից տեղի յե տալիս կեղտոտ մարդկային ծովը:



Վկայականի հետ միասին դրված են վաշտից ստացված նամակները, վորոնք սկսվում են անհամար բարևներով և անզոր, վրստնող տառերի սանդուղքներով ինչ-վոր ահագին բարձունքի յեն հասնում: Նա այդ նամակներին կողքանց է նայում, իր միակ՝ գորշ-կապույտ աչքով, վոր մուգ պիսակներ ունի, ինչպես աշնանը բարդ ու դողդոջուն տերևների վրա յեն դուրս գալիս:

Այսպես է նա՝ ընդմիշտ այլանդակված ու սիրալիր:

Սպիտակ գվարդիական բժիշկները, վորոնց մոտ նա ճակատամարտից հետո մի անգամ քաշ գալով հասել էր, առանց իմանալու, թե ո՛վ է այդ աղջիկը, զլացել եյին նրա վերքը կապել, և, վորպես գթություն, նրան վռնդել եյին փողոց՝ գիշերը, անձրևի տակ: Այն ժամանակ աղջիկն ինքն է նստում նրանց պատշգամբին, ուժ չունենալով տեղից շարժվելու, իր յերեսից ինչ-վոր մի սառը բան պոկում, վորը խանգարում եր իր տեսողությունը. իր այտն եր այդ: Բարեբախտաբար՝ լուսադեմին «լազարեթը» փախչում է, և դռան տակ կուչ յեկած եյակին իր հարազատները վերցնում են:

Հեղափոխությունը, վորի յերեսը տեսնելու բախտին դեռ վոչ վոք չի արժանացել, այս թափանցիկ կապույտ աչքը պետք է ունենա, գուցե և վիրակապ, ու գյուղացիական ցցուն շրթունքներին, վարդագույն փրփուր:

Գիշերը կայուտ-կամպանիան զարդարում են աշնան ռնձենու կարմիր փնջերով, սեղանը լույսի մեջ վողողվել է, և զրուցակիցները բարձրակրունկ ճտկավոր կոշիկներից դիրքերի ցեխը կամ մեքենայի յուղը մաքրելով՝ հանդիսատ կերպով խորհրդակցում են վաղվա մասին:

Դիպվածը նրանց դասավորել է այսպես. ձախից՝ Ծորինի արագաշարժ աչքերը, բասը և անհողդողդ կամքը, նրա կողքին՝ իր շտապ-սպան, փափուկ ու մանրամասն մի մարդ, ասես՝ խնամքով ծալած՝ և ուսից կախած պատերազմական քարտեզ, վոր ընդունակ չի վոչ վոքի նեղացնելու. այնուհետև՝ մի ուրիշը—սխալ ու դալուկ, թրի պես կորացած, քիչ չէլ աչքերով և անշնորհք ժպտացող բերանով. մի խոսքով՝ մեկն այն մարդկանցից, վոր կարող են նկարչին պոզա ստեղծել՝ կազակի գլխարկով՝ վրեժի նուրբ ու համբերատար աստված դուրս բերելու: Անաղմուկ քայլվածք, ոծանելիքների թեթև բուրմունք, վոր, աղջկա պես, նա սիրում է, ու և չապկի վրա կարմիր շքանշան. Հենց ինքը՝ Կաժա-



նույն է այդ, վոր դարձել է համարյա մի հեքիաթ, Վոլգայի նավատորմի դեսանտական ջոկատի պետը:



Հոլանդացիք, վոր խմբական նկարներ անելու մեջ կատարելագործության են հասել, սիրում եյին նկարի կենտրոնում, սևազգեստ և սպիտակ ոսլայած ոձիքավոր բոլոր այդ պարոնների մեջ դուրս բերել վորևէ յերիտասարդ ու խելացի բժշկի կենտրոնացած և նուրբ կերպարանք՝ դանակով զինված, սկեպտիկ, աթեիստ, սպիտակ ու բարձր ճակատով, ծիծաղաշարժ ժպիտով, կիսադարձ կանգնած դեպի դիտողը:

Կաշե կուրտկայով և «Իզվեստիա»-յի ծայրը գրպանից դուրս ցցած այս դեմքը մեր ժամանակ կոչվում է «Ռազմահեղափոխական խորհրդի անդամ Միխայլով»:

Սատանի ջարդած ծուռտիկ հայելու մի կտոր էլ ընկ. Տրիֆոնովի մարմնի մեջ է մտել: Աքսորից ու բանտից նա ձեռք է բերել յերկարամյա գերու ծանր ինքնազսպվածություն և փոքր հիվանդագին յերկյուղ՝ չափազանց մեծադղորդ խոսքերից, մտքերից ու բնավորություններից:

Ուժեղ և խելացի մարդու, բոլշևիկի ու հեղափոխության զինվորի մեջ մի քիչ տաղտկալի յե իրեն և ուրիշին խաբելու ցանկությունը— իր մեծ «յեսն» ամենահասարակ, մարդկային ամենաառորյա գծերով դուրս բերելը: Բայց կատաղի տասնյինն թիվը ուրախ կանաչ խոտի պես բուսնում է տրամաբանական բոլոր ծակ ու ծուկից. ժամանակի անգութ քամին տրիֆոնյան սև դեմքից պոկում է գորշ ակնոցները, մի բան, վոր այսոր էլ նրան չի խանգարում նույնպես համառ կերպով պաշտպանել վաղուց արդեն փուլ յեկած հոգեկան ամրոցն ու զգացմունքի ամենասիրելի ընդհատակը:

Հետո. բայց ի՞նչպես պատմել Ազինի մասին: Նախ՝ նա Ոդրրղ վայրենի քաղաքն է՝ Կամայից համարյա կտրված. նա յերկաթգծի յերկարությամբ թագնված ժամապահն է. նա յերրորդ կարգի շոգ և խեղդող մի վագոն է, մոմերի հիվանդ լույսով վողողված.

նա— գլանակների անթափանցելի ծխի մեջ, դիվիզիայի շտաբի անհանգիստ անքնության մեջ, մարտեր, կապ պահպանելու համար, սպիտակների ուղեկալի միջով քսան վերստի վրա յեկել է թշնամուց պաշարված ինչ-վոր զորամասի մի կոմիսար և այժմ ընկել է հատակին ու քնել թմրած, յերանելի քնով: Նա—պատառոտված քարտեզներ է՝ կըպչուն՝ թեյով ու թանաքով վողողված սեղանների վրա. Նա դաշտային հեռախոսի սև լար է՝ կախ գիշերային թաց թփերից, վորոնք պահպանում են ցրտից ու քնից փայտացած և նիրհելուց վախեցող ժամապահները:

Ազինի խթանները պատառոտել են վագոնի մլակոտ թավլիշները, նա իր ձեռքով կոտորել է բռնած գասալիքներին, նա կորցրել ու հետո կռվով վերցրել է Սարապուլը և տասնյակ այլանդակ քաղաքներ. Նա խելակորույս, ճակատ առ ճակատ, հեծելազորային գրոհ է տվել Ցարիցինի վրա, նա տասնյակ գերի սպաներ է սրի անցկացրել և հազարավոր սպիտակ զինվորներ է ազատ արձակել կամ զորակոչի յենթարկել: Ազինը գընում է խորոտ. կատաղի ձիեր նստած. քանի գործը չի վերջացել, կաթիլ բերանը չի առնում, իր կոմիսարներին սարսափելի հայհոյում է, հայհոյում է ռազմահեղափոխական խորհուրդը, ճանկերի մեջ է պահում անհավանական, գետահեններից ու մախնովականներից հավաքած իր զորամասերը, կռվում է ու յերբեք չի փախչում, բարկությունից կնոջ պես լալիս է, յեթե վիրավոր ձեռքի պատճառով ստիպված է լինում հարձակման ամենաթունդ ժամանակ պառկել:

Այդ Ազինն է ինքն իրեն հանդիսավոր ընդունելություն սարքում և, տեսնելով, վոր ափի յերաժշտախումբը դեռ անպատրաստ է, նավը հետ է դարձնում, վոր տաս րոպեյից հետո, իր սքանչելի այծենակաճի մեջ քրտինքի մտած (այս բանը հուլիս ամսին եր)՝ այնուամենայնիվ ընդունի պատիվը, «Ինտերնացիոնալն» ու այն ընկերների ձիգ կանգնած զեկույցները, վորոնք հաղթանակի առթիվ կարողացել են միայն վարտիքների կոճակները կպցնել ու յերեք շաբաթ ջուր չտեսած յե-



րեսները սափրել: Այսպես էլ պետք է. առանց տոնի, առանց յերաժշտության և առանց դիմավորության բանակը հանդիստ չի զգա, չի զգա քսանչորս ժամյա իր տոնախմբությունը, և առավոտը չես կարող նրան տեղից շարժել կռվի նոր շաբաթների համար:

Ազինն ուղղակի, համարյա թե ամեն օր, իր զորամասերը կռվի յե տանում, մոռանալով, վոր ինքը դիվիզիայի պետ է և իրավունք չունի իր կյանքը ռիսկի յենթարկելու:

Բայց քարտեզի վրա Ազինը սառում է, ինչպես ջուրը՝ փոսում, մեռելի պես, ականջ է դնում շորինյան յերկար յուղաժապավեններին, վորոնք ապարատից դուրս են սողում մուրճի թխթխկոցով ու հստակ հրամաններով, պարզ տպագրված փայլով ու այն հանգիստ, դերազանց կոպտությամբ, վորով ծեր Շորինը կարողանում եր խոսել նրանց հետ, ում սիրում եր, ում առաջ եր քշում կամ յետ քաշում յերկաթե գործառնական սանձով:

Մի՞թե կարող ես պատմել այնպիսի մեկի մասին, ինչպես Ազինն եր: Սիրում, անչափ սիրում եր իր զորամասերը, սիրում ու հասկանում եր մոր փեշերի տակից հանած ամեն մի նորակոչիկի՝ անճոռնի գլխարկի տակից ականջները ցցած, մինչև կրունկները դրատի մեջ կոլոլված պատանուն, վորի միակ ուշ ու միտքն այն եր, թե՝ վո՞րտեղ գցի ծանրությամբ լի հրացանը: Այսպիսի մարդկանցով եր կարողանում կռվել, այսպիսի մարդկանցով եր կարողանում հաղթանակներ տանել, սովածություն քաշեց, տիֆի մեջ թավալվեց և ամբողջ Ռուսաստանը ծայրից ծայր անցավ, վոր Կամայից ու Վոլգայից հետո, Ցարիցինից ու Սարատովից հետո անմտաբար ընկնի Պերեկոպի տակ, համարյա վերջինս գրավելու նախօրյակին, անփառունակ ընկնի գերության մեջ, այն էլ սպիտակներից ամբաստանված, վորոնք լուր եյին տարածել, թե նա դավաճանել է Կարմիր բանակին:

Այդ Ազինն եր— անվեհեր զինվորը—այդպես կռվում, դատարկ ձեռքով իր դիվիզիան պայտի պես կո-

բացրեց, այդպիսի հրաշքներ գործեց և զինվորներին ու կոմիսարներին իր վոգով դաստիարակեց, վոր իր մահից հետո էլ 28-րդ դիվիզիան մնաց Ազինյան, և Բաքվի փոշոտ հրապարակները, և՛ վրաց, և՛ պարսից սահմանները հասավ իր հին արշավաքայլով՝ փոշոտ, խայտաբղետ, պատառոտուն, ցնցոտիների մեջ ու գեներալական լամպասներով, կողքանց, պարզ ու յերկաթի պես նստած իր կարճլիկ, չմաքրած ձիերին, վորոնք հավաքել եր Պերմից սկսած մինչև Հաշտարխան:





# Աստրախան—Բագու

## I

Օրերն անցնում են անտանելի արագությամբ, Կյանքը դառնում է առկայծող մի յերազ, վորի մեջ դեմքերի, քաղաքների ու նոր յերկրների մի շփոթ է:

Ահա այն, մեր մոտիկ յերեկը. Հաշտարխանը՝ նոր դարունքից հազիվ տաքացած, մոխրի մանր փոշով, անարգավանդ դաշտերի մանր ու դալուկ խոտերով, լքած հին վանքերով, վորոնց շուրջը յերանությամբ փթթում են դեղձենիներն ու խնձորենիները՝ սուրբ ու սպիտակ յերկնքի տակ, վոր սիրո համար իրենց մոտ է իջնում:

Անհնարին է պատկերացնել ավելի փուխկոտ, լարված, լուռ ու փայլող ծաղկում, սպիտակ-վարդագույն մի ամբողջ հրդեհ՝ Կասպից ափերի միանգամայն մերկ ու անշարժ բլուրների մեջ:

Ահավասիկ բուն քաղաքը— կիսակործան ու այրված, քաղցած ու պատառոտուն, ինչպես Արևելքի մուրացիկներն են քաղցած լինում, մի քաղաք, վոր զուրկ



Ռ 57—7

է լույս ու տաքից, այրելի արևի տակ վախկոտորեն տաքացնում է իր ցրտատար տանիքները, պատերը, վորոնք ամբողջովին ներծծված են ցրտով ու խոնավությամբ, տաքացնում է վաղուց հանգած կույր լուսամուտներն ու անշունչ ծխնելույզները: Բայց վորքա՜ն թանկ է հեղափոխության համար Հաշտարխանի սալահատակի ամեն մի քարը, նրա անհարթ, ցրտատար մատների պես ծռմռված փողոցների ամեն մի վոլորանը: Ի՜նչ անասելի չարչարանք, ի՜նչ զոհեր արժեց Խորհրդային Ռուսաստանի համար Հաշտարխանը— Արեվելքի այդ ժանգոտ ու այլանդակված դուռը:

Վողջ Հաշտարխանն իր քաղցով ու հերոսությամբ տպավորված է հրաժեշտի մի պատկերի մեջ: Գիշերը՝ Նոբելի գործարանում բանվորները, վոր ձմեռն անց եյին կացրել առանց հացի և առանց վառելիքի ու հագուստի, ելեկտրական կուրացուցիչ լույսի տակ ավարտում եյին շտապ մի նորոգում: Դոկի մեջ եյին դրել ամբողջ մի տիտան— անգլիական ականից վնասված՝ յերկաթե մի ապրանքանավ-մարտիկ: Գետի վրա ցուրտ ու խավար, բայց հեռվից փայլում է գործարանների ելեկտրական փարոսը, և անթիվ դիմհարների մեջ, նավի շուռ տված, ծակոտած մարմնի վրա շաչյուն ու թնդյունով իջնում են կռանի բուժիչ հարվածները: Յեվ այսպես ամբողջ գիշերը: Յերկաթը փափկում, կպչում է յերկաթին. կատաղի կարերը փակում են ծակերը, և մատաղ պողպատը նրանց ծածկում է անխորտակելի վողորկությամբ:

Հաշտարխանն ու իր պաշտպանությունն են այդ:

Ահավասիկ և՛ նավակայանը՝ դունատ, կատաղի, և՛ բաց ծովի մեջ խարիսխ գցած նավերի կղզին: Գիշերը հեռվից մի շողք կարմրին է տալիս. Հաշտարխանի աղքատիկ ափերին յեղեգ է վառվում: Նավի տախտակամածի վրա չվող թռչուններ են հանգստանում, խարիսխի պարաններն ու կայմերը ճռճռում են, համաչափ որորվելով՝ ոդի մեջ հավասար աղեղներ են գծում:





II

Հաշտարխանից Պետրովսկ— ծովով: Նավերը նավահետքով անցնում են ականադաշտերը, հետևներն են թողնում հսկիչ նավերը և, վերջապես, խաղալով դըրնում են ազատ, անվերջ, ընդմիշտ բաց խորությունների վրայով: Յեռամյա գետակռվից հետո ծովը գինու պես գլուխդ է մտնում:

Նավաստիները ժամերով չեն հեռանում տախտակամածից, շնչում, նայում են և, իրենք ել չվող թռչունների նման, հիշում են հեռավոր ճամբորդությունների ուղիները, վոր ջրերի վրա սպիտակ փրփրի ժապավեններով են գրված: Հրաշքի պես ջրի տակից լեռներ են դուրս գալիս: Հրաշքի պես մոտիկդ անցնում է Հաշտարխանի համար մազութ տանող առաջին ապրանքանավը, իսկ նավերը դեռ շարունակում են զվարճանալ— մեկ արագացնում, մեկ կանգնեցնում են իրենց ներդաշնակ ընթացքը. թե կայմերն են հարբածի պես պարում, թե՛ մարդիկ չեն կարողանում վոչ ուտել, վոչ քնել:

III

Պետրովսկից Բաքու յերկաթուղին լեռների ստորոտներից է անցնում: Յեվ այդ լեռների յերկարությամբ, ճանապարհի յերկարությամբ անդադար կենդանի հեղեղ է: Բարակ փոշու ամպերի միջով գնում են՝ մարդիկ, ձիեր, սայլեր, հրետավոր: Յեվ ինչքան ել Կովկասի փեշերի լեռները վեհապանծ լինեն, նրանց

է լույս ու տաքից, ապրելի արևի տակ վախկոտորեն թաքցնում է իր ցրտատար տանիքները, պատերը, վորոնք ամբողջովին ներծծված են ցրտով ու խոնավությամբ, թաքցնում է վաղուց հանգած կույր լուսամուտներն ու անշունչ ծխնելույզները: Բայց վորքա՛ն թանկ է հեղափոխության համար Հաշտարխանի սալահատակի ամեն մի քարը, նրա անհարթ, ցրտատար մատների պես ծռմռված փողոցների ամեն մի վոլորանը: Ի՛նչ անասելի չարչարանք, ի՛նչ զոհեր արժեց Խորհրդային Ռուսաստանի համար Հաշտարխանը— Արեվելքի այդ ժանգոտ ու այլանդակված դուռը:

Ողջ Հաշտարխանն իր քաղցով ու հերոսությամբ տպավորված է հրաժեշտի մի պատկերի մեջ: Գիշերը՝ Նոբելի գործարանում բանվորները, վոր ձմեռն անց եյին կացրել առանց հացի և առանց վառելիքի ու հագուստի, ելեկտրական կուրացուցիչ լույսի տակ ավարտում եյին շտապ մի նորոգում: Դոկի մեջ եյին դրել ամբողջ մի տխուր— անգլիական ականից վնասված՝ յերկաթե մի ապրանքանավ-մարտկոց: Գետի վրա ցուրտ ու խավար, բայց հեռվից փայլում է գարբինների ելեկտրական փարոսը, և անթիվ դիմհարների մեջ, նավի շուռ տված, ծակոտած մարմնի վրա շաչյուն ու թնդյունով իջնում են կռանի բուժիչ հարվածները: Յեվ այսպես ամբողջ գիշերը: Յերկաթը փափկում, կպչում է յերկաթին. կատաղի կարերը փակում են ծակերը, և մատաղ պողպատը նրանց ծածկում է անխորտակելի վողորկությամբ:

Հաշտարխանն ու իր պաշտպանությունն են այդ:

Ահավասիկ և՛ նավակայանը՝ գունատ, կատաղի, և՛ բաց ծովի մեջ խարիսխ գցած նավերի կղզին: Գիշերը հեռվից մի շողք կարմրին է տալիս. Հաշտարխանի աղքատիկ ափերին յեղեգ է վառվում: Նավի տախտակամածի վրա չվող թռչուններ են հանգստանում, խարըսխի պարաններն ու կայմերը ճոճում են, համաչափ որորվելով՝ ոդի մեջ հավասար աղեղներ են գծում:





II

Հաշտարխանից Պետրովսկ— ծովով: Նավերը նավահեռքով անցնում են ականադաշտերը, հետևներն են թողնում հսկիչ նավերը և, վերջապես, խաղալով դըլնում են ազատ, անվերջ, ընդմիշտ բաց խորությունների վրայով: Յեռամյա գետակալից հետո ծովը գինու պես գլուխդ է մտնում:

Նավաստիները ժամերով չեն հեռանում տախտակամածից, շնչում, նայում են և, իրենք էլ չվող թռչունների նման, հիշում են հեռավոր ճամբորդությունների ուղիները, վոր ջրերի վրա սպիտակ փրփրի ժապավեններով են գրված: Հրաշքի պես ջրի տակից լեռներ են դուրս գալիս: Հրաշքի պես մոտից անցնում է Հաշտարխանի համար մազութ տանող առաջին ապրանքանավը, իսկ նավերը դեռ շարունակում են զվարճանալ— մեկ արագացնում, մեկ կանգնեցնում են իրենց ներդաշնակ ընթացքը. թե կայմերն են հարբածի պես պարում, թե՛ մարդիկ չեն կարողանում վոչ ուտել, վոչ քնել:

III

Պետրովսկից Բաքու յերկաթգիծը լեռների ստորոտներից է անցնում: Յեվ այդ լեռների յերկարությամբ, ճանապարհի յերկարությամբ անդադար կենդանի հեղեղ է: Բարակ փոշու ամպերի միջով գնում են՝ մարդիկ, ձիեր, սայլեր, հրետավոր: Յեվ ինչքան էլ Կովկասի փեշերի լեռները վեհապանծ լինեն, նրանց

մանուշակագույն սավերն աղոտանում է այս անդադար, հարձակվող գործերի արագ վազքի մեջ:

Յեռման ջրի ցայտերի պես ծուխ արձակելով առաջ է շարժվում հեծելազորը: Զարմանալի նմանեձև, զարմանալի փայլ ունեն այդ ձիավորներն ու մարդիկ, որոնք անցել են Ռուսաստանը՝ Արխանգելսկից մինչև Հաշտարխան, Ուրալից մինչև Կասպի:

Բաքվում հազարավոր ու տասնյակ հազարավոր հանդիսականների առաջ, որ հեղեղել էին մայթերը, հարթ տանիքները, պատշգամբներն ու լուսամուտները, Մայիսի մեկին հանդիսավոր զորատես տրվեց:

Սկզբում տեղական գնդերը տողանցում կատարեցին, որոնք կամավոր կերպով մեր կողմն են անցել և հրաշալի կերպով հագած-կապած, կերած-խմած ու զինված են անգլիացիների տվածով: Այս ազգային գվարդիականների արտաքինից ամեն ինչ յեվրոպական է: Ոտքերը շատ հավասար են գցում, իրենց ուղիղ են պահում, շարքերն այնպես են դասավորված, ասես մկրատով կտրած լինեն: Նույնիսկ ձիերի կլորությունը, կշտությունն ու խոշորությունը մերոնց նման չի— մեր սապատաքիթ, փոքրիկ, փրչոտ ձիերի ընկերը չեն, որ իրենց թեթև, զգուշ ոտնգով հազարավոր վերստեր են կտրել: Փոշի, դղրդյուն, յերաժշտություն— և ծխի պես սլանում են: Բալախանական կապույտ աչքերում փայլում է ու ժպտում:

— Փափախով տաս, նրանց ամբողջ զորքը ցիրուցան կլինի: Մենակ ծրթվրթոցն է ու տեսքը: Ե՛, ո՞րտեղ են մերոնք:

Յեվ մերոնք, իսկապես, գալիս են: Փոշոտ, պատառոտուն, արևից ու հոգնածությունից սևացած, բայց գալիս են ուղիղ և պարզ, առանց հատուկ խառավարժության, իսկական քայլերթով, որով անցել են ողջ հանրապետությունն ու Կովկասի նախալեռնատանը: Չեն շտապում, ոչ ոքի դեմ առանձնապես չեն ձգվում, ոչ ոքի չեն ուզում զարմացնել, իսկ հողը որոտով է պատասխանում ձիերի այս [illegible] ու յերկաթե հեղեղին:



Բալախանու ամեն մի բուրժույ ու բանվոր, անձնատուր լինելով առաձգական, ազատահոս մարդկանց անզսպելի ռիթմին՝ զգում է, որ նրանց ճանապարհն այստեղ՝ Ադրբեջանում, կանգ չի առնի, որ փոշու ու փրփրի մեջ մինչև Բաքու հասած մարդկային ալիքը չի թուլանա, այլ կանցնի հեռու, նրա սահմաններից շատ դենը:

Իր զինով, փայլով ու հարստությունով Բաքուն չկլանեց ոչ բանակը, ոչ էլ նրա ոգին: Զինվորներն ու նավաստիները զբոսնում էին զարդարուն փողոցներում՝ անկախ տեսքով, և նրանց խաղաղ հետաքրքրությունը բուրժուազիային ավելի յեր վախեցնում, քան բոլշևիկյան թալանն ու բռնությունը: Բանակն առաջ անցավ դեպի մոտակա մենշևիկյան ճակատը: Ոչ մի քայքայում, ոչ մի սանձարձակություն: Հարուստ քաղաքը, որ ծախու կնոջ հոգեբանությամբ սպասում էր հաղթողին, չգիտես ինչու, մի կողմ մընաց: Նրան ձեռք չտվին, համարյա չնկատեցին:

Այնինչ Զյորնի գործն ու Բալախանին կենդանություն ստացան: Բաքվի մաքուր փողոցներում նավթի թաղամասից դուրս յեկողներ հաճախակի յեն յերևում: Նրանց գունատ դեմքերն ու յուղոտ ցնցոտիները տարօրինակ կերպով են անդրադառնում վիտրինաների մեջ, որոնց հետև արտասահմանյան ապրանքների սարեր են դիզված: Ճիշտ է՝ իսկական հեղափոխություն դեռ չի յեղել: Մուրացիկության ու հարստության տարբերությունը, որ յերեք տարվա ընթացքում մենք կարողացել ենք մոռացության տալ, այստեղ ամեն մի քայլափոխում գլուխ է հանում: Մուրացիկությունն առաջվա պես դուրս է գալիս բոլոր ծակ ու ճյուղից, նավթի պես հոսում է բոլոր խողովակներով, փողոցներն ամբողջապես ներծծված են նրանով: Բայց Հոկտեմբերն արդեն մտել է քաղաք, ընկել է արվարձանների մութ անկյունները, և մուսավաթականները փայրույթով սպասում են մոտավոր սոցիալական փոթորկին:

Արդեն յերեք գիշեր է, ինչ քաղաքը չի քնում: Հավանական են՝ ապստամբություն, կոտորած, բուր-

մանուշակագույն սավերն աղոտանում է այս անդուլ, աղոտ, հարձակվող զորքերի արագ վազքի մեջ:

Յեռման ջրի ցայտերի պես ծուխ արձակելով առաջ է շարժվում հեծելազորը: Զարմանալի նստելաձև, զարմանալի փայլ ունեն այդ ձիավորներն ու մարդիկ, վորոնք անցել են Ռուսաստանը՝ Արխանգելսկից մինչև Հաշտարխան, Ուրալից մինչև Կասպի:

Բաքվում հազարավոր ու տասնյակ հազարավոր հանդիսականների առաջ, վոր հեղեղել եյին մայթերը, հարթ տանիքները, պատշգամբներն ու լուսամուտները, Մայիսի մեկին հանդիսավոր զորատես տրվեց:

Սկզբում տեղական գնդերը տողանցում կատարեցին, վորոնք կամավոր կերպով մեր կողմն են անցել և հրաշալի կերպով հագած-կապած, կերած-խմած ու զինված են անգլիացիների տվածով: Այս ազգային գվարդիականների արտաքինից ամեն ինչ յեվրոպական է: Վոտքերը շատ հավասար են գցում, իրենց ուղիղ են պահում, շարքերն այնպես են դասավորված, ասես մկրատով կտրած լինեն: Նույնիսկ ձիերի կլորությունը, կշտությունն ու խոշորությունը մերոնց նման չիմեր սապատաքիթ, փոքրիկ, փրչոտ ձիերի ընկերը չեն, վոր իրենց թեթև, զգույշ ոտնքով հազարավոր վերստեր են կտրել: Փոշի, դղրդյուն, յերաժշտություն— և ծխի պես սլանում են: Բալախանական կապույտ աչքերում փայլում է ու ժպտում:

— Փախախով տաս, նրանց ամբողջ զորքը ցիրուցան կլինի: Մենակ ճրթվրթոցն է ու տեսքը: Ե՛, վորտե՞ղ են մերոնք:

Յեվ մերոնք, իսկապես, գալիս են: Փոշոտ, պատառոտուն, արևից ու հոգնածությունից սևացած, բայց գալիս են ուղիղ և պարզ, առանց հատուկ խառավարժության, իսկական քայլերթով, վորով անցել են վողջ հանրապետությունն ու Կովկասի նախալեռնատանը: Չեն շտապում, վոչ վոքի դեմ առանձնապես չեն ձգվում, վոչ վոքի չեն ուզում զարմացնել, իսկ հողը վորոտով է պատասխանում գնդերի այս [illegible] ու յերկաթե հեղեղին:



Բալախանու ամեն մի բուրժույ ու բանվոր, անձնատուր լինելով առաձգական, ազատահոս մարդկանց անզգարունելի ռիթմին՝ զգում է, վոր նրանց ճանապարհն այստեղ՝ Ադրբեջանում, կանգ չի առնի, վոր փոշու ու փրփրի մեջ մինչև Բաքու հասած մարդկային ալիքը չի թուլանա, այլ կանցնի հեռու, նրա սահմաններից շատ դենը:

Իր զինով, փայլով ու հարստությունով Բաքուն չկլանեց վոչ բանակը, վոչ էլ նրա վոգին: Զինվորներն ու նավաստիները զբոսնում եյին զարդարուն փողոցներում՝ անկախ տեսքով, և նրանց խաղաղ հետաքրքրությունը բուրժուազիային ավելի յեր վախեցնում, քան բոլշևիկյան թալանն ու բռնությունը: Բանակն առաջ անցավ դեպի մոտակա մենշևիկյան ճակատը: Վոչ մի քայքայում, վոչ մի սանձարձակություն: Հարուստ քաղաքը, վոր ծախու կնոջ հոգեբանությամբ սպասում եր հաղթողին, չգիտես ինչու, մի կողմ մընաց: Նրան ձեռք չտվին, համարյա չնկատեցին:

Այնինչ Զյորնի զորքն ու Բալախանին կենդանություն ստացան: Բաքվի մաքուր փողոցներում նավթի թաղամասից դուրս յեկողներ հաճախակի յեն յերևում: Նրանց գունատ դեմքերն ու յուղոտ ցնցոտիները տարօրինակ կերպով են անդրադառնում վիտրինաների մեջ, վորոնց հետև արտասահմանյան ապրանքների սարեր են դիզված: Ճիշտ է՝ իսկական հեղափոխություն դեռ չի յեղել: Մուրացկանության ու հարստության տարբերությունը, վոր յերեք տարվա ընթացքում մենք կարողացել ենք մոռացության տալ, այստեղ ամեն մի քայլափոխում գլուխ է հանում: Մուրացկանությունն առաջվա պես դուրս է գալիս բոլոր ծակ ու ճյուղից, նավթի պես հոսում է բոլոր խողովակներով, փողոցներն ամբողջապես ներծծված են նրանով: Բայց Հոկտեմբերն արդեն մտել է քաղաք, ընկել է արվարձանների մութ անկյունները, և մուսավաթականները դայրույթով սպասում են մոտավոր սոցիալական փոթորկին:

Արդեն յերեք գիշեր է, ինչ քաղաքը չի քնում: Համանակյան են՝ ապստամբություն, կոտորած, բուր-





ժուական հեղաշրջում: Երեք օր է, ինչ լուսարձակը՝ ծովից սպիտակ լույսով անխնա վողողում է մոտակա լեռները, սողում է ճեղքերի մեջ ու լանջերի վրայով, լուսավորում է անկենդան ու անշարժում ամբողջ գյուղեր— հայկական կամ թուրքական վերջին կոտորածի հիշատակը: Ո՛, թող սկսվի, թող շո՛ւտ սկսվի մեր պանծալի խաղը: Անարյուն, ասես Փետրվարյան հեղափոխության լռության մեջ լինեն, այնքան խեղդված են շնչում բանվորական թաղամասերը: Նրանք հանդըստություն չեն գտնում, նրանք հուզումներից յերազներ են տեսնում:

Միայն հողն է, վոր չգիտի հուզմունքն ինչ է և թեթևացել ու յերանելի հանգիստ է վայելում: Նավթի փակ ակունքներից վերջապես դեն շպրտեցինք քարերն, ու սև ընդերքից հորդեցին ուռճացած հեղեղները: Հաստ յերակներով— նավթախողովակներով կենդանի հեղուկը հորդում է նավթամբարները, և նավերը չեն կարողանում դուրս տանել միլիոնավոր ու միլլիոնավոր փթերը:





# ԲԱԳՈՒ–ԵՆԶԵԼԻ

Բաքվում նավատորմը նորոգվում ու նավթ էր խմում, լրացնելով իր խղճուկ պաշարները, առհասարակ նագում էր ծոխ նավաշինարաններում ու ընդարձակ արհեստանոցներում, ինչպես վիրավոր, վոր, վերջապես, թիկունքի հարուստ հիվանդանոց է ընկնում:

Կսկծացին նավերի բոլոր հին, հազիվ ապաքինված, խղճուկ ու ժամանակավոր կարկատաններով կպցրած ծակոտիները. կարկատանները պոկեցին ու, վերջապես, ինչպես կարգն է, նորոգեցին, առանց հաշվի առնելու ամեն մի պտուտակ ու մետաղալար, առանց դողալու ամեն մի ավելորդ կաթիլ նավթի վրա:

Հաշտարխանի խղճուկ պայմաններում աշխատանքի սովորած նավատորմը Բաքվի յերկու շաբաթվա հանգստի ընթացքում միանգամայն պատրաստվեց Ենզելու վրա արշավելու:



Յեվ մայիսի տասնյոթի առավոտյան հետաքրքրվող ամբոխը ծովածոցում չգտավ նեղլիկ, դանդաղաշարժ հրաձ–ականակիրներին, վորոնք նախորդ որն այնպես անհոգ ու արքայաբար ձևում եյին ապակե ծովը:

Նրանք գիշերն եյին գնացել, մեկը մյուսի հետևից, ճրագները հանգցրած, վորպեսզի Նարգինի լերկ կղզու հետևն իրար հանդիպելով շարք կազմեն և պարզ շարանով գնան դեպի հարավ:

Յերկու որից հետո հայտնի դարձավ Ենզելու՝ Գարաեից նավահանգստում ինտերնիրովկայի յենթարկված վողջ սպիտակ նավատորմի գերվելը, այդ ծովադուռ (պորտ) գրավող անգլիական զորքի անձնատուր լինելը—մի խոսքով՝ Կասպից ծովի—այսուհետև խորհրդային ազատ լճի կատարյալ ազատագրումը, վորը պաշտպանված է բարեկամ հանրապետությունների ողակով:

Այսպես վերջացավ յերեք տարվա կռիվը, վոր ըսկըսվեց Կազանի ու Սվիաժսկի տակ և ձգվեց հազար վերստ յերկարությամբ— Կամայի դարափուլներից ու Բուայլ յեղեվնիներից մինչև մերձկասպյան կեղեչ ողուտները, Վոլգայի խուլ անտառներից մինչև Հաշտարխանի ծանծաղ, անհանգիստ, փոփոխակի նավակայանը, վորտեղ նավերը ծովի անսահման տարածության միջից դեպի մայր ջուրը դուրս են գալիս ծանծաղուտներով ու ականադաշտերով՝ ծովի արհեստական ջրանցքով: Մի տարի հետո Վոլգա–Կամայի նավատորմը դարձավ Կասպից ուժեղ նավատորմ և այժմ, Ենզելին գրավելով, իր ռազմական վերջին անելիքն ավարտելով՝ զորացրել է իր մարտական հին նավերը: Թնդանոթներն սկսեցին չքանալ յերկաթակուռ տախտակամածներից. արկեր ու զենքեր պահող նկուղներն իրենց ընդերքը բաց են արել նավթի ու բրնձի համար: Հին մարտիկները մեկը մյուսի հետևից դեն գցին ծանր զրահն ու վերադարձան Հաշտարխան՝ արդեն վոչ թե վորպես ահեղ «դրեդնոուտներ», այլ ուժեղ աշխնավերով, ծույլ, մինչև կոկորդը բարձած ապրանքանավի տաղջնորդ՝ հզոր բուքսիրներ, ջուրն

խվեր՝ դեպի Ռուսաստանի գործարանային ծարաված սիրտը սողացող դանդաղ քարավաններ: Բայց նախքան ծովային հին ծանրատարները— որ այնքան տարի ծանր թնդանոթներն իրենց խաղաղ տախտակամածների վրա յեն կրել ու սրտի արատ ստացել, շնորհիվ իրենց ամուր մեքենաների ցնցող հրետանային կրակի— նախքան այդ ծանրատարները կթողնեյին Բալթիկ նավակայանը, իրենց մուգ-կապույտ գույնով այնքան տարօրինակ կերպով աչքի ընկնելով ծովածոցի շոգ հեփոթի մեջ, նրանք մի մեծ ու կարևոր գործ եւ արին— զրահակուռ բռունցքով խփեցին Արևելքի պինդ փակված դռան:

Ենզելիում անգլիական գաղութային քաղաքականությունը բախվեց բանվորական պետության ռեալ ուժերին ու պարտություն կրեց: Քսան թվի մայիսի տասնութին Մեծ Բրիտանիայի կանոնավոր զորքերն առաջին անգամ բաց ծովում կոտորվեցին ու նահանջեցին, հապճեպ փրկվելով խայտառակ գերությունից: Ոչ այլ տեղ, քան ամեն տեսակի գիշատիչ պայմանագրերով ճզմված, Անգլիայի բռնի դաշնակցությունից քարուքանդ յեղած, թուլացած Պարսկաստանում: Յեվ, Կասպից ծովի ափերը թողնելով՝ անգլիացիք չըկարողացան բնակչության չարախինդ աչքերից թաքցնել իրենց խայտառակ պարտության ծիծաղելի ու խղճուկ կողմերը: Հեռանալով՝ նրանք գումակի պոչից տանում եյին ինչ-որ վաններ (մայորի մասնավոր սեփականություն), դաշնամուրներ և առհասարակ կուլտուրական պիտույքներ: Ամբողջ քաղաքն իր սովորական գործը թողած՝ նստել եր նավահանգստում, նարնջի կեղևներ եր նետում ջուրն ու հետևում, թե ի՛նչպես յերեկվա գոռոզ պարոններն այսօր, ռուսական հրամանատարության առաջին իսկ պահանջով, խոնարհ կերպով կառեր նստեցին ու գնացին «Կարլ Լիբկնեխտ» նավը, որ մի կերպ պատվավոր կապիտուլյացիա աղերսեն:

Արևոտ ուրախ շուկայում բոլորին հայտնի յե, թե ռուսական ականակիրն անգլիացիներին վո՛րքան ճոճեց, թե ի՛նչպես բանակցությունների ժամանակ նր-



րանք կռանում եյին նավից դուրս, և այն հարցին, թե՝ «ի՛նչպես կարող են ծովային հիվանդությամբ տառապել աշխարհի ամենաուժեղ ծովային պետության սպաները», ստիպված եյին լինում պատասխանել անորոշ ու անպատեհ հնչյուններով ու մարմնի շարժումով:

Ա՛հ, արևելքցիք աչքաբաց են և յերեկվա իրենց տիրոջ մեջ մի անգամ վախի ու թուլության գծեր նկատելիս, նրանց այլևս մոռանալ չեն կարող:

Բուրավետ գլանակների ծխի մեջ արդեն անվերջ ծաղրանքներ ու առակներ են տեղի ունենում: Դեռ յերեկ միայն ծակը ճխտած պարսիկներն այսոր ուղիղ նայում են տարբերկրացիների յերեսին ու ճանապարհ չեն տալիս նրանց:

Մի հանգամանք ես ապշեցրեց չքավոր պարսիկներին ու հետո նրանց ամուր կերպով կապեց Խորհրդային Ռուսաստանի հետ. ռուսներն Ենզելին գրավելով՝ խնայեցին բրիտանական օկուպացիոն ջոկատի շարքերում կռվող հնդիկներին ու տյուրկմեններին «սորին ցեղի» մարդկանց: Վոչ մի յեվրոպական պարլամենտ, վոչ մի արտաքին գործոց նախարարություն նոտայով իրեն չեր պղծի յերկրի յերեսից մի քանի հարյուր «գունավոր» չքացնելու առթիվ: Պետք եր տեսնել այդ զինվորների սոսկումը, յերբ նրանք սարսափելի բոլշևիկների ձեռքն ընկան: Բարձրահասակ, վայելուչ, ատամների բրոնզե կեցվածքով, անտառի վոգուց սարսափահար՝ նրանք յերեխայի պես լաց եյին լինում, հույս չունենալով խնայելու վրա: Յեվ հանկարծ վոչ միայն ազատագրում ու կյանք, այլև յեղբայրական այնպիսի վերաբերմունք, վոր յերբեք չեր տեսել անգլիացիներից արհամարհված Հնդկաստանը:

Այդ մարդկանցից շատերը, վոր մասնակցել եյին նավաստիների դեսանտների դեմ վարած ավինամարտին, հեռացան վորպես մեր բարեկամները և մինչև իրենց ուրբինյա հայրենիքը տանելու յին նոր, աշխարհը հեղափոխող յեղբայրական համերաշխության արձագանքը:







Ընգելու խորամանկ ու գեր, քծնելու աստիճան քաղաքավարի նահանգապետը, մեր մեղքից, ստեղծված դրությունը շատ ճիշտ ու արագ գնահատեց—պաշտոնական այց կատարեց, նավաճոճին ազնվաբար տուրք տվեց ու ճարտար թարգմանի միջոցով իմացավ—թանկագին հյուրերը շուտո՞վ են արդյոք թողնելու Պարսից ջրերը, թե՞ մտադիր են յերկիրը բախտավորեցնել ավելի յերկար մնալով:

Թարգմանը վողջունում է, նահանգապետը կիտրոնը լպստում, և թուլության նոպան պահելով, նույնպես վողջունում է մեղրածոր ժպիտով, վողջունում է դրոշակակիր ականկրի փայլուն հրամանատար Սենիցինը, վոր յերեք տարի անդադար կերպով վարել է իր ականակիրները, վողջունում է Զիբիկովը՝ իր յուղակոլոլ կիտելի մեջ, հին ծովագայլի իր հանդիստ դեմքով, վոր յերբեք և վոչ մի բանով չի զարմանում, վողջունում են տախտակամածի հրետանիների փողաբերաններն ու կայմերի ծիծաղաշարժ ծայրերը:

— Վոչ,— պատասխանում է հրամանատարը,— վոչ, մի՛ անհանգստացեք, պարո՛ն նահանգապետ: Այն հանդիսավոր ընդունելությունը, վոր պարսից ժողո-



վուրդը ցույց տվեց ծովագնացներին, ինձ թույլ չի տալիս շատ հեռանալու մասին մտածել: Մենք չենք ուզում ձեզ վիրավորած լինել և մնում ենք:

Նորից վողջույններ. քաղաքավարի նահանգապետը նավաճոճից կանաչ գույն ստացած, հյուրասիրության զգացումներով լեցուն՝ հեռանում է նավից:

Ափին արդեն ականջ են դնում առաջին հռետորին— պարսկին: Ուշադրությունն ամբոխին բրոնզի պես ձուլում է: Կենդանի ու անբռնազբոսիկ կեցվածքներով՝ առաջին շարքերն ուղղակի պառկել են փափուկ փոշու մեջ՝ խոսողի վոտքերի մոտ: Մուրացիկների բարակ, վտիտ, բրոնզե ձեռքեր, ցնցոտիների տակից յերևացող չոր ուսեր, հնադարյան՝ ուլունքանախշ փաթթաններով կապած փոշոտ մազեր, նույնիսկ հրագույն, հինայած փառավոր մորուքներ (ինչպես վաղուց իվեր մեռած թագավորներինը)— այս բոլորը քարացած անշարժության, անխախտելի լարվածության մեջ են: Նրանք վոչ մի բառ բաց չեյին թողնում, վոչ մի բառ չեն մոռանա և իրենց կիսամանկական լեզվի հստակ պարզությամբ այդ բառերը կհաղորդեն մի հարևանից մյուսին, մի ցածրաբուս, գանդուր այգուց մյուսին, մի ջրելատեղից մյուսին, անապատի ապրա—



վանդների ու տաք ավազի վրայով մինչև Հնդկաստանի ու Միջագետքի սահմանները: Առանց ռադիոյի ու հեռագրի այստեղ արդեն գիտեն Աֆղանստանի սահմանագլխներին տեղի ունեցող խորհրդավոր ու բազմամարդ ժողովների մասին, վոր չկարողացավ խանգարել գաղութային Անգլիայի վողջ իշխանությունը. ապարդյուն ու արյունահեղ պատերազմի մասին, վոր Մեծ Բրիտանիան ստիպված է վարել Յեգիպտոսում, և տարկի նեղ հագուստի մեջ Իրանն սկսում է կամաց-կամաց կենդանանալ. շնչում ու մտածում է:

Ամենադժվարն արված է. խորտակվել է Արևելքի այն մեծ հավատքը, թե Անգլիան անպարտելի յե, միանգամ ընդմիշտ կորել է նրա վոսկու, զենքի և անլուր գոռոզության հմայքը:

II

Մեզ այնքան մոտիկ է այս սքանչելի յերկիրը, այս արտասովոր հարազատ ժողովուրդը:

Հարկավոր է ծովից մի քիչ հեռանալ, ձախ կողմը թողնել նրա միանգամայն եմալե փայլը, վոր կապույտ ճակատով փռված է յերկու ավազոտ բլրի արանքում՝ փիրուզագորգի վրա, հարկավոր է հետևը թողնել Ենզելու ծովածոցը՝ ճապոնական ձևի իր ծածկված մակույկներով ու թունավոր ջրով և խոնավությամբ ու փարթամությամբ լի դաշտերում արդեն շնչում, արդեն յերևում է Պարսկաստանը: Ի՞նչ խոր ու խորհրդավոր բուրմունք մաստագետինները բոլորող նռնենիների



առաջին թփուտներից, առաջին ակացիներից: Ավտոն ճանապարհից խրտնեցնում է սև ու սպիտակավոր, փայլուն, աննման յեզներին, վորոնց յերկու փոքրիկ, հոնքաձև, բայց յեղջյուրների մեջտեղը կինամոնագույն նշան կա: Պղտոր աղբյուրը, վոր կարծես ջրիկ ցեխ լինի, մեկ մոտենում է խճուղուն, մեկ՝ հեռանում,

վորպեսզի վողողի պտղատու ծառերի չոր ու ալաճ արմատները, յեղեգնե ցանկապատը և, վերջապես, սնունդ հասցնի բրնձի արտերին:

Ցածրավայրում զմրուխտի շախմատներով փռված են այդ արտերը: Ցերեկները նրանք մի տեսակ վտանգավոր են թվում: Կանգնած ճահիճներում մարում է արևադարձային հրաբորբոք վերջալույսը, և յերկու տակ յեղած, մածուցիկ ցեխի մեջ խրված, մինչև ծնկները ճահիճների մեջ աշխատող կանանց դեմքերը դուրս են գալիս այլանդակված, ասես անհայտ ցեղի գազանի տավերներ: Ցերեկն ուրիշ բան է:

Ջուրը համարյա իջնում է, և միջից, ասես ապակուց, դուրս են ցցվում բրնձի կանաչ ասեղները: Այնքան անզոր են պարզիկ աղջիկների նիհար վոտքերը, վորոնք զգուշությամբ մի ցողունից մյուսն են փոխվում. չեն համարձակվում ճահճից բարձրացնել իրենց մշուշապատ աչքերն ու կեղտի մեջ կորած ձեռքերը: Իսկ արևն այրում է հավասար, թեթևակի, ասես ժպտալով. հպարտ կատարները հազիվ սոսափում են, խրմում և անուշ բուրմունք արձակում, ու նրանց խառնվում է հազիվ նշմարելի, ջուրը պատող մալարիայի դողը:

Ճանապարհի վոլորաններում պարսկական առաջին պատահած շենքեր՝ կավից, յեղեգնե ամենաբարձր տանիքներով՝ ուղային դիմհարների վրա:

Ճանապարհի կողքերով իրար հետևից գյուղացիք տուն են վերադառնում:

Ճկուն ձողերի վրա դրած՝ խոտի խրձեր են տանում, ուսերին՝ կավե յերկարավուն սափորներ, թիակներ, ցանցեր ու թաց առագաստներ: Դեմքերն ասես վոսկուց լինեն՝ մուգ աչքերով, վորոնց յերկարությամբ կախ են ընկած ճակատից ու քունքերից ծայրերը հավասարաչափ կտրած, մինչև ուսերը համաչափ իջնող մազերը: Խորթ լեզու, թուխ մաշկ, մեզ անսովոր՝ թեթև ու փոսաբորբիկ քայլվածք, բայց դեմքերը ծանոթ: Առանց կանգ առնելու՝ գունազեղ, անմարմին լինելու աստիճան չոր, յերկար ավտոյի յետևից են նայում:



Գյուղացիներ են դրանք, իրենց սիրելի բրնձին նման— հավիտյան աշխատանքից, աղքատությունից ու խիստ շոգից համաչափ դարձած, ճկուն, ինչես բրոնզե ցողուններ, և վոչ մի բանով նման չեն զոլավոր ծածկույթի հովին՝ կեսօրին իր ապրանքների վրա նիրհող պարզիկ խանութպանի գիրուկ, սև ու սպիտակ տիպին:

Նորից ուղտեր, նրանց մի ամբողջ կարավան՝ փոքրիկ գլխով, ծնոտի տակ կախ՝ գույնզգույն ծոպերով, յերկար ու մերկ պարանոցով և գորշ թամբերով: Ջորիներ, վոր ամուր, յերկաթե բաժակի նմանություն ունեցող սմբակներով համաչափ, հակերի ծանրության տակ հազիվ են վոտք փոխում: Վարդանման այգիներ, բրնձի ճահիճներ, վարդահոտ քամի, մաքսատուն և, վերջապես, Ռաշտը:

III

Սոսու ճյուղերը հասել են լուսամուտը: Լսվում է թռչունների ճվողյունը՝ վառ ու խայտաբղետ, վոր մեզ մոտ՝ հյուսիսում յերբեք չի լինում: Հազարավոր վարդեր արեգակից ծխում ու վառվում են քաղցր, բուրավետ կրակով: Նախկին նահանգապետի տունը նրանց մեջ խեղդվում է: Դեպի հյուսիս բացված լուսամուտները ներս են ծծում առավոտյան հովը:

Պատերին միքանի գորգ, դրասեղան, վեռնիսած բաց գույնի փայտե հատակ— ահավասիկ Ռաշտի վոխարքայի առանձնասենյակը՝ անդորր, ընդարձակ:

Թարգմանը վերջին վողջույններն է հայտնում, և հանկարծ, արնագույն գորգի ֆոնի վրա դեպի իրար դարձած վողբերգական դեմքերի մեջ, բոլորովին մանկական, ծիծաղաշարժ և ինքնագոհ մի բան— քաղաքի վրա յե բարձրացել Կասպից նավատորմի հին բարեկամուհին՝ փքված, հետաքրքիր ու սրատես «ոդային յերշիկը»: Նրա ուռած՝ թիթեռանման մարմինը փետրաթափ թևերով քանի՛ քանի անգամ է բարձրացել Վոլգայի ափերի՛ վրա, Ցարիցինի ու Հաշտարխանի՛ վրա, դիտե՛լ ու նախազգուշացրել է, նավերի

1557—8

կրակին ուղղությո՛ւն է տվել: Նավաստիներն ընտելացել են յերշիկին—նրա տակ յերկյուղ չկա, նա ամեն բան տեսնում է:

Յեվ ահա սիրելի հրեշը բարձրացել է Պարսկաստանի եմալանման յերկինքը և իր բարձունքից հրջահայում է արևադարձային թփուտները, զմրուխտե դաշտերն ու կաթից սպիտակ ճանապարհները: Շուկան խուճապի յե մատնվել. յերեխաներն ու ջորիները փախչում են. տերը կորցրած ուղտերը սարսափահար խմբով բռնում են կամուրջը: Յերշիկը չչմեցնող տպավորություն է թողնում. հեղափոխության վողջ հեղինակությունը, յերկրից պողպատե բարակ լարով բռնած՝ ամպերի տակ ման է գալիս, քամու հետ վայելուչ կերպով օրորվում է, վողջ յերկինքն իրենով է ըզբաղեցնում, և ինձ թվում է, թե նրա ուրախ ռեխը սիրելի դաշնակիցներին լեզու յե ցույց տալիս:

Լուսամուտից յերևվում է նաև հուզված շուկան, վորտեղ չալմաների ու գայլի մորթուց կարած գըլխարկների մեջ փողփողում են նավաստիների ժապավենները, և մեջտեղը՝ սպիտակ աերոյով յերկինքը:

Արևելքում ամենաթունդ հավատքը մեքենային հավատալն է, Արևմուտքի տեխնիկական գերազանցության հավատն է, այդ հավատքով անգլիացիք հարյուրավոր տարիներ խեղդել են իրենց գաղութները: Յեվ ահա, վերջապես, տեխնիկան Կասպից ծովի ափերից ամոթահար փախչող անգլիացիների դեմ է դարձված:

Հեռախոսը զռռում է: Բաչուից տասնհինգ վերստ այն կողմը հրաձգություն է բռնված:

Մեքենան յետ է թռչում Ենզելի:

Շլագբաումի (ուղեփակ գերան) մոտից սևորակ, կիսամերկ, կապույտ ու ընդարձակ օձիքով վերջին կամավոր նավաստին մեր հետևից ուրախ, համարձակ ու անվանելի գոռում է.

— Տո՛ւր դա Թավրիզը:

Կես ճանապարհին յերկու ձիավոր դեմ ու դեմ սըլանում են— անգլիացիներից մեր կողմը փախած հընդիկներ են:



Անսահման ուրախացած դեմքեր և, ինչպես ժպիտի մեջ իրենց ատամները, փայլող վողջույն,— «հանուն խորհրդային իշխանության»— ու կատաղած ձիերով՝ մոտներիցս թռան:

Ամենահպարտ հաճարենուն, վորտեղ ճանապարհը ճահիճներից թեքվում է դեպի պուրակներն ու բըլուրները, վրձինը սոսնձով դույլի մեջ թաթախելով՝ մի մարդ, քրտինքը վրայից թափվելով, գլխարկը ծոծրակին թեքած՝ քսում է հարյուր տարեկան այդ տխտանի կեղևին— և խորհրդային առաջին պլակատն արևադարձային թավուտի մեջ բաց է անում իր կարմիր քաթանը:

Լռություն, թանձր, բուրավետ օդ, միջատների ճռճռոց, անմարդ ճանապարհ, վորտեղից կուշտ յեզ ու գոմեշն են ծուլորեն սողում և անտառների ավազի բնի վրա համաշխարհային հեղափոխության այս հրավառնշանը:

## ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ԳԻՐՔԸ

Վեց տարի յե մեզ բաժանում գրքիս հեղինակի մահից: Լարիսա Ռեյսների ընկերներից մեկը, մտաբերելով ծանր կորուստը, ճիշտ ե նկատել, վոր նա պետք ե մեռներ մի վորևե բարիկադի վրա, փողոցային կռվի մեջ, տափաստանում, թշնամու հետ ճակատ առ ճակատ իրար հանդիպելիս, հրացանը կամ նագանը ձեռքին: Նրա վողջ կյանքը տոգորված ե յեղել անդադրում ձգտումների վոգով: Վոչ թե անիրագործելի մտաքերը, այլ նոր, աշխարհում չեղած կյանքի իսկական պայքարն եր համակում այս արտասովոր մարդու կյանքը:

Յեթե մտաբերելու լինենք Լարիսա Ռեյսների մանկությունն ու պատանեկությունը, Գերմանիան, Ֆրանսիան ու ցարիզմի որերի Պետերբուրգը, վորտեղ նա անց ե կացրել իր ժամանակը, ապա շատ բան պետք ե ասվի, վոր ամեն մեկը կարողանա պարզ պատկերացնել, թե ի՛նչպես ե մեծացել ու կազմակերպվել այն մարդը, վորին մենք ճանաչում և հիշում ենք հենց հիմա, պրոլետարիատի պայքարի հերոսական որերին, թե նա ի՛նչպես ե այդպիսի մարդ դարձել, վորպիսին մենք ճանաչում ենք նրան: Առանձին, մի մեծ թեմա յե այս:

Կարճ ասենք: Լարիսան մանուկ հասակում դպրոցում սովորում եր: Դպրոցից սկսեց վոտանավորներ ու հոդվածներ գրել: Նրանցից միքանիսին այն ժամանակ տպվեցին մեծ ժուրնալներում: Թե վոտանավորները և թե հոդվածները դեռ կատարյալ չեյին, բայց այդ արդեն պայքարի փորձ եր շրջապատի թագավորող կամայականության ու հասարակական քարացածության դեմ: Այնուհետև, դպրոցն ավարտելով ու համալսա-



րան մտնելով՝ Լարիսա Ռեյսները հոր— հայտնի պրոֆեսորի— հետ մի ժուրնալ եր հրատարակում: Այստեղ արդեն վոչ միայն վոտանավորներ եյին, այլ իսկական պայքար: Հենց այն ժամանակ նա աշխատակցում եր Մաքսիմ Գորկու խմբագրած «Լետոպիս» առաջավոր ժուրնալին:

Հենց մանկությունից նրան չեյին հրապուրում շրջապատի պայմանները— հարուստ գրական սալոնները, ընտրովի գրականական միջավայրի պայմանները, վոր լիքն եյին այն ժամանակ զանազան տեսակ դղրդացող անուններով: Նա փախչում եր այդ միջավայրից, վորովհետև չեր կարողանում, չեր ուզում այդպես ապրել: Լարիսայի այն ժամանակվա հոգեկան դեմքն ել շատ այնպիսի բաներ ուներ, վոր նրան արյունակից դարձրին ռուս հեղափոխականների հերոսական խմբին:

— Աքսո՛ր կգնամ, կրա՛կը կընկնեմ, կախաղա՛ն կբարձրանամ, Սի՛բիր կգնամ, տաժանակիր աշխատանքի՛ կգնամ,— ասում եր նա,— ի՛նչ ուզեք կանեմ, բայց չե՛մ կարող, չե՛մ ուզում այսպես ապրել:

Հեռու հեռավորության մեջ տեսնելով վաղվա գեղեցկությունը, վորի հետ կապում եր պայքարի յերկար ու տանջալից ճանապարհը՝ նա չեր կարող մի քաղքենուհու պես մնալ հին աշխարհի անփորձ բնակչուհի: Կամայականության, խստությունների ու բռնությունների պայմաններում ընթացող խաղաղ կյանքի դեմ կուտակված՝ ներքին բուռն բողոքը նրան պայքարի հանեց՝ պրոլետարիատի շարքերում: Փետրվարյան հեղափոխության դրոշներն ու ժապավեններն իրենց փայլով չկարողացան մթագնել նրա գիտակցությունը: Չխաբվեց, զգաց կարմիր ծածկարանի կեղծիքը, տեսավ բուրժուազիայի ու բոլոր նրա հետ յեղողների հրեշավոր կեղտոտ գործերը, սարսափելի կեղծավորությունը, ստությունն ու դավաճանությունը և մտավ նոր կյանքի, սոցիալիզմի համար իսկական պայքարողների շարքերը— կոմունիստական կուսակցության մեջ:

1917–1920 թվականները, անցյալի մնացորդների,

այդ անցյալը յետ դառնալու կատաղի ձգտումների դեմ պրոլետարիատի անողոք պայքարի տարիներ էյին: Մեծագույն ջանքերի, տանջանքների, արյան գնով պրոլետարիատը պահպանեց իր նվաճումները: Այդ մեծ, ըստ էյության՝ հերոսական պայքարում Լարիսան առաջիններից մեկն էր: Պայքարի ամենադժվարին օրերին այդ ամբողջապես գեղեցիկ, մեծ ընդունակություններով օժտված կինը զարմացնում էր դեպքերի հանդեպ մազաչափ անգամ ցրվածություն, յերկյուղի վորևէ նշույլ չունենալու կարողությամբ և իր մտքի արիությամբ: Նա վո՞րտեղ ասես չի յեղել: Վո՞րտեղ ասես նրան այդ օրերին չեն տեսել: Հրացանը ձեռքին՝ կռիվների մեջ, ռազմանավերի վրա, ձի նստած, վտանգավոր՝ անհավանական թվացող օպերացիաների մեջ, մեծացավ, ամրապնդեց ու կոփվեց իսկական, այնպիսի, ինչպիսիք մեզ հարկավոր են, մարտիկը:

«Հիմիկվա պես տեսնում եմ այդ Սվիաժսկը,— գրում էր նա,— վորտեղ «բանի» վոչ մի գինվոր չկար: Այն ամենը, ինչ այնտեղ ապրում ու պաշտպանվում էր, ամբողջապես կապված էր կամավոր կարգապահության, պայքարին կամավոր մասնակցելու ամուր կապերով, մի պայքար, վոր սկզբում բոլորովին անհուսալի յեր թվում»:

Հա՛: Սվիաժսկի օրերին պրոլետարական հանրապետության գլխին կախված էր խորտակման սարսափելի սպառնալիքը: Պրոլետարիատին թշնամի բոլոր ուժերը համախմբվել էյին այս բանի համար— ցարիզմի հին գեներալներն ու բոլոր յերկրների իմպերիալիստները, վախկոտ քաղքենի ինտելիգենտներն ու վաճառականները, և՛ կուլակները, և՛ խանութպանները: Հանրապետությունը նրանց դեմ հանեց իր մարտիկներին՝ համարձակ ու անդառնալի խնդիր տալով նրանց— ինչ գնով էլ ուզում է լինի, հաղթել: Զընկանք— հաղթեցինք: Ապրում ենք: Ամրապնդում ենք: Ի սարսափ թշնամիների՝ սոցիալիզմ ենք կառուցում: Այն էլ ի՛նչպես ենք կառուցում: Յեվ ահա արդեն տասնհինգ տարի յե, ինչ ռեակցիայի սև ագռավները կռկռում են՝ նախագուշակելով մեր անկումը, մեր մահը, մեր խորտակումը: Թո՛ղ կռկռան: Նրանց բանի անո՞ւնն ինչ է: Աշխարհը տեղից շարժվել ու գնացել է կյանքի հին, փտած կարգի դեմ: Պրոլետարական շարժումը կասեցնելն անհնարին է, ինչքան էլ նրա թշնամիներն այդ ուզենան և ինչ էլ ուզում է նրանք անեն այդ առթիվ:



«... Յերբեք չի ապրել ու կյանքից բան չի հասկացել նա, ով գիշերը չի պառկել վոջլոտ, պատառոտուն ու չի մտածել թե աշխարհը չքնաղ է, այն էլ ի՛նչպես չքնաղ: Թե ահա հինը կործանվել է, կյանքը դատարկ ձեռքով կռվում է հանուն իր անժխտելի արդարության, հանուն իր հարության լուսափայլ համատեղության, հանուն ինչ-վոր անտեսանելի մեծի ու լավի, քան աստղազարդ յերկնքի ահա այս մի կտորը, վոր յերևվում է ապակին կոտրած թավշե լուսամուտից— հանուն վողջ մարդկության ապագայի»: Այսպես էր գրում Լարիսա Ռեյսները 1919 թվին: Այժմ թերթելով նրա փոքրիկ գրքույկը՝ հիշողությանդ մեջ ակամայից վերականգնում ես վոչ միայն գլխավորը— հերոսական օրերի բոլոր մանր-մունր բաները, բոլոր մանրամասնությունները: Այս փոքրաթիվ ու սակավավախոս տողերի զորությունն այն է, վոր ընդգրկում են այն օրերի գլխավոր բանը, վոր այս տողերի մեջ է պրոլետարական հեղափոխության անմոռանալի շրջանի վողջ համ ու հոտը: Պետք էր պրոլետարիատի ու իր կուսակցության վճռականությունը, հաստատակամությունն ու համարձակությունը, վոր կարճ ժամանակում կարելի լիներ համարյա դատարկ ձեռքով քշել ամենաուժեղ թշնամուն: Պետք էր խիստ համոզված լինել, վոր ուղիղ ճշմարիտ է, վոր վոչ մի բանի մտիկ չանելով— վոչ վոջլին, վոչ սաստիկ տիֆին, քաղցին ու ցրտին, վոչ մահվան յուրաքանչյուր րոպեյի սպառնալիքին— այդ համոզմունքը մեջդ պահես, մինչև վերջ, մինչև հաղթանակի հասնես:

Այժմ հաղթանակը կատարված փաստ է: Այն օրերը, վորոնց մասին Լարիսան գրում է, պատմություն են: Յեվ թող ձեզ, ընթերցո՛ղ, այս գրքից շատ

բան տարորինակ, անհավանական չթվա— ինչպես այդպես է յեղել: Թող տարորինակ չթվան նաև վերոհիշյալ բառերը. այն ժամանակ այդ— դատարկ ձեռքով ուժեղ ու անողոք թշնամու դեմ կռվելը— կյանքի մեջ ամենագլխավորն եր, գլխավորը, վորով ձեռք եր բերվում անձնական ու հասարակական կատարյալ միաձուլությունը, ուստի և կարելի չեր ասել, թե «յերբեք չի ապրել ու բան չի իմանում նա» ով իրեն հեռու յեր պահում, վորի համար մեր հաղթանակի խնդիրը կյանքի ու մահու խնդիր չեր:

Կարիք չկա, կարծում ենք, տողերովս չեշտել այն, վոր այն ամենը, ինչ այս գրքում պատմվում է, ամբողջապես մտնում է հեղինակի մարտական կյանքի կենսագրության մեջ: Լարիսա Ռեյսները— պատմության մեջ առաջին ծովագնաց կինը— անբաժան է այն կռիվներից, վորոնք աղմկում ու վորոտում եյին Վոլգայի ու Կամայի վրա, Կասպից ծովի վրա— ամեն տեղ, ուր հեղափոխություն եր կատարվում:

Կարելի յեր շատ բան հիշել, պատմել այդ արտասովոր կնոջ կյանքից: Պետք եր պատմել, վորովհետև այդ կյանքը լավագույն որինակ է մեր պատանեկության համար, վորի առաջ են՝ պայքարի յերկար ու դժվարին ճանապարհը, բազմաթիվ ճակատամարտեր, գերագույն հերոսության բազում աշխատանք: Կպատմեն, կգրեն: Այստեղ տեղը չի:

Մահը վրա հասավ Լարիսա Ռեյսներին վոչ կռվի պայմաններում, վոչ ռազմական աշխատանքների մեջ. Նա մեռավ 1926 թվի փետրվարի 9-ին, այսինքն՝ յերբ ավարտել եյինք պատերազմից քայքայված տնտեսության վերականգնումն ու պայքարի եյինք պատրաստվում սոցիալիզմի կառուցման չտեսնված տեմպերի համար:

Քաղաքացիական կռվի վերջը Լարիսա Ռեյսների, ինչպես և բոլոր իր ժամանակակիցների համար սկիզբ յեղավ նոր, ուրիշ տիպի աշխատանքի: Գրական շահերը, այն ժամանակ միանգամայն ձևավորված գրողի աշխատանքը համենայն դեպս նրան հետ չպահեցին հասարակական բուռն, արագորեն փոխվող կյանքից: Հե-



ղափոխական պայքարի տեսության ու պրակտիկայի ուսումնասիրություն, մասնակցություն քայքայված տնտեսությունը վերականգնող պրոլետարիատի և իր կուսակցության հսկայական ու ծանր աշխատանքին— ահա թե ինչով է համակված յեղել նրա կյանքը, յերբ հրացանը փոխարինված է յեղել գրչի: Ուրալի և Դոնբասի, Ավղանստանի ու Համբուրգի մասին և մի քանի այլ գրքերը, վոր նա այդ ժամանակ գրել է, անցկացրած որերի հուշեր են: Նրանց մեջ չկա մի բառ, վոր բուն կյանքի մեջ ուրվագծված չլինի: Նա յեղել է Ավղանստանում ու Համբուրգում, իր աչքով տեսել է վոտքի յելնող Արևելքը և գերմանական բանվորներին ոգնել է հեղափոխության բարիկադների վրա: Նա յեղել է Դոնբասի հանքերում, Ուրալի գործարաններում, ապրել է բանվորական բնակարաններում, զորանոցներում, խոսել է բանվորների հետ, դիտել է նրանց կյանքը, թափանցել է կյանքի բոլոր մանրունքների մեջ, ապրել է այդ կյանքը:

Մեծ, հոգեմաշ, համառ աշխատանքով են ստեղծվել այդ գրքերը: Նրանց մեջ մտքի առնական ուժ կա: Յերիտասարդ, կրակոտ հեղափոխականն զգացվում է նրանց ամեն մի տողում:

Լարիսան կարողանում եր ինչպես կարգն է սիրել ու հարգել իր ընկերներին ու բարեկամներին և ատել թշնամիներին: Իր տրամաբանության ուժով, ճիշտ տեսնելու և ընդհանրացնելու ընդունակությամբ նա շատերին եր գերազանցում: Նրա հարստափայլ, լարված ու անողոք վոճը, վորի մասին շատերն եյին խոսում, վորպես դժվարին, պատկերներով ծանրաբեռնված, նրա մտքի հայելին եր: Այդ այն չի, ինչ գրողներից շատերն ունեն, այդ հարստությունից է: Լարիսան յերբեք մտքով չի անցկացրել, թե շուտ շուտ, մի կերպ գրքեր, ոչերկներ գրի ու տպագրի: Նա լուրջ է աշխատել:

— Ընթերցողը,— ասում եր նա,— գրքի համար շատ քիչ ժամանակ ունի: Մանավանդ բանվորությունը, յերիտասարդությունը: Յեվ նա սպասում է մի լավ գրքի, վորը կարողանա մի բան ավելացնել իր կյանքին:

— Այնպես պետք է աշխատել, որ ավելորդ բառեր չլինեն, որ գրքերը հարուստ լինեն:

«Յես կարծում եմ,— գրում էր ինձ Ուրալում, ի պատասխան «Ածուխ, յերկաթ և կենդանի մարդիկ» նրա գիրքը հրատարակելու առաջարկին,— թե կարիք չկա Ուրալում գիրք հրատարակելու»: Լարիսան բոլորովին այն չի, ինչպես ինձ թվում էր: «Ուրալում յես այլ կերպ էյի մտածում, այժմ՝ այլ կերպ: Ավելի լավ է չհրատարակել: Պետք է լավ գրել: Յեվ յես այդ կանեմ»:

Մինչդեռ այս նրա լավագույն գրքերից մեկն է:

---

Վեց տարի յե մեզ բաժանում «Ֆրոնտը» գրքի հեղինակի մահից: Ժամանակը կարծես քիչ չի, մանավանդ մեր ժամանակ, յերբ որ է լինում, որ տարի յե քաշում: Իսկ գիրքն ապրում է: Նա չի «անցել», չի մոռացվել, ինչպես շատ գրքեր, իրեր ու օրեր: Շատ մոտ ժամանակներս մի պիոներ ինձ ցույց տվեց «Համբուրգը բարիկադների վրա»մի հին հրատարակություն և ասաց. «Ամբողջ գյուղը կարդացել է», առաջարկեց հրատարակել, հավաստիացնելով, որ «կարդալու յեն, այն էլ ինչպե՛ս»: Նա ինձ քիչ չզարմացրեց— թվում էր, թե գերմանացի յերեխաների նկարներ պարունակող՝ ըշտապ հրատարակված այդ գիրքը վաղուց չկա: Զարմանալի յեր թվում և այն, որ գիրքը մանկական շրջան է մտել «հոգատար պառավների» մոտով— յերիտասարդ և պառավ, միևնույն է— որոնք այնքան հաճախ չեն հասկանում դարաշրջանը, կուրացնում են հոտառությունը, կյանքը հոտոտելու, նրա ուրվագծերն ու գույները տարբերելու ընդունակությունը և այս պատճառով էլ աշխատում են մատաղ սերնդին իրենց հին հետաքրքրությունն ու ճաշակը պատվաստել:

Լարիսա Ռեյսների գրքերը սիրված են բոլորից, ով չի կորցրել զարմանալու ընդունակությունը— յերիտասարդության իսկական, ճշմարիտ նշանը: Հետաքրքրությունը դեպի գրքերն ու վերջիններիս հեղի-



նակը բարձրանում է: Լարիսա Ռեյսները բոլորովին այլ գրող է: Այս է նրա նկատմամբ ունեցած հետաքրքրության բարձրանալու պատճառը: Մարդիկ կան, որոնց համար գրելը հիմնական արհեստ է: Այսպես է մեր գրողների ու բանաստեղծների մեծ մասը: Մեր հիշողության մեջ վերականգնելով Լարիսա Ռեյսների կյանքի փուլերը՝ կարելի յե ասել, որ նրա գրական գործունեյությունը չի կարելի բաժանել հեղափոխական այն մեծ աշխատանքից, որով լիքն էր նրա կյանքը: Գրական աշխատանքը մյուս, գլխավոր, մեծ աշխատանքի մի մասն էր, և այս մասն ամբողջությամբ յենթարկված է յեղել գլխավորին:

«Ֆրոնտը» գիրքը փայլուն, անմոռանալի մի աշխատություն է՝ դիկտատուրայի համար բանվոր դասակարգի մղած պայքարի հերոսական օրերի մասին: Գրքի մեջ դասակարգային անողոք պայքարի մի ամբողջ շրջան է բացվում: Գրքի մեջ պատմված են՝ Վոլգայի ռազմական տորմիղի աշխատանքի մասին, անվեհեր նավերի, անվեհեր ծովագնացների, Վոլգայի ու Կամայի ափերին կռվող բազմահազար Կարմիր բանակի մասին: Բայց ըստ էության այս գիրքը քաղաքացիական կռիվների ամբողջ շրջանի լավագույն վավերագիրն է: Ինչպես Վոլգայի ու Կասպու վրա էյին կռվում, այնպես էլ կռվում էյին և՛ Ուկրայինայում, և՛ Սիբիրում, և՛ Ուրալում, և՛ Միջին Ասիայի դեղին ավազների մեջ, և՛ հերոսական քաղաք Պետրոգրադում, որ, ըստ արժանիքի, այժմ Լենինի անունով է կոչվում:

Հեղինակը մեր հետ չի: Կյանքը խորտակվել է բուռն ծաղկման շրջանում: Ցավելն անհնար է: Ինչքա՛ն ցանկալի յե, որ այս սքանչելի, առնական, անվեհեր դեմքը ճանաչեն, հիշեն ու պահեն հետագա սերունդների համար: Ինչքա՛ն ցանկալի յե, որ ապրեն այդ գրքերը, որոնք կարող են յերիտասարդներին ոգնել՝ առաջիկա կռիվներում լինել այնպես, ինչպես հարկ է լինել:

Գ. ԵՅԽԼԵՐ

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1 Կազան . . . 3
2 Կազան-Սարապուլ . . . 36
3 Մարկին . . . 50
4 Հաշտարխան . . . 61
5 1919 թվի ամառը . . . 81
6 Հաշտարխան-Բագու . . . 97
7 Բագու-Ենզելի . . . 104
8 Նյութեր—Հեղինակն ու գիրքը 116

ՀՀ Ազգային գրադարան
NL0322014

Գինը 1 Ռ.
Կազմը 50 Կ.

ЛАРИСА РЕЙСНЕР

ФРОНТ

ГИЗ ССРА ЭРИВАНЬ

196

891.71
Р-32